

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2-3(60-61)  
2013 թ.

Գլխավոր խմբագիր՝  
ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան  
Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան -

ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

ի.գ.թ., պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.թ.

Վիգեն Քոչարյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն

*Խմբագրության հասցեն՝*

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 55-77-92

*Խմբագրությունը կարող է  
հրապարակել նյութեր՝ համամիտ  
չլինելով հեղինակների  
տեսակետներին:*

*10 համակարգչային էջից ավելի  
չպատվիրված նյութերը չեն  
ընդունվում:*

e-mail: a\_petrosyan@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

18.08.2013

Հանձնված է տպագրության

24.09.2013

СОЮЗ ЮРИСТОВ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО  
И  
ПРАВО**

Номер 2-3 (60-61)  
2013 г.

---

---

Главный редактор:  
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА

**Редакционный совет**

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Давид Мелконян -

к.ю.н., ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Гагик Амбарцумян

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - к.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

***Адрес редакции:***

*РА, 0025 Ереван,*

*ул. Алека Манукяна 1,*

*юридический факультет ЕГУ.*

*Тел.: 55-77-92*

*e-mail: a\_petrosyan@ysu.am*

8 усл. печ. л.

Тираж: 500

Сдано в набор 18.08.2013

Подписано к печати 24.09.2013

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ**

**ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Սանվել Դիլբանդյան**

ԱՆՉԱՓԱՅԱՍ ԿԱՍԿԱԾՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՍԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 10

**Գևորգ Բաղդասարյան**

ՏԱՐԲԵՐԱԿԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ..... 16

**Նելի Աղաբաբյան**

ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ..... 28

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**Սերգեյ Առաքելյան, Գոռ Ալոյան**

ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂԴԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՀԱՏԿԱՆԻՇ..... 37

**Վազգեն Շահնազարյան**

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ..... 45

**Արա Ֆիդանյան**

ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՉԱՆՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ..... 50

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Տիգրան Մարկոսյան**

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԸ.....59

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**Евгения Никогосян**

ПРОБЛЕМА КЛАССИФИКАЦИИ ЛИЧНЫХ НЕИМУЩЕСТВЕННЫХ (МОРАЛЬНЫХ) ПРАВ АВТОРА.....68

**Արսեն Թավադյան**

ՀԱՎԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՉԵՎԵՐԸ.....76

**Gholam Reza Shirazi**

MARRIAGE, AN EXCEPTIONAL CONTRACT.....87

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**Տիգրան Գրիգորյան**

ՀՀ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՊԵՆՀԱԳԵՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇԻՆ .....94

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**Սլավիկ Պողոսյան**

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՆՉԵՌՆԱԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....102

**Արև Ղազարյան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԶԲԱԴՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՉԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ..... 111

**Անահիտ Եսայան**

ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ .....122

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է**

Հայաստանի Հանրապետության իրավաբանների միության վարչությունը շնորհավորում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետին՝ հիմնադրման 80-ամյակի կապակցությամբ: Նախորդ ութ տասնամյակների ընթացքում անխախտ և անխաթար է եղել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի տեղը և դերը հանրապետությունում ժամանակակից և հիմնարար գիտելիքներով զինված իրավաբանների պատրաստման գործում, ովքեր մեծ հաջողությամբ կերտում և զարգացնում են Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը:

Սիրելի ֆակուլտետ, առավել քան համոզված ենք, որ հետայսու քո գործունեությունը լինելու է նախորդ տասնամյակների արգասաբեր գործունեության արժանի շարունակությունը՝ ի շահ հայոց նորանկախ պետականության և ի զարգացումն հայրենյաց իրավագիտության:

**ԳՅ իրավաբանների միության վարչություն  
«Պետություն և իրավունք» հանդեսի խմբագրություն**

## ՇՆՈՐՀԱՄՐԱՇԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

Глубокоуважаемый Гагик Сергеевич

Институт законодательства и сравнительного правоведения при Правительстве Российской Федерации горячо поздравляет руководство, профессорско-преподавательский состав, студентов, аспирантов и весь коллектив юридического факультета Ереванского Государственного Университета со славным 80-летним юбилеем. Деятельность юридического факультета Ереванского Государственного Университета хорошо известна в научной и образовательной сферах в России. Преподаватели факультета всегда обеспечивали высокий уровень образования, глубину и фундаментальность знаний выпускников, что позволяет считать юридический факультет ЕрГУ одним из весущих высших учебных заведений на постсоветском пространстве. Надеемся на укрепление делового и творческого сотрудничества наших научных коллективов и искренне желаем дальнейшей плодотворной работы, успехов, доброго здоровья Вам, коллективу юридического факультета и всего университета.

***Директор института законодательства и  
сравнительного правоведения при Правительстве РФ,  
Вице-президент РАН Т.Я. Хабриева***

Глубокоуважаемый Гагик Сергеевич, дорогие друзья

Примите сердечные поздравления по случаю знаминательной даты 80-летия со дня основания юридического факультета Ереванского Государственного Университета. Выпускники факультета с достоинством и честью носят высокое звание прооведа, успешно трудятся во всех сферах жизни общества. Их отличает высокая гражданская позиция, профессионализм присущие армянскому народу благородство, трудолюбие и скромность.

В этот праздничный день от всей души желаю, дорогие друзья, счастья, здоровья, мудрости и оптимизма, и пусть Вам сопутствует удача во всех Ваших делах.

***Председатель Арбитражного Суда  
города Москвы С.Ю. Чуча***

## **ՇՆՈՐՀՎՈՐՎԱՔՆԵՐ**

### ***Մեծարգո պարոն Ղազինյան***

Ջերմորեն շնորհավորում եմ ԵՊՀ կրթական ու գիտական ավանդույթներով հարուստ իրավագիտության ֆակուլտետի 80-ամյա հրաշալի հոբելյանը:

Մայր բուհի իրավագիտության ֆակուլտետը հանդիսանում է մասնագետների այն դարբնոցը, որի շրջանավարտները երկար տարիներ իրենց լուսման են բերել Հայաստանի իրավական համակարգի կայացման և զարգացման գործում: Նրանց մասնագիտական գիտելիքների, շրջահայացության, բանիմացության շնորհիվ երկրում պետական և հասարակական կյանքը առաջ է ընթացել, մարդն ու քաղաքացին իրենց պաշտպանված են զգացել:

Իրավագետների իրական ձեռքբերումները, ներդրումները շոշափելի դարձան Հայաստանի անկախացումից հետո, երբ անհրաժեշտ էր ստեղծել ազատ պետության օրենսդրությունը, հիմք դնել նոր պետա-իրավական համակարգի, մշակել սահմանադրական նորմեր և սկզբունքներ:

Բարձր գնահատելով Երևանի պետական համալսարանի գիտակրթական այս կառույցի դերը ուսուցման արդիական մոտեցումների ձևավորման և կիրառման, իրավագիտության զարգացման, իրավագիտակցության բարձրացման, ինչպես նաև իրավական մշակույթի ձևավորման գործում, կրկին շնորհավորում եմ բոլոր շրջանավարտներին, դասախոսներին, ուսանողներին, ֆակուլտետի անձնակազմին և հատկապես Ձեզ պարոն Ղազինյան՝ հոբելյանի առթիվ մաղթում հետագա հաջողություններ և ձեռքբերումներ:

Իմ պետական և քաղաքական գործունեության համար պարտական եմ նաև իրավագիտության ֆակուլտետին, իմ ֆակուլտետին, որտեղ ստացած գիտելիքներս փորձում եմ հնարավորինս արդյունավետ կիրառել պետական շինարարության տարբեր ոլորտներում: Հատկապես ուզում եմ ընդգծել վերջին 10-ամյակում ֆակուլտետի աճող հեղինակության, պատրաստած մասնագետների որակի մասին, որտեղ իր անուրանալի տեղն ունի ֆակուլտետի դեկան, կազմակերպված և լրջամիտ, խոհուն և աշխատասեր գիտնական, մանկավարժ Գագիկ Ղազինյանը:

**Հարգանքով**  
**ԴԴ սփյուռքի նախարար ԴՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՔՅԱՆ**



**ԳԵՎՈՐԳ ԵՆՈՔԻ ԶՈՎՍԵՓՅԱՆ**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը, Հայաստանի Հանրապետության իրավաբանների միության վարչությունն ի սրտե շնորհավորում են Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դոցենտ Գևորգ Ենոքի Զովսեփյանին ծննդյան 75-ամյակի կապակցությամբ և Մեծն մանկավարժին ու Մեծն մարդուն մաղթում քաջառողջություն, ստեղծագործական բեղմնավոր գործունեության անվերջ շարունակականություն և նորանոր հաջողություններ երիտասարդ սերնդի կրթության բարդ և պատասախանատու գործում:

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ  
ՀՀ իրավաբանների միության վարչություն**

---

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ****ԱԻԴԱ ԲԱԳՐԱՏԻ ԻՍԿՈՅԱՆ**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը, Հայաստանի Հանրապետության իրավաբանների միության վարչությունն ի սրտե շնորհավորում են Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսոր Աիդա Բագրատի Իսկոյանին ծննդյան հոբելյանի կապակցությամբ և վաստակաշատ գիտնականին ու հմուտ մանկավարժին մաղթում ամուր առողջություն, անսպառ ստեղծագործակա-նություն և նորանոր հաջողություններ իրավագետների ժամանակակից սերնդի պատրաստման բարձր ու պատասխանատու գործում:

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ  
ՀՀ իրավաբանների միության վարչություն**

---



## ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ



**Ե**ՊՀ իրավագիտության ֆակուլտետի 80-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում իրավագիտության ֆակուլտետի, ՀՀ իրավաբանների միության, Իրավաբանների միջազգային միության, Գերմանիայի Գերագույն ֆեդերալ դատարանի կողմից 2013թ. սեպտեմբերի 23-24-ը Դիլիջան քաղաքում անցկացվեց միջազգային գիտաժողով «Իրավական կարգավորման արդի հիմնախնդիրները. ազգային և միջազգային տեսանկյուններ» խորագրով:

Գիտաժողովին մասնակցում էին և զեկուցումներով հանդես եկան այնպիսի ճանաչված գիտնականներ, ինչպիսիք էին՝ ՌԴ Նախագահի իրավական հարցերով խորհրդական, ՌԴ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Վ.Ֆ. Յակովլևը, ՌԴ գիտությունների ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս Տ. Յա. Խաբրիևան, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանը, Գերմանիայի Գերագույն դաշնային դատարանի նախագահի տեղակալ, պրոֆեսոր Վ. Շլիկը, Տյունենի համալսարանի նախագահ, պրոֆեսոր Գ.Ն. Չերո-

տարևովը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնի վարիչներ՝ դոց., Վ.Դ. Ավետիսյանը, դոց. Վ.Վ. Քոչարյանը, դոցենտներ՝ Հ.Հ. Դուկասյանը, Վ.Ն. Այվազյանը և այլ մասնագետներ Ռուսատանից, Գերմանիայից, Վրաստանից և Հայաստանից:

Ձեկուցումները նվիրված էին իրավունքի տարբեր ոլորտներին, մասնավորապես՝ քաղաքացիական օրենսդրության կատարելագործմանը, արբիտրաժային հարաբերությունների ազգային իրավական համակարգերի և իրավասությունների մրցակցությանը, սահմանադրական իրավունքի հիմնախնդիրներին, անչափահասների հանցավորության հիմնախնդիրներին, ՀՀ-ում քրեական դատավարության օրենսդրության բարեփոխման գործընթացին և այլ արդիական թեմաներին:

Գիտաժողովի ավարտից հետո մասնակիցներին ընդունեց ՀՀ Նախագահ Ս.Ա. Սարգսյանը:

Գիտաժողովի մասնակիցները ներկա գտնվեցին նաև ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 80-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՆՉԱՓԱՅԱՍ ԿԱՍԿԱԾՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ  
ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԴՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Սամվել ԴԻԼԲԱՆԴՅԱՆ**

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, իրավ. գիտությունների դոկտոր*

Քրեական դատավարության օրենսդրությունը դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման համարավորություն նախատեսում է բոլոր, այդ թվում՝ անչափահաս կասկածյալների և մեղադրյալների նկատմամբ, որոնք փորձում են խոչընդոտել գործի քննությունը: Օրենսդիրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեադատավարական հարկադրանքի միջոցների կիրառմամբ էապես սահմանափակվում են անձի իրավունքներն ու ազատությունները, անչափահաս անձանց համար նախատեսում է պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ: Անչափահաս անձանց նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառումը նպատակ է հետապնդում ոչ միայն ապահովելու քրեական գործի պատշաճ քննությունը, այլև անչափահասի նկատմամբ դաստիարակչական ազդեցություն իրականացնելու:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսվում են հատուկ կանոններ, որոնք վերաբերում են անչափահաս կասկածյալների և մեղադրյալների նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառմանը: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդված 10), Պեկինյան կանոններում (հոդված 13), Ազատությունից

զրկված անաչափահաս անձանց վերաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպության կանոններում (հոդված 85) հատուկ ուշադրություն է հատկացվում անչափահաս անձանց ձերբակալմանը և կալանավորմանը, քանի որ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառմամբ էապես սահմանափակվում են նրանց իրավունքներն ու ազատությունները: Միջազգային նշված փաստաթղթերում տեղ գտած գաղափարախոսությունն այն է, որ անչափահասի նկատմամբ ձերբակալում և կալանավորում պետք է կիրառել որպես ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամանակահատվածի համար, իսկ հնարավորության դեպքում այն փոխարինել այլընտրանքային այլ միջոցներով, օրինակ՝ դաստիարակչական հսկողության հանձնելու ընտանիքում կամ դաստիարակչական հաստատությունում՝:

Այսպես, Պեկինյան կանոններից հետևում է, որ մինչև դատական քննությունը ազատությունից զրկված յուրաքանչյուր անչափահաս պետք է պահվի մեծահասակներից առանձին և իրավունք ունենա հաղորդակցվելու իր ընտանիքի հետ (13.4): Անչափահասի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը կարևոր է, որովհետև չի կարելի թերագնահատել անչափահասի նկատմամբ «քրեական ազդեցության» վտանգավորությունը:

Քանի որ անչափահասի բարեկեցության ապահովումը յուզենալ արդարադատության հիմնական նպատակն է, հետևաբար ազատությունից զրկվելու ողջ ընթացքում պետք է ապահովել անչափահասների

խնամքը, պաշտպանությունը, անհրաժեշտ անհատական, սոցիալական, հոգեբանական, բժշկական, ֆիզիկական օգնությունը, ինչպես նաև կրթության, մասնագիտական պատրաստության ասպարեզում օգնությունը, որոնք կարող են պահանջվել տարիքը, սեռը և անձը հաշվի առնելով:

Անչափահաս կասկածյալի և մեղադրյալի ձերբակալումն ու կալանավորումն իրականացվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր դրույթներին համապատասխան, սակայն ՀՀ քր. դատ. օր.-ի 442-րդ հոդվածում սահմանված են անչափահասի կալանավորման առանձնահատկություններ: Այսպես, անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում: Ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար անչափահաս մեղադրյալի նակատմամբ կալանքի կիրառման բացառումը, մեր կարծիքով, բավարար չէ անչափահաս անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս շատ կարևոր է նաև նախատեսել հետևյալը, որ *կալանքը անչափահասի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, եթե հանրավոր չէ կիրառել ավելի մեղմ խափանման միջոց:*

Անչափահասի ազատության սահմանափակման մասին ցանակացած որոշում պետք է ընդունվի վարույթի բոլոր հանգամանքները մանրամասն քննարկելուց հետո՝ սահմանափակումը հնարավորինս նվազագույնի հասցնելու նպատակով:

Ձերբակալման համար նախատեսված է, որ կասկածյալների նկատմամբ այն կարող է կիրառվել այն դեպքում, եթե անձը կասկածվում է այնպիսի հանցագործության մեջ, որի կատարման համար կարող է նշանակվել պատիժ՝ կարգապահական գումարտակում պահելու, կալանքի, որո-

շակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 128, մաս 2, կետ 1): Օրենքով նախատեսված ձերբակալման հիմքերն ընդհանուր են ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս կասկածյալների համար: Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձը կարող է ձերբակալվել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի կողմից հետևյալ հիմքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում, եթե՝

1) նա բռնվել է քրեական օրենքով չթույլատրվող արարքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո.

2) ականատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին որպես քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարողի.

3) տվյալ անձի կամ նրա հագուստի վրա, նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում կամ տրանսպորտային միջոցում հայտնաբերվել են քրեական օրենքով չթույլատրված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր.

4) կան այլ հիմքեր հանցանքի կատարման մեջ կասկածելու անձին, որը դեպքի վայրից կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր կամ բնակվում է այլ տեղանքում, կամ որի անձնավորությունը պարզված չէ (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 129, մաս 1):

Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին: Ձերբակալման մասին արձանագրությունում նշվում է կասկածյալի պաշտպանության, ինչպես նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 63-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու մասին: Ձերբակալման օրինականության ապահովման համար վարույթն իրա-

## **ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

կանացնող մարմինը՝ ձերբակալման արձանագրությունը կազմելուց հետո՝ 12 ժամվա ընթացքում, այդ մասին գրավոր իրազեկում է դատախազին:

Վարույթն իրականացնող մարմինը ձերբակալված անձին բացատրում է ձերբակալման հիմքերը, նրա դատավարական իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում նաև ձերբակալման պահից պաշտպան ունենալու իրավունքը: Ձերբակալված կասկածյալն իրավունք ունի հարցաքննվելու պաշտպանի մասնակցությամբ: Պաշտպանի մասնակցությունն անհապաղ ապահովվելու անհնարինության դեպքում քննիչը պարտավոր է նրա մասնակցությունն ապահովել կասկածյալին արգելանքի վերցնելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:

ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ ձերբակալման համար սահմանված է 72 ժամ, որը ենթակա չէ երկարացման: Նշված ժամկետն սկսվում է անձին արգելաբքի վերցնելու պահից: Օրենքի այս պահանջը հավասարապես կիրառվում է ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս կասկածյալների համար: Պետք է նշել, որ օրենքի այս դրույթը չի համապատասխանում Պեկինյան կանոններում (10.2) տեղ գտած այն պահանջին, որ դատավորը կամ այլ իրավասու պաշտոնատար անձը կամ մարմինը պետք է *անհապաղ* քննարկի անչափահասին ձերբակալումից ազատելու հարցը: Մինչդեռ քրեադատավարական գործող օրենսդրությամբ անչափահաս կասկածյալը կարող է անազատության մեջ մնալ երեք օր:

Անչափահասների գործերով քննիչը և հետաքննության մարմինը պարտավոր են նկատի ունենալ այն հանգամանքը, որ ձերբակալումը նպատակահարմար է այն դեպքում, երբ ենթադրվում է, որ անձի նկատմամբ որպես խափանման միջոց պետք է կիրառել կալանքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 9-րդ կետից և 65-րդ հոդվածի 9-րդ կետից հետևում է, որ հետաքննության մարմինը կամ քննիչը կասկածյալին կամ մեղադրյալին արգելանքի վերցնելուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով մերձավոր ազգականներին, իսկ զինծառայող լինելու դեպքում՝ նաև զինվորական մասի հրամանատարությանը հեռախոսակապի կամ հնարավոր այլ միջոցով պարտավոր է տեղյակ պահելու արգելանքի տակ պահելու տեղի և հիմքերի մասին:

Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի արգելանքի վերցնելու դեպքում նրան պահելու տեղի և հիմքերի մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը 24 ժամվա ընթացքում դիվանագիտական ուղիներով հայտնում է արգելանքի վերցված անձի քաղաքացիության, իսկ եթե նա քաղաքացիություն չունի՝ նրա մշտական բնակության պետությանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև շահագրգիռ այլ պետությանը:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով արգելանքի վերցված օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին իրավունք է վերապահված կապվելու համապատասխանաբար իր քաղաքացիության պետության կամ իր մշտական բնակության պետության համապատասխան ներկայացուցչի կամ այդպիսի կապ հաստատելու իրավասություն ունեցող այլ ներկայացուցչի հետ կամ այդ ներկայացուցչի կողմից իրեն այցելության, ապա արգելանքի վերցված անձի կողմից այդ իրավունքի իրականացման խնդրանքի դեպքում այն պետք է բավարարել:

Նշված իրավունքի իրականացումը անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի համար ունի կարևոր նշանակություն, քանի որ նրա օրինական ներկայացուցիչները պետք է տեղյակ լինեն նրա գտնվելու վայ-

րի մասին: Օրինական ներկայացուցչին անհապաղ իրազեկելը կարևոր է, քանի որ նա իրավունք ունի մասնակցելու անչափահաս կասկածյալի առաջին հարցաքննությանը, որը պետք է իրականացվի արգելանքի վերցնելուց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:

Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բոլոր խափանման միջոցները՝ բացառությամբ հրամանատարության հսկողության հանձնելուց, որը կիրառվում է միայն զինվորականների, իսկ կալանքը և գրավը՝ մեղադրյալի նկատմամբ: Անչափահաս անձի նկատմամբ խափանման միջոց կարող է կիրառվել այն դեպքում, երբ առկա են օրենքով նախատեսված հիմքեր: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարումը:

Խափանման միջոցների կիրառման օրենքով նախատեսված հիմքերն ու պայմանները ընդհանուր են ինչպես չափահասների, այնպես էլ անչափահասների համար, սակայն կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման հետ կապված, օրենքը նախատեսում է հետևյալ բացառությունը. անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում:

ՀՀ քրեադատավարական գործող օրենսդրությունը անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքի կիրառման այլ վերապահումներ չի նախատեսում: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ վարույթն իրականացնող մարմինը օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կարող է նրա նկատմամբ կիրառել նշված խափանման միջոցը: Նշված կարգավորումը համահունչ չէ այն գաղափարախոսությանը, որ անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել որպես ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամանակահատվածի համար: Իհարկե, կալանքը կարող է կիրառվել ցանկացած տարիքի անչափահասի համար, սակայն ծայրահեղ դեպքում, երբ արարքը բնութագրող հանգամանքների համակցությունը, դաստիարակության և կյանքի պայմանները, անչափահաս անձի առանձնահատկությունները, արարքը կատարելուց հետո նրա վարքագիծը հիմք են տալիս ենթադրելու, որ տվյալ խափանման միջոցը միակ անհարաժեշտ միջոցն է, որը պետք է կիրառել: Հնարավոր են իրավիճակներ, երբ անչափահասը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ, և նրա անձնական առանձնահատկությունները հիմք չեն տալիս նրան ազատության մեջ թողնելու, քանի որ մեծ է նրա կողմից նոր հանցագործություն կատարելու, գործի քննությանը խոչընդոտելու կամ քննությունից թաքնվելուն ուղղ-

## **ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

ված գործողություններ կատարելու հավանականությունը:

Դատարանը պետք է մանրամասն ստուգի անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու և այլ մեղմ խափանման միջոց կիրառելու անհնարինության մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդության մեջ տեղ գտած հիմնավորումները: Դատարանը անչափահասի նկատմամբ կալանք կիրառելու հարցը լուծելիս յուրաքանչյուր դեպքում քննարկում է նաև նրան դաստիարակչական հսկողության հանձնելու հնարավորությունը:

Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցներից է հսկողության հանձնելը: Ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի 148-րդ հոդվածի՝ հսկողության հանձնելն այն է, երբ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի վրա, որտեղ նա պահվում է, պարտականություն է դրվում ապահովելու կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը: Հսկողության հանձնելու միջոցով անչափահասը չի մեկուսացվում հասարակությունից, և հնարավորություն է ստեղծվում նրա նկատմամբ դաստիարակչական ներգործություն ունենալու:

Անչափահասին հսկողության հանձնելը կարող է իրականացվել կասկածյալի կամ մեղադրյալի ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների միջնորդության դեպքում կամ վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ:

Վարույթն իրականացնող մարմնի որոշումը պարտադիր չէ ծնողների, խնամակալների, հոգաբարձուների համար, քանի որ նրանք իրավունք ունեն հրաժարվելու անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ հսկողություն իրականացնելուց (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 148, մաս 3): Կարծում ենք, որ անչափահասին հսկողության հանձնելիս պետք է նշված անձանցից գրավոր համաձայնություն ստանալ, որը կապահովի տվյալ խափանման միջոցի կիրառման արդյունավետությունը: Եթե նշված անձինք համաձայնություն չեն տալիս կիրառելու հսկողության հանձնելը, ապա պետք է կիրառվի այլ խափանման միջոց:

Անչափահասի նկատմամբ որպես խափանման միջոց հսկողության հանձնելը կիրառելու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը նրա ծնողներին, խնամակալներին, հոգաբարձուներին, փակ մանկական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին ծանոթացնում է կայացված որոշմանը և նրանց հանձնում որոշման պատճենը, ծանոթացնում է կասկածանքի կամ մեղադրանքի բովանդակությանը, նրանց բացատրում է իրենց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչն արտացոլվում է արձանագրությունում:

<sup>1</sup> Նախագիծն այս հարցում որդեգրել է միջազգային նշված փաստաթղթերում տեղ գտած գաղափարախոսությունը՝ սահմանելով, որ անչափահասի ազատության սահմանափակման մասին ցանկացած որոշում պետք է ըն-

դունվի վարույթի բոլոր հանգամանքների մանրամասն քննարկումից հետո՝ սահմանափակումը հնարավորինս նվազագույնի հասցնելու նպատակով (Նախագիծ՝ հոդված 421, մաս 1):

## THE APPLICATION OF THE MEASURES OF RESTRAINT IN RESPECT OF MINOR SUSPECTS AND ACCUSED

**Samvel DILBANDTYAN**

*Head of the Department of  
Criminal procedure and  
Forensic Sciences of the YSU,  
Doctor of Law*

---

**T**he Code of Criminal Procedure provides an opportunity to apply measures of restraint in respect of each person hindering the investigation of the case. In this respect the minor suspects and accuseds are not an exception. In view of the fact that the application of the measures

of restrain significantly restricts individual's rights and freedoms, the legislation provides additional safeguards for the cases of application of these measures in respect of minors. Application of such measures in respect of minors aims not only to provide a proper investigation of the case, but it also has a bringing-up function. In this article the author raises issues concerning the safeguards against unlawful violation of the minor's rights subjected to any measure of restraint in the course of criminal proceedings.

---

**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՎԱՐՈՒՅՑՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ**

**Գևորգ ԲԱՂՎԱՍՏՐՅԱՆ**

Երևան քաղաքի դատախազության դատախազության դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Այն հանգամանքը, որ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, ի թիվս այլոց, բնութագրվելու է նաև տարբերակված վարույթների շրջանակի ընդլայնմամբ, հստակ ուրվագծվեց դեռևս քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում (այսուհետ՝ Հայեցակարգ): Ընդ որում՝ Հայեցակարգից պարզ էր, որ տարբերակված վարույթների շրջանակի ընդլայնումը քրեական դատավարության խնդիրների լուծման սոսկ տեխնիկական միջոց չէ: Առանձին կատեգորիայի գործերի քննության և լուծման պարզեցված ընթացակարգերի մշակումն առաջ քաշվեց որպես հայեցակարգային խնդիր, որի լուծումը պետք է ապահովեր մարդկային ռեսուրսների, միջոցների և ժամանակի արդարացված խնայողություն: Այս խնդրի իրականացման համար Հայեցակարգն առանձնացրեց նաև քրեադատավարական օրենսդրության զարգացման ինքնուրույն ուղղություն, այն է՝ տարբերակված վարույթների շրջանակի ընդլայնում և կատարելագործում, դրանց նկատմամբ հավասարակշռված մոտեցման մշակում՝ ուղղված մի կողմից ռեսուրսների և ժամանակի խնայողությանը, իսկ մյուս կողմից՝ արդարադատության շահերի ներդաշնակ ապահովմանը: Հետաքրքրական է նաև, որ Հայեցակարգում խոսվում էր ոչ միայն տարբերակված վարույթների շրջանակի ընդլայնման, այլև դրանց կատարելագործման մասին, ինչն ի սկզբանե ենթադրել տվեց

նաև էական փոփոխություն գոյություն ունեցող տարբերակված դատավարական ձևում: Հայեցակարգը ոչ միայն սահմանեց քրեադատավարական ձևի տարբերակման գաղափարը կամ ուղենշեց այս առումով քրեադատավարական օրենսդրության զարգացման տրամաբանությունը, այլև հստակ առանձնացրեց այս ուղղությամբ զարգացման սպասվելիք դրսևորումները՝ ի դեմս պարզեցված նախաքննության, համազործակցության վարույթի և մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի:

Սույն հետազոտությունը նպատակ է հետապնդում ընդհանուր տեսական վերլուծության հիման վրա բացահայտել վերոնշյալ ինստիտուտների տեղը տարբերակված վարույթների համակարգում, ներկայացնել դրանց ընդհանուր հայեցակարգային բնութագիրը և նպատակային նշանակությունը:

**Պարզեցված նախաքննություն:**

Ի սկզբանե նշենք, որ մինչդեռ տեսական վարույթում դատավարական ձևի պարզեցումը, կարծես թե, դուրս է եղել քրեադատավարական ձևի տարբերակման թույլատրելիության հիմնախնդրի շրջանակներից այնքանով, որքանով որ գիտական անհամաձայնությունները շարունակ առավելապես վերաբերել են դատական քննության փուլերում տարբերակման գաղափարին: Տեսության մեջ առանձին դեպքերում նույնիսկ հատուկ ընդգծվում էր մինչդեռ տեսական վարույթի տարբերակման ընդունելիությունը՝ եվ վերջապես, հետաքննությամբ ավարտվող մինչդեռ տեսական վարույթը և նյութերի մինչդեռ տեսական նախապարաստման արձանագրային ձևը խորհրդային քրեական դատավարության համա-



կարգում հանդես էին գալիս որպես վարույթի մինչդատական փուլերում քրեադատավարական գործունեության իրականացման ընդունելի տարբերակված ձևեր:

Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը՝ որպես մինչդատական վարույթում տարբերակված դատավարական ձև, նախատեսեց պարզեցված նախաքննությունը: Նախագծի 181-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախաքննությունը ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կապակցությամբ իրականացվում է ընդհանուր, իսկ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների կապակցությամբ՝ պարզեցված կարգով: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ելնելով վարույթի բնույթից, նշանակությունից, վարույթի մասնակիցների իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, ինչպես նաև պատշաճ և համակողմանի քննությունն ապահովելու նպատակով հսկող դատախազի որոշմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության վերաբերյալ ցանկացած վարույթ կարող է իրականացվել ընդհանուր նախաքննության կարգով:

Վերոնշյալ ձևակերպումներից բխում է, որ պարզեցված նախաքննությունը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով մինչդատական դատավարական գործունեության *հիմնական* ձևն է, ինչը, որպես կանոն, բնորոշ չէ տարբերակված և հատկապես պարզեցված վարույթներին, որոնք առավելապես հանդես են գալիս որպես ընդհանուր դատավարական ձևերին այլընտրանք, և դրանց կիրառումը սովորաբար կրում է ֆակուլտատիվ բնույթ: Այնինչ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով մինչդատական վարույթն իրականացվում է պարզեցված ձևով, եթե դատախազի որոշմամբ դրա համար չի սահմանվել նախաքննության ընդհանուր կարգ: Այդ գործերով նախաքննության ընդհանուր կարգն է հանդիսանում պարզեցված կարգին այլընտրանք և բացառություն դրանից: Դատախազի որոշ-

մամբ նշված կատեգորիայի գործերով ընդհանուր կարգով նախաքննություն իրականացնելու մասին նախագծում խոսվում է՝ կապված պարզեցված նախաքննությամբ կայացված մեղադրական ակտի վերաբերյալ դատախազի որոշման հետ: Այսպես, նախագծի 214-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վարույթի նյութերը նախաքննության մարմնին վերադարձնելու մասին որոշում կայացնելու դեպքում հսկող դատախազը միաժամանակ որոշում է կայացնում նախաքննությունը ընդհանուր կարգով շարունակելու մասին: Այսինքն՝ նախագիծը լռում է այս կատեգորիայի գործերով դատախազի որոշմամբ ի սկզբանե ընդհանուր կարգով նախաքննություն իրականացնելու հնարավորության վերաբերյալ:

Մինչդատական վարույթի պարզեցման բուլղարական տարբերակի հիմքը ևս որոշակի կատեգորիայի գործերով երկար քննություն իրականացնելու օբյեկտիվ անհրաժեշտության բացակայությունն է: Միայն թե այս դեպքում գործերի այդ շրջանակը որոշվում է ոչ թե հանցագործության ծանրության աստիճանով, այլ դրա «ակնհայտությամբ», մասնավորապես՝ երբ անձը բռնվել է հանցանք կատարելու պահին կամ դրանից անմիջապես հետո, կամ երբ նրա մարմնի կամ հագուստի վրա առկա են հանցագործության հետքեր և այլն (Բուլղարիայի քր. դատ. օր. գլ. 24): Ղազախստանի քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ պարզեցված մինչդատական վարույթի ինստիտուտը կիրառելի է նաև ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով: Այս ինստիտուտի կիրառման համար պահանջվում է նաև, որ մեղադրյալն ընդունի մեղքն առաջադրված մեղադրանքում և չփիճարկի ձեռք բերված ապացույցները, ինչպես նաև հանցագործությամբ պատճառված վնասի բնույթն ու չափը: Ընդ որում, հենց մեղքն ընդունելու պայմանի գոյությունը տեսության մեջ քննարկման առարկա է դարձնում «գործարքի» հետ այս վարույթի հարաբերակ-

## **ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

ցության հարցը? (Պազախստանի քր. դատ. օր. 23.1-րդ գլուխ):

Պարզեցված նախաքննությունն առաջին հերթին բնութագրվում է քրեական հետապնդման ժամկետների սահմանափակմամբ: Պարզեցված նախաքննության դեպքում քրեական հետապնդումը պետք է ավարտվի հնարավորինս սեղմ ժամկետներում, բայց բոլոր դեպքերում ոչ ուշ, քան ոչ մեծ ծանրության հանցագործության վերաբերյալ վարույթով անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից մեկ ամսվա, իսկ միջին ծանրության հանցագործության վերաբերյալ վարույթով՝ երկու ամսվա ընթացքում: Բացառիկ դեպքերում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, նշված ժամկետները կարող են երկարացվել ևս մեկ ամսով:

Պարզեցված նախաքննությունն առանձնանում է նաև ապացուցման առարկայի նեղացմամբ: Դրա ընթացքում պարզաբանման ենթակա են դեպքը և դրա հանգամանքները (ժամանակը, տեղը, եղանակը և այլն), մեղադրյալի առնչությունը դեպքին, ենթադրյալ հանցագործության քրեական օրենքով նախատեսված հատկանիշները, ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասը: Մեղադրյալի մեղավորությունը, պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, այն հանգամանքները, որոնք թույլ են տալիս անձին ազատել քրեական պատասխանատվությունից և պատժից կամ դրված են անձի գույքային պահանջների հիմքում, ինչպես նաև մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները մինչդատական վարույթում ապացուցման առարկայի շրջանակից զեղչվում են:

Պարզեցված նախաքննության հաջորդ բնութագրիչը դատավարական գործունեության որոշակի բովանդակային սահմանափակումն է: Նախագծի 249-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ գաղտնի քննչական գործողությունները կարող են

կատարվել ծանր և առանձնապես ծանր ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով, իսկ նույն օրենսգրքի 256-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում՝ նաև ոչ մեծ կամ միջին ծանրության ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով: Նշված սահմանափակումը, փաստորեն, բացարձակ չէ, քանի որ ոչ մեծ կամ միջին ծանրության որոշ ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով որոշ գաղտնի քննչական գործողություններ կարող են կատարվել: Պարզեցված նախաքննության դեպքում բովանդակային սահմանափակումն անուղղակի է այն իմաստով, որ պայմանավորված է ոչ թե նախաքննության պարզեցված տեսակով, այլ դրա առարկա հանցագործությունների ծանրության աստիճանով, և դրանց կապակցությամբ ընդհանուր կարգով նախաքննություն իրականացվելու դեպքում ևս գաղտնի քննչական գործողություններ չեն կարող կատարվել՝ դարձյալ վերը նշված բացառությամբ: Այս համատեքստում հարկ ենք համարում նկատել, որ նշված կատեգորիայի գործերով գաղտնի քննչական գործողությունների կատարման արգելքը հետապնդում է ոչ այնքան վարույթի պարզեցման, որքան դրա շրջանակներում իրավունքների նկատմամբ միջամտության համարժեքության ապահովման նպատակ:

Բովանդակային սահմանափակումը բնորոշ է նաև Ոսկրահայի քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ քրեական զանցանքների մինչդատական վարույթին: Նշված օրենսգրքի 299-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական զանցանքների մինչդատական քննության դեպքում չեն կարող կիրառվել խափանման միջոցներ տնային կալանքը, գրավը և կալանավորումը: Իսկ նույն օրենսգրքի 300-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական զանցանքների մինչդատական քննության ժամանակ կարող են կատարվել նույն օրենսգրքով նախատեսված բոլոր քննչական գործողությունները՝ բացառությամբ գաղտնի քննչական գործողությունների:

Այսինքն՝ այս դեպքում սահմանափակումն ուղղակի է, բացարձակ և ավելի լայն:

Այսպիսով, պարզեցված նախաքննության պարագայում դատավարական պարզեցումն իրականացվում է ի հաշիվ քրեական հետապնդման ժամկետների և, որ ավելի պակաս «տեխնիկական» է, ապացուցման առարկայի ու դատավարական գործունեության որոշակի սահմանափակմամբ: Պարզեցված նախաքննության դատավարական ինստիտուտը պատկանում է «նաքուր» արագացված կամ պարզեցված վարույթների խմբին, որին բնորոշ է վարույթի պարզեցումը «հանուն պարզեցման», և որը զուրկ է արևմտյան քրեական դատավարությանը բնորոշ «կոմպրոմիսային» տարրերից: Այս առումով չի կարելի չնկատել նաև, որ պարզեցված նախաքննությունը նյութերի մինչդատական նախապատրաստման արձանագրային ձևի և հետաքննությամբ ավարտվող գործերով վարույթի իրավահաջորդն է: Դատավարական գործունեության ժամկետային սահմանափակումները բնորոշ էին և՛ հետաքննությամբ ավարտվող վարույթին, և՛ արձանագրային ձևին, ապացուցման առարկայի սահմանափակումը բնորոշ էր երկրորդին, և նույնիսկ պարզեցված նախաքննության դեպքում քննիչի և դատախազի փոխհարաբերությունների պարզեցումը՝ կապված դատախազի ցուցումների բողոքարկման հետ, որի մասին խոսվում էր Հայեցակարգում, և որը, սակայն, Նախագծում չարտահայտվեց, բնութագրական էր հետաքննությամբ ավարտվող մինչդատական վարույթին:

Պարզեցված նախաքննության ինստիտուտի ներմուծումը քրեական դատավարության արդյունավետության ապահովմանն ուղղված կարևոր քայլ է: Այն իրապես արդյունավետ միջոց է՝ բեռնաթափելու վարույթի մինչդատական փուլը, ապահովելու ոչ բարդ գործերի արագ քննությունն ու լուծումը և բացառելու անհարկի ձգձգումներն այդ գործերով: Նկատենք նաև, որ թեև պարզեցված նախաքննության առաքելությունն առաջին հերթին վարույթի այդ փուլի բեռնաթափումն է, այնուամեն-

ճայնիվ այն առնվազն անուղղակիորեն կապված է նաև դատարանակենտրոն քրեադատավարական ընթացակարգ ձևավորելու հայեցակարգային խնդրի հետ, որի իրականացումը պետք է ապահովվեր ի թիվս այլոց, նաև քրեական գործերի քննության ծանրության տեղափոխմամբ մինչդատական վարույթից դատարան և նախաքննության ծավալների ու ազդեցության նվազեցմամբ, որպիսիք դրսևորվում են նաև պարզեցված նախաքննության պարագայում:

**Մասնավոր մեղադրանքով վարույթ:** Գործող քրեադատավարական օրենսդրությունը մասնավոր մեղադրանքով առանձին վարույթ չի նախատեսում, բայց «մասնավոր հետապնդում» և «մասնավոր մեղադրանքի գործեր» հասկացությունները դրան անհայտ չեն: Վերջինիս տակ ընկալվում է քրեական օրենսգրքի որոշակի հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերի շրջանակ, որոնք հարուցվում են միայն տուժողի բողոքի հիման վրա և կասկածյալի կամ մեղադրյալի հետ տուժողի հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Այսինքն՝ գոյություն ունեցող վարույթում մասնավոր բնույթը դրսևորվում է միայն քրեական հետապնդում նախաձեռնելու կապակցությամբ: Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը նախատեսում է ոչ միայն որոշակի գործերով քրեական հետապնդման մասնավոր նախաձեռնում, այլև այդ գործերով քրեադատավարական գործունեության իրականացման տարբերակված ձև:

Մասնավոր մեղադրանքով վարույթի առաջին առանձնահատկությունը դրանում մինչդատական փուլերի բացակայությունն է: Մասնավոր մեղադրանքով վարույթը նախաձեռնվում է տուժողի կամ նրա ներկայացուցչի կողմից՝ անմիջապես դատարան քրեական հայց հարուցելով: Նախագիծը որդեգրել է նաև հակընդդեմ հայցի գաղափարը, որի պարագայում երկու մեղադրանքները քննվում են մեկ վարույթում, և տուժողներից յուրաքանչյուրը միաժամանակ հանդիսանում է նաև մեղադրյալ և ու-

## **ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

նի ինչպես տուժողի, այնպես էլ մեղադրյալի իրավունքներ և պարտականություններ:

Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, նախատեսելով քրեական հետապնդման հանրային և մասնավոր տեսակները, նաև սահմանում է առաջինի առաջնայնությունը երկրորդի նկատմամբ: Այսպես, նախագծի 446-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն դատախազն իրավասու է նշված հանցագործություններով նախաձեռնել քրեական վարույթ, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական վարույթն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում: Այսինքն՝ օբյեկտիվ անհրաժեշտության դեպքում հանրային քրեական հետապնդում կարող է իրականացվել նաև մասնավոր հետապնդման գործերով:

Մասնավոր մեղադրանքով վարույթի կարևոր առանձնահատկություններից մեկը մասնավոր մեղադրողի որպես տուժողի լրացուցիչ դատավարական կարգավիճակի ամրագրումն է՝ դրանից բխող՝ հայցում ներկայացված մեղադրանքն ապացուցելու պարտականությամբ:

Մասնավոր մեղադրանքով վարույթը կրում է քրեական դատավարության մինչդատական փուլերի բեռնաթափման և դատարանակենտրոն քրեական դատավարության ձևավորման հայեցակարգային խնդրի իրականացման բեռը: Ձուտ տեսական առումով ուշագրավ է, որ եթե այլ պարզեցված վարույթները կոնկրետ փուլի պարզեցման խնդիրն ապահովում են՝ այդ փուլում դատավարական գործունեության առանձնահատուկ ձև սահմանելով, ապա մասնավոր մեղադրանքով վարույթը մինչդատական վարույթի պարզեցմանը նպաստում է՝ դատավարական այդ փուլի հետ որևէ առնչություն չունենալով և առանձնա-

հատկություններ ենթադրելով դատական քննության փուլում: Մասնավոր մեղադրանքով վարույթն ապահովում է նաև դատական քննության փուլի պարզեցումը, որը դրսևորվում է այս վարույթում լրացուցիչ դատախոսների ենթափուլի զեղչմամբ:

**Համաձայնեցման վարույթ:** Դատական քննության փուլում դատավարական ձևի պարզեցումը նորույթ չէ ՀՀ քրեական դատավարությունում: Կարելի է ասել, որ դատական քննության արագացված կարգը շուրջ վեցամյա գոյության ընթացքում հաստատեց իր կարողությունը՝ թեթևացնելու քրեական դատավարության կենտրոնական փուլը՝ ի հաշիվ դատաքննության ենթափուլի էական բովանդակային սահմանափակման այն գործերով, որոնցով ապացույցների ընդհանուր կարգով հետազոտության անհրաժեշտություն չկա: Դատավարական այս փուլում պարզեցման կարևորության ամենավստահելի վկայությունը ներկայիս տարբերակված վարույթի կիրառման պրակտիկան է: Ինչպես ցույց են տալիս առանձին ուսումնասիրությունները, դատական քննության արագացված կարգով քննվում և լուծվում են քրեական գործերի շուրջ մեկ երրորդը<sup>3</sup>:

Համաձայնեցման վարույթն ըստ էության գոյություն ունեցող արագացված կարգի կատարելագործման արդյունքն է, որի մասին խոսվում էր Հայեցակարգում: Եվ հենց այս կապի հաշվառմամբ նպատակահարմար ենք գտնում համաձայնեցման վարույթի առանձնահատկությունները բացահայտել արագացված կարգի ինստիտուտի հետ համեմատության մեջ:

Համաձայնեցման վարույթի էությունն արտահայտվում է նրանում, որ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության մեջ մեղադրվող անձի՝ համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը օրենքով նախատեսված պայմանների առկայությամբ բավարարելու դեպքում դատարանը կողմերին ժամանակ է տրամադրում բանակցությունների համար: Բանակցություններն սկսվում են դատախազի կողմից մեղադրյալի և պաշտպանի հետ, իսկ

եթե հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ, բանակցություններից ներգրավվում է նաև տուժողը՝ միայն հանցագործությամբ պատճառված վնասի բնույթի և չափի մասով: Նախագծի 455-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հատուցման ենթակա վնասի բնույթի և չափի վերաբերյալ համաձայնության գալուց հետո կողմերը բանակցություններ են սկսում մեղադրյալի նկատմամբ կիրառման ենթակա պատժատեսակի և պատժաչափի վերաբերյալ: Համաձայնության վարույթի արդյունքում չի կարող սահմանվել այնպիսի պատժաչափ, որը կզերազանցի տվյալ հանցագործության համար նախատեսված առավելագույն պատժի կեսը: Այսինքն՝ համաձայնեցման վարույթի շրջանակներում բանակցությունների առարկան կազմում են, կամ որ նույնն է՝ համաձայնեցման ենթակա են հանցագործությամբ պատճառված վնասի բնույթն ու չափը, ինչպես նաև մեղադրյալի նկատմամբ նշանակվող պատժի տեսակն ու չափը:

Ինչպես նկատում ենք, համաձայնեցման վարույթն արագացված դատական քննությունից առաջին հերթին տարբերվում է դիսպոզիտիվության սկզբունքի գործողության բարձր աստիճանով, որը դրսևորվում է դատավարության մասնակիցների հայեցողության ընդլայնմամբ: Համաձայնեցման վարույթի շրջանակներում տեղի են ունենում բանակցություններ և, իհարկե, դրանց բնորոշ սակարկություններ դատավարության կողմերի միջև, ովքեր օժտված են որոշակի հայեցողությամբ՝ որոշելու բանակցությունների առարկան կազմող հարցերը: Բանակցություններն ու դրանցից բխող հայեցողականությունն այս դատավարական ինստիտուտին հաղորդում են ակնհայտ «կոմպրոմիսային» տարրեր և թույլ են տալիս պնդել, որ համաձայնեցման վարույթը պատկանում է պարզեցված դատական վարույթների «գործարք» տեսակին: Միևնույն ժամանակ, այն չի նույնանում ամերիկյան պլիբարգեմի (plea bargaining)՝ մեղքի ընդունման գործարքի հետ, որը ևս «գործարքի» տարատեսակ է, և որին, սակայն, բնորոշ է

դիսպոզիտիվության առավել բարձր աստիճան, այն է՝ հնարավորություն՝ բանակցությունների արդյունքում որոշելու նաև մեղադրանքի ծավալը: Այս հատկանիշով նախագծով սահմանված ինստիտուտը տարբերվում է նաև էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքով սահմանված համաձայնեցման վարույթից: Իհարկե, հայրենական դատավարական ինստիտուտը ևս արդարացիորեն է կրում «համաձայնեցման» անվանումը, բայց դրա պարագայում համաձայնեցվում է ոչ թե մեղադրանքը, այլ վնասի բնույթն ու չափը, ինչպես նաև պատժի տեսակն ու չափը:

Հատկանշական է, որ համաձայնեցման վարույթի շրջանակներում մեղադրյալի կողմից իր մեղքն ընդունելու կապակցությամբ նախագիծը լռում է: Նախագծի 455-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ համաձայնության մեջ, ի թիվս այլոց, պետք է նշվեն նաև մեղադրական եզրակացության մեջ շարադրված՝ հանցագործության փաստական հանգամանքները, դրա իրավական գնահատականը: Այսինքն՝ մեղադրանքը, թեև կողմերի միջև համաձայնեցման ենթակա չէ, բայց ըստ էության կազմում է նրանց համաձայնության բաղկացուցիչ մասը, ինչը ենթադրում է, որ համաձայնությունը կարող է կայանալ միայն մեղադրյալի կողմից մեղքն ընդունելու դեպքում:

Համաձայնեցման վարույթ կիրառելու հարցը կարող է բարձրացվել միայն դատարանում՝ նախնական դատախազության ժամանակ: Դատավարության կողմերը բանակցությունների փուլ անցնում են միայն դատարանի թույլտվությամբ, երբ դատարանը բավարարում է մեղադրյալի միջնորդությունը: Հետաքրքրական է, որ կողմերի՝ բանակցությունների փուլ անցնելուց հետո էլ դատարանը պահպանում է մեղադրանքը գնահատելու հնարավորությունը: Նախագծի 456-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը չի ընդունում համաձայնության մասին արձանագրությունը և ընդհանուր կարգով շարունակում է նախնական դատախազությունը, եթե՝ 1) կողմերի բանակցությունների ընթացքում ծանոթանալով

## **ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

քրեական գործին՝ հանգել է հետևության, որ մեղադրյալին մեղսագրվող արարքը ակնհայտորեն կատարվել է մեղադրյալ չհանդիսացող այլ անձի (անձանց) կողմից կամ նրանց մասնակցությամբ. 2) մեղադրյալի արարքին տրված իրավական գնահատականն ակնհայտորեն չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին:

Հատկապես ուշագրավ է, որ դատարանը համաձայնեցման վարույթի շրջանակներում պահպանում է մեղադրանքի ոչ միայն իրավական, այլև փաստական կողմը գնահատելու որոշակի հնարավորություն: Դատարանը, անկախ մեղադրյալի միջնորդությունից և դատավարության կողմերի միջև կնքված համաձայնությունից, գործը կարող է քննել ընդհանուր կարգով, եթե գտնում է, որ մեղադրյալին մեղսագրվող հանցանքը կատարվել է այլ անձի (անձանց) կողմից կամ մասնակցությամբ: Սա, իհարկե, մեղադրանքի հիմնավորվածությունը գնահատելու որոշակի հնարավորություն է, ինչը բնորոշ չէ ներկայիս արագացված կարգին, որի դեպքում մեղադրանքի հետ մեղադրյալի համաձայնությունը բացառում է դատարանի կողմից մեղադրանքի հիմնավորվածությանը որևէ կերպ անդրադառնալը: Համաձայնեցման վարույթի այսպիսի կարգավորումն իր առանձին տեղն է զբաղեցրել արագացված կարգի ինստիտուտի կատարելագործման վերաբերյալ մեր առաջարկություններում<sup>4</sup>:

Դատարանը չի ընդունում համաձայնության մասին արձանագրությունը և սահմանում է նոր արձանագրություն կազմելու ու դատարան ներկայացնելու ժամկետ, եթե համաձայնեցված պատժատեսակը կամ պատժաչափը անօրինական է: Եթե դատարանի սահմանած ժամկետում կողմերը չեն ներկայացնում համաձայնության մասին պատշաճ արձանագրություն, ապա դատարանն ընդհանուր կարգով շարունակում է նախնական դատալսումները:

Ինչպես տեսնում ենք, համաձայնեցման

վարություն դատավարության կողմերի հայեցողական հնարավորությունների ընդլայնումը չի հանգեցնում դատարանի պասսիվության: Դատարանի ակտիվությունը դրսևորվում է և՛ համաձայնեցման վարույթ կիրառելու հարցը լուծելիս, և՛ կողմերի միջև կնքված համաձայնության նկատմամբ որոշակի վերահսկողությամբ:

Համաձայնեցման վարություն լրացուցիչ դատալսումներն իրականացվում են միայն կնքված համաձայնության կապակցությամբ՝ պարզելու համար դրա բովանդակության համապատասխանությունը դատավարության կողմերի իրական կամքին: Քանի որ պատժի տեսակն ու չափը որոշվում են կողմերի համաձայնությամբ, հետևաբար այս փուլում հետազոտման ենթակա չեն նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, որը բնորոշ է արագացված կարգին: Այլ կերպ ասած՝ համաձայնեցման վարություն ապացույցների հետազոտումը բացառվում է ամբողջությամբ:

Այսպիսով, համաձայնեցման վարույթը որակապես նոր դատավարական ինստիտուտ է, որին բնորոշ է դիսպոզիտիվության սկզբունքի նոր բովանդակություն, այն է՝ կողմերի բանակցություններ և դրանցում դրսևորվող հայեցողականություն, ինչը որոշում է այդ ինստիտուտի պատկանելությունը պարզեցված վարույթների արևմտյան տեսակին: Միևնույն ժամանակ, տեսության մեջ այդքան քննադատվող դիսպոզիտիվության հատկանիշը համաձայնեցման վարույթում ունի ծավալային իրապես ողջամիտ սահմաններ: Այս առումով առաջին հերթին կարևորվում է մեղադրանքի առերևույթ հիմնավորվածությունը գնահատելու դատարանի որոշակի հնարավորությունը և դրան համապատասխան՝ մեղադրանքի վերաբերությամբ հայեցողություն դրսևորելու՝ կողմերի հնարավորության բացակայությունը<sup>5</sup>: Բացի այդ, համաձայնեցման վարույթում դիսպոզիտիվության սկզբունքի որակական զարգացումը դատարանին չի զրկում վարույթի «տերը լինելու» հնարավորությունից: Թեև համաձայնեցման վարույթը կոնցեպտուալ

առունով որաշակիորեն հեռու է դատական քննության արագացված կարգից և ունի հստակ արտահայտված այլ տեսակային պատկանելություն, այնուամենայնիվ պետք է պնդել, որ այս ինստիտուտն իրապես հանդիսանում է արագացված կարգի զարգացման և կատարելագործման արդյունք: Այդ զարգացումն իր հիմքում ունեցավ նաև հենց արագացված կարգի կիրառման պրակտիկան՝ համաձայնեցման վարույթի շրջանակներում ապահովելով զարգացման երկու՝ դատավարական պարզեցման և երաշխիքների ամրապնդման ուղղությունների ողջամիտ և հավասարակշռված համադրում:

**Համագործակցության վարույթ:** Տարբերակված վարույթներից ամենաքիչը Հայեցակարգում խոսվում էր համագործակցության վարույթի մասին: Հայեցակարգը ընդամենը սահմանափակվեց ի շահ արդարադատության՝ մեղադրյալի հետ համագործակցության մասին մինչդատական համաձայնագրի և դրա հետ կապված հատուկ կարգով դատական ակտ կայացնելու ինստիտուտի ներմուծման գաղափարն ամրագրելով:

Ընդհանուր առմամբ, համագործակցության վարույթը, անկախ տարբեր երկրներում դրա կիրառության առանձին հիմնարար կամ զուտ ընթացակարգային առանձնահատկություններից, ծագել է որպես հատկապես կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ճկուն միջոց: Գրականության մեջ վկայակոչվում է համագործակցության վարույթի հայեցակարգային ուղղվածությունը պատվիրված սպանությունների, բանդիտիզմի, կոռուպցիոն, ինչպես նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների դեմ պայքարին<sup>6</sup>: Նմանատիպ դատավարական ինստիտուտները ժամանակի ընթացքում առավել ճանաչում ստացան ամերիկյան և եվրոպական հայտնի մաֆիաների դեմ պայքարում իրենց կիրառությամբ<sup>7</sup>:

Համագործակցության վարույթի էությունն այն է, որ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության, ինչպես նաև ծանր

կամ առանձնապես ծանր հանցագործության օժանդակության մեջ մեղադրվող անձի համագործակցության միջնորդությունը հսկող դատախազի կողմից բավարարվելու դեպքում դատախազի և մեղադրյալի միջև կնքվում է համաձայնագիր համագործակցության մասին, որում ի թիվս այլոց նշվում են նաև համագործակցության բնույթը և դրա արդյունքում մեղադրյալի համար առաջացող բարենպաստ հետևանքները: Համագործակցության վարույթով նախաքննությունը դատավարական ձևի առունով առանձնահատկություններ, որպես այդպիսին, չունի: Դրանում ենթադրվում է միայն համաձայնագիր կնքած մեղադրյալի մասով վարույթի անջատում և նրա նկատմամբ քրեական հետապնդման կասեցում: Հսկող դատախազի միջնորդությամբ համագործակցած մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել դատական քննության հատուկ կարգ, որի շրջանակներում ուսումնասիրվում են առավելապես համագործակցության բնույթին և մեղադրյալի կողմից իր ստանձնած պարտավորությունները կատարելուն վերաբերող հանգամանքներ: Հատուկ կարգի կիրառման արդյունքում մեղադրյալի նկատմամբ նշանակվում է օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ, կամ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում:

Համագործակցության վերաբերյալ համաձայնագրի ինստիտուտն այս տեսակի մեջ առաջին անգամ ամրագրվեց ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում: Ի սկզբանե նշենք, որ ի տարբերություն իր ավելի «փորձառու» անալոգի՝ նախագծով նախատեսված նորամուծությունն աչքի է ընկնում առավել հստակ իրավական կարգավորվածությամբ: Այսպես, նախագիծը նախևառաջ բացահայտեց համագործակցության վարույթի նպատակը, այն է՝ ապահովել ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտումն ու այն կատարած անձանց քրեական պատասխանատվության անխուսափելիությունը: Համագործակցության միջնորդությունը պետք է վերաբերի տվյալ անձին ներկայացված մեղադրանքին առնչվող հանցա-

## **ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

գործությանը, որը քննվում է նույն կամ մեկ այլ վարույթով (հոդված 460, 1-ին և 3-րդ կետեր): Համագործակցության միջնորդությունը լուծելիս դատախազն օժտված է հայեցողություն դրսևորելու հնարավորությամբ. համագործակցության միջնորդությունը մերժվում է ի թիվս այլոց նաև այն դեպքում, եթե հսկող դատախազը տվյալ համագործակցությունը համարում է ոչ անհրաժեշտ (հոդված 462): Նախագիծը հնարավոր է համարում մեկից ավելի մեղադրյալների հետ համագործակցությունը՝ նրանցից յուրաքանչյուրի հետ կնքելով առանձին համաձայնագիր: Նախագծում լուծված է նաև տուժողի շահերի հաշվառման խնդիրը: Այսպես, եթե մեղադրյալին մեղսագրվող արարքով տուժողին պատճառված վնասը հատուցված չէ, ապա համաձայնագրում նշվում է նաև այդ վնասը լրիվ հարթելու մեղադրյալի պարտականությունը (հոդված 463): Սրանք այն հարցերն են, որոնք կարգավորված չեն համագործակցության վարույթի ռուսական տարբերակում<sup>8</sup>, և որոնց հստակեցման անհրաժեշտությունը կարևորվել է մեր կողմից<sup>9</sup>:

Քննարկվող ինստիտուտի կարգավորումը աչքի է ընկնում ևս մեկ կարևոր առավելությամբ: Նախագծի 196-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քրեական հետապնդման ժամկետը մեղադրյալի հետ համագործակցության համաձայնագրի կնքման հիմքով կասեցվում է մինչև այն վարույթով առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտ հրապարակելը, որի կապակցությամբ համագործակցության պարտականություն է ստանձնել մեղադրյալը: Այս կարգավորումն ապահովում է արդարադատության երաշխիքների գործողությունը այն վարույթով, որի կապակցությամբ իրականացվել է համագործակցությունը: Հակառակ պարագայում, համագործակցած մեղադրյալի վերաբերյալ վարույթն ավելի շուտ լուծելու դեպքում դրանով հաստատված ու մյուս վա-

րույթում ևս ապացուցման առարկան կազմող փաստական հանգամանքները կստանան նախադատելի նշանակություն, ինչի հետևանքով արդարադատությունը մյուս վարույթի շրջանակներում կդառնա ձևական:

Այսպիսով, համագործակցության վարույթը բարդ ու համալիր դատավարական ինստիտուտ է, որի կիրառումը, ի տարբերություն մյուս պարզեցված վարույթների, տարածվում է և՛ մինչդատական, և՛ դատական վարույթների վրա, թեև դրա պարզեցման առաքելությունը դրսևորվում է դատական վարույթում: Համագործակցության վարույթի պատկանելությունը պարզեցված դատավարական ձևերի «գործարք» տեսակին տեսության մեջ գրեթե չի վիճարկվում<sup>10</sup>: Մինչույն ժամանակ, գրականության մեջ արդարացիորեն շեշտվում է, որ այն չի նույնանում մեղքի ընդունման գործարքի հետ, քանի որ սույն դեպքում համաձայնագրի առարկան ոչ թե մեղադրանքն է, այլ մեղադրյալի համագործակցությունը<sup>11</sup>: Համագործակցության վարույթի ռուսական տարբերակի օրինակով նշենք, որ դրա ներմուծումը հետխորհրդային քրեական դատավարության համակարգ չընդունվեց սվիններով այնպես, ինչպես դատական քննության հատուկ կարգի պարագայում էր: Թերևս տեղին է վկայակոչել Ն. Ջ. Ամենդովին, ով հատուկ կարգի նպատակահարմարության վերաբերյալ քննարկումները պայմանավորում է այդ ինստիտուտի ոչ հստակ իրավական կարգավորմամբ, ինչն իրավակիրառ գործունեության ընթացքում բազմաթիվ խնդիրներ է առաջ բերում<sup>12</sup>: Եվ այս կապակցությամբ ավելորդ չէ կրկնել, որ համագործակցության վարույթն առանձնանում է հստակ իրավական կարգավորվածությամբ, ինչը, իհարկե, դրա պատշաճ գործողության առաջին գրավականն է:

Որպես կանոն, տարբերակված վարույթների ներմուծումը քրեական դատավարության համակարգ ուղղակիորեն կապվում է քրեական արդարադատության բեռնաթափման, դրա պարզեցման ու արագացման հետ: Համեմայն դեպս, այս համա-



տեքստում են սկսվել և շարունակվել տարբերակման նպատակահարմարության ու թույլատրելիության վերաբերյալ գիտական վեճերը նույնիսկ այն փաստարկների առկայությամբ, որ քրեադատավարական ձևի տարբերակումը դրսևորվում է ոչ միայն դրա պարզեցմամբ, այլ նաև բարդացմամբ կամ համարժեք դատավարական ձևերի ներմուծմամբ՝ ըստ անհրաժեշտության: Այսինքն՝ տարբերակված վարույթների խնդիրը շարունակ դիտարկվել է քրեական դատավարության ռացիոնալացման հիմնախնդրի լույսի ներքո: Եվ ինչպես նկատեցինք, հայեցակարգում ևս տարբերակված վարույթների շրջանակի ընդլայնումն ու կատարելագործումը կապվում են քրեական դատավարությունն արդյունավետացնելու նպատակի հետ: Բայց տարբերակված վարույթների շրջանակի ընդլայնումն ու կատարելագործումն այնպես, ինչպես նախանշվեց հայեցակարգում և ամբողջական տեքստով արտահայտվեց նախագծում, պակաս սերտորեն կապված չէ նաև նախագծի մեկ այլ հայեցակարգային առանձնահատկության հետ: Խոսքը քրեական դատավարությունում մրցակցության տարրերի ուժեղացման կամ գոյություն ունեցող

քրեական դատավարությունը մրցակցայինի մեկ այլ մոտեցնելու մասին է: Այս կապն առավելապես դրսևորվում է տարբերակված դատական վարույթների պարագայում, որոնցում դրսևորվող դիսպոզիտիվության սկզբունքի գործողության բարձր մակարդակը բնորոշ է հենց քրեական դատավարության մրցակցային տեսակին: Իսկ ընդհանրապես գոյություն ունեցող տարբերակված դատական վարույթների զգալի մասը հիմնվում է քրեական հայցի հայեցակարգի վրա և դրսևորվում է քրեական հայցի առարկայի տնօրինման որոշակի հնարավորությունների հետ, որոնց ծավալը թերևս կախված է տարբերակված վարույթի կոնկրետ տեսակին պատկանող առանձին ենթատեսակի առանձնահատկություններից: Այսպիսով, եթե նույնիսկ նոր օրենսգրքի նախագծում առաջարկվող որոշ տարբերակված վարույթների ներմուծումը ունեցել է ընդամենը քրեական դատավարությունը պարզեցնելու և ոչ թե նաև այն մրցակցայնության հավելյալ հատկանիշով օժտելու նպատակ, այնուամենայնիվ պետք է ընդգծել, որ դրանց կապը վարույթի մրցակցային տեսակի հետ օբյեկտիվ է ու գենետիկական:

- <sup>1</sup> Տե՛ս **Арсеньев В. Д., Метлин Н. Ф., Смирнов А. В.** О дальнейшей дифференциации порядка производства по уголовным делам. //Правоведение, 1986, N 1, էջ 79:
- <sup>2</sup> Տե՛ս **Стивен Ч. Тэйман.** Упрощенное производство или согласованное заявление о виновности? Анализ проекта Закона Республики Казахстан «О внесении изменений и дополнений в Уголовно-процессуальный кодекс Республики Казахстан по вопросам упрощенного досудебного производства»// Практические аспекты производства предварительного следствия и дознания в упрощенном порядке в Республике Казахстан. Сборник материалов круглого стола. - Алматы, 2009, էջ 123.
- <sup>3</sup> Տե՛ս **Գ. Բաղդասարյան.** Դատական քննության արագացված կարգի, որպես տարբերակված դատավարական ձևի հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում: Մեմոարուբ-

- յուն/ երևան, ԵՊՀ հրատ. 2012թ., էջ 101:
- <sup>4</sup> Տե՛ս **Գ. Բաղդասարյան,** նշվ. աշխ., էջ 161:
- <sup>5</sup> Տեսության մեջ շարունակ անողոք քննադատության է ենթարկվել հենց մեղադրանքը տնօրինելու՝ դատավարության մասնակիցների հնարավորությունը: Այդ մասին տե՛ս **Бойков А. Д.** Новый УПК России и проблемы борьбы с преступностью. //Уголовное право. 2002, N3, էջ 69, **Быков В., Громов Н.** Особый порядок принятия судебного решения при согласии обвиняемого с предъявленным ему обвинением. //Уголовное право, 2004, N 2, էջ 93, **Сарсенбаев Т.** Сделка о признании вины в уголовном процессе Республики Казахстан. // Юрист, 2004, N10(40), էջ 92, **Махов В., Пешков М.** Сделка о признании вины. //Российская юстиция.1998, N 7, էջ 17, **Петрухин И. Л.** Сделки о признании вины чужды российскому менталитету. //Российская юстиция, 2001, N 5, էջ 37-38:

**Քրեպատժման ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

- 6 Տե՛ս **Смирнов А. В.** Особый порядок принятия судебного решения при заключении досудебного соглашения о сотрудничестве. Сб. материалов международной научной конференции “Конституционно-правовые проблемы уголовного права и процесса”. 30-31 октября 2009. Санкт-Петербург, www.iuaj.net
- 7 Տե՛ս **Федотов И.С.** Досудебное соглашение о сотрудничестве: реальность или иллюзия в современной России. // Досудебное соглашение о сотрудничестве (правовые и криминалистические проблемы) // материалы научно-практической конференции. Воронеж, 2009, էջ 276:
- 8 Այս հարցերի մի մասի փարզաբանմանն ու օրենսդրական բացերի կարգավորմանն է նվիրված ՌԴ գերագույն դատարանի պլենումի որոշումը. տե՛ս Постановление пленума Верховного суда Российской Федерации, “О практике применения судами особого порядка судебного разбирательства уголовных дел при заключении досудебного соглашения о сотрудничестве”, N 16 от 28.06.2012г.
- 9 Տե՛ս **Գ. Բաղդասարյան.** Հանագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր: Քրեական դատավարության փարզեցման հիմնախնդիրները. գիտագործնական ձեռնարկ. հեղ խումբ/ Երևան, 2011թ. էջ 54-85:
- 10 Տե՛ս **Смирнов А. В.** Особый порядок принятия судебного решения при заключении досудебного соглашения о сотрудничестве. Сб. материалов международной научной конференции “Конституционно-правовые проблемы уголовного права и процесса”. 30-31 октября 2009. Санкт-Петербург, www.iuaj.net
- 11 Տե՛ս **Касаткина Е. С.** Признание обвиняемого, монография, изд. Проспект, 2010, էջ 62:
- 12 Տե՛ս **Ахмедов Н. З.** Роль органов предварительного расследования в применении особого порядка судебного разбирательства. //Актуальные вопросы применения уголовно-процессуального и уголовного законодательства в процессе расследования преступлений (к 90-летию со дня рождения проф. И.М. Гуткина), Сб. мат. межвуз. науч.-прак. конф. в 2-х ч., ч 1, М., 2009, էջ 259-262:

---

## DIFERENTIATED PROCEDURES IN ACCORDANCE WITH THE NEW DRAFT CODE OF CRIMINAL PROCEDURE

**Gevorg BAGHDASARYAN**

*Prosecutor of the Prosecution*

*Office of Yerevan City*

*Ph.D. in Law*

---

The present article is dedicated to one of the development patterns of the legislation on criminal procedure: expansion and improvement of differentiated procedure, which has been included in the new draft code of criminal procedure. The general-conceptual nature and main features of the differentiated procedures - simplified investigation; procedures with private accusations; agreed procedure and cooperative procedure, have been defined in the result of a separate analyze.

The author emphasizes a due comparison of two development patterns of criminal procedure - simplification and expansion of judicial guarantees, within the framework of an *agreed* procedure. A comprehensive and holistic legal regulation of the institute of *cooperative* procedure, which has been conceived in the draft, has also been emphasized in the present article.

While greeting the idea of the framework expansion and improvement of the differentiated procedures, the author indicates also that it is connected not only to the simplification of the criminal procedure, but also to the expansion of the competitiveness within it.

---

**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ  
ՎՈՐՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳՎՈՐՈՒՄԸ**

**ՆԵՒԻ ԱՐԱԲԱՐՅԱԼ**

*ԵՊՅ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ*

Անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը միշտ էլ եղել է միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Այդ մասին են վկայում միջազգային իրավական այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են անչափահաս անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Միջազգային իրավական կարգավորմամբ հիմք դրվեց «յուլվեմալ»՝ արդարադատությանը՝ որպես արդարադատության ինքնուրույն տեսակի: Ինչպես ցանկացած երկրի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար անչափահասների վերաբերյալ արդարադատությունը մեր պետության ազգային իրավական համակարգի զարգացման գործընթացի անբաժան մասն է, որը պահանջում է բավարար միջոցներ, որպեսզի անչափահասների վերաբերյալ արդարադատությունը իրականացվի միջազգային հանրության կողմից մշակված սկզբունքներին համապատասխան:

Անչափահաս անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմնահարցերն արդիական են ցանկացած հասարակությունում, որովհետև նույնիսկ ամենաժողովրդավարական հասարակությունում հանդիպում ենք հանցավորության աճի, իսկ սա նշանակում է, որ այդ խնդիրները պետք է լուծվեն առավել ընդհանուր իրավական կարգավորմամբ: Այդ խնդիրներն անկասկած առավել շատ են

այն երկրներում, որտեղ տնտեսական, սոցիալական անբարենպաստ վիճակը անչափահասների շրջանում հանգեցրել է հանցավորության աճի:

Միջազգային հանրության կողմից անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հիմնահարցերը բարձրացվել են դեռևս 20-րդ դարի սկզբին, և մինչև այսօր դրանք առանձին ուսումնասիրության առարկա են: Այդ մասին են վկայում այն փաստաթղթերը, որոնք ընդունվել են միջազգային տարբեր կառույցների կողմից և կարգավորում են ինչպես երեխաների ընդհանուր պաշտպանության, այնպես էլ քրեական արդարադատության ոլորտում նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցերը:

Անչափահասների իրավունքների պաշտպանության առումով ուշադրության է արժանի 1924 թվականի Ազգերի լիգայի ընդունած Ժնևյան դեկլարացիան, որը երեխաների պաշտպանությանը նվիրված առաջին միջազգային փաստաթուղթն է:

Չնայած «յուլվեմալ» արդարադատության միջազգային իրավական կարգավորմանը՝ այն մնում է որպես անչափահասների գործերով ներպետական արդարադատություն: Միջազգային հանրությունը մտահոգ է տարբեր երկրներում անչափահասների հանցավորության աճով, ինչպես նաև քրեական գործերի քննության ընթացքում անչափահաս անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ: Ճիշտ է, անչափահասների գործերով միջազգային դատական ատյաններ չկան, բայց «յուլվեմալ» արդարադատության վերաբերյալ ընդունված միջազգային փաստաթղթերը ազգային օրենսդրության մեջ

սկիզբ դրեցին անչափահասների գործերով նվազագույն կանոնների ամրագրմանն ու կիրառմանը<sup>2</sup>:

Անչափահասների գործերով արդարադատության հիմնահարցերն առավել համակարգային և ամբողջական ուսումնասիրության են արժանացել այն ժամանակ, երբ ՄԱԿ-ի կողմից ստեղծվեցին հատուկ կենտրոններ, հանձնաժողովներ և փորձագիտական խմբեր: ՄԱԿ-ի ոչ կառավարական այդպիսի կառուցների մեջ պետք է առանձնացնել ՄԱԿ-ի Վիեննայի կենտրոնը, Երեխաների օգնության միջազգային ֆոնդը (ЮНИСЕФ) և այլ կազմակերպություններ:

Նշված կազմակերպություններն ակտիվորեն օգնում են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, նրա քարտուղարությանը և հետազոտական կենտրոններին: Նշված կառույցների կողմից կատարվեցին հսկայական աշխատանք, որի շնորհիվ նախապատրաստվեցին մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնք կարգավորում են անչափահասների իրավական վիճակին վերաբերող հարցերը: Նշված մարմիններն իրենց գործունեությամբ նաև հիմք դրեցին նշված ոլորտում միջազգային ակտիվ համագործակցության:

Անչափահասների իրավական վիճակի միջազգային իրավական կարգավորումը վկայում է անչափահասների վերաբերյալ քրեական գործերի քննության, իրավական ընդհանուր կարգավորման անհրաժեշտության մասին: Միջազգային հանրությունը հավասարապես մտահոգված է քրեական դատավարության ոլորտում անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության խնդիրներով: Պետք է նշել, որ պակաս կարևոր չէ նաև այս ոլորտում տարբեր պետությունների միջև փորձի փոխադարձ ուսումնասիրությունը, որը հնարավորություն է տալիս տարածելու այս կամ այն ինստիտուտը: Սա արդարացիորեն կարելի համարել անչափահասների գործերով արդարադատության իրականացման միջազգային հա-

մագործակցության առաջին մակարդակը: Այսօր՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման շեմին, կարևոր են ոչ միայն միջազգային փաստաթղթերում տեղ գտած գաղափարների ընդունումը, այլև այլ երկրների փորձի ուսումնասիրությունը: Աշխարհում տեղի ունեցող գործընթացները միջազգային հանրությանը ստիպում են մշակել արդարադատության ոլորտում առաջացող հարաբերությունները:

Յուրեղանալ արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության համար առանձնահատուկ նշանակություն ունեն ՄԱԿ-ի կողմից կազմակերպվող կոնգրեսները, որոնք նվիրված են անչափահասների հանցագործությունների կանխարգելմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը: Հատկանշական է, որ այդ կոնգրեսները ՄԱԿ-ը կազմակերպում է հինգ տարին մեկ անգամ, իսկ առաջին կոնգրեսը հրավիրվել է 1955 թվականին ժնևում:

Ազգային յուրեղանալ արդարադատության համակարգի արդյունավետ կարգավորումն առաջին հերթին բխում է միջազգային իրավական փաստաթղթերից, որոնցում առավել ընդհանուր լուծում են ստացել այն հարցերը, որոնք վերաբերում են անչափահասների կրթության, դաստիարակության, սոցիալական զարգացման և բերեկեցության ապահովմանը: Գիշտ է, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել են մի շարք միջազգային պայմանագրեր՝ նվիրված անչափահասների պաշտպանությանը, սակայն անչափահասների վերաբերյալ քրեական արդարադատության ոլորտում նշանակալի տեղաշարժ կապված միջազգային փաստաթղթերում տեղ գտած կանոնների կամ սկզբունքների օրենսդրական ամրագրման հետ, դեռևս չկա: Ուշադրության է արժանի նաև այն, որ հայրենական քրեադատավարական գրականության մեջ քիչ են այն ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են անչափահասների իրավունքների

## **ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

և ազատությունների պաշտպանությանը<sup>3</sup>: Վերը նշվածը վկայում է ոչ թե այն մասին, որ քրեական արդարադատության ոլորտում խնդիրներ չկան, կամ դրանք շատ քիչ են, այլ այն մասին, որ պետությունը պատշաճ ուշադրություն չի հատկացրել քրեական արդարադատության ոլորտում անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Միջազգային փաստաթղթերում տեղ գտած նվազագույն կանոնների կամ սկզբունքների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս դրանք ճանաչելու և ներպետական օրենսդրության մեջ ամրագրելու: Այսօր այն առավել արդիական է, քանի որ ընդունվում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք, հետևաբար նրանում անչափահասների վերաբերյալ քրեական արդարադատության նվազագույն չափանիշների ամրագրումը հրատապ է<sup>4</sup>:

Անչափահասների իրավական վիճակին վերաբերող միջազգային փաստաթղթերը բավականին շատ են, սակայն այդ համակարգում պետք է առանձնացնել հետևյալ հիմնական ակտերը.

1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966թ.):

2. Երեխաների իրավունքների մասին Կոնվենցիան, որն ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1989 թվականի նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993 թվականի հունիսի 23-ին:

3. Միավորված ազգերի կազմակերպության Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու նվազագույն չափորոշիչ կանոնները (Պեկինյան կանոնները), որը հաստատվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով:

4. Անչափահասների շրջանում հանցա-

վորության կանխման համար Միավորված ազգերի կազմակերպության ղեկավար սկզբունքները, որն ընդունվել է Եր Ռիադում 1988 թվականին ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսում:

5. Ազատությունից զրկված անաչափահաս անձանց վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության կանոնները, որոնք հաստատվել են 45/113 14 դեկտեմբերի 1990 թվականի բանաձևում և կոչվում են Հավանայի կանոններ:

Նշված միջազգային պայմանագրերում ամրագրված կանոններն ու սկզբունքները վերաբերում են քրեական գործերով անչափահասների իրավական վիճակին և քրեական գործերի քննության առնաձևահատկություններին: Դրանով պայմանավորված ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, այնպես էլ զարգացած իրավական ավանդույթներ ունեցող այլ երկրների քրեական դատավարության օրենսգրքերում նախատեսված է անչափահասների գործերով վարույթի իրականացման առանձնահատուկ կարգ, որը հիմնված է վերը նշված միջազգային փաստաթղթերում տեղ գտած հիմնարար դրույթների վրա: Անչափահասների իրավական վիճակը կարգավորող միջազգային պայմանագրերում սահմանված է պահանջ այն մասին, որ անդամ պետություններն անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս իրենց ազգային օրենսդրությունը, քաղաքականությունն ու գործելակերպը պետք է համապատասխանեցնեն միջազգային պայմանագրերում տեղ գտած գաղափարներին:

Միջազգային պայմանագրերում իրենց ամրագրումն է ստացել այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են՝

– անչափահասների նկատմամբ քրեական գործերով արդարադատության նպատակները,

– անչափահասների նկատմամբ քրեական գործերով քննության արագությունը,

– անչափահասի հասկացությունը,

– ձերբակալման կամ կալանքի տակ

գտնվող անչափահասների նկատմամբ վարվեցողության կանոնները,

– լիազոր մարմիններին ներկայացվող պահանջները,

– անչափահասների նկատմամբ քրեական գործերով մինչդատական վարույթում քրեական գործի կարճումը կամ քրեական հետապնդման դադարեցումը,

– անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանների պարզումը:

Անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման վերը նշված գաղափարներն իրենց առավել ամբողջական ամրագրումն են ստացել Պեկինյան կանոններում, որոնք մարմնավորում են Սարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքական ու քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Տնտեսական, սոցիալական ու մշակութային կանոնների մասին միջազգային դաշնագրում, ինչպես նաև՝ մարդու իրավունքների մասին մյուս միջազգային փաստաթղթերում երիտասարդության իրավունքների պաշտպանությանը վերաբերող գաղափարները:

**1. Անչափահասների նկատմամբ քրեական գործերով արդարադատության նպատակները:** Պեկինյան կանոնների համաձայն՝ անչափահասների վերաբերյալ արդարադատության համակարգն առաջին հերթին ուղղված է անչափահասի բարեկեցության ապահովմանը, որպեսզի անչափահաս իրավախախտների վրա ազդեցություն գործող ցանկացած միջոց միշտ համաչափ լինի ինչպես իրավախախտի անհատական առանձնահատկություններին, այնպես էլ իրավախախտման հանգամանքներին (հոդված 5.1):

Պեկինյան կանոններում որպես նպատակ առաջին հերթին առանձնացվում է անչափահասների բարեկեցության ապահովումը: Պեկինյան կանոններից հետևում է, որ բարեկեցության ապահովումը բոլոր իրավական համակարգերի հիմնական նպատակն է, ինչպես այն համակարգերի, որոնցում անչափահաս իրավախախտնե-

րի գործերով զբաղվում են ընտանեկան գործերով դատարանները կամ վարչական մարմինները, այնպես էլ այն իրավական համակարգերի, որոնք ավելի շատ հակված են անչափահասներին քրեական պատասխանատվության ենթարկելուն: Անչափահասի բարեկեցությանը պետք է հատուկ ուշադրություն դարձնել, քանի որ այն կօգնի խուսափել պատժիչ սանկցիաներից:

Երկրորդ նպատակը «համաչափության սկզբունքի» պահպանումն է, որը հայտնի է որպես պատժի միջոցների օգտագործման սահմանափակման միջոց: Այս սկզբունքի կիրառումը կախված է իրավախախտման ծանրությունից, այսինքն՝ արարքին համարժեք հատուցումից: Անչափահասների նկատմամբ ունեցած վերաբերմունքը ենթադրում է, որ նրանց մեջ պետք է բարձրացնել արժանապատվության զգացումը, ամրապնդել մարդու իրավունքների և այլոց ազատությունների նկատմամբ հարգանքը, հաշվի առնել երեխայի տարիքը և հանրությանը ծառայելու նրա ցանկությունը:

Երիտասարդ իրավախախտների արարքների նկատմամբ հակազդեցություն ունենալիս պետք է հաշվի առնել ոչ միայն իրավախախտման ծանրությունը, այլև անձի առանձնահատկությունները: Իրավախախտի անհատական առանձնահատկությունները (օրինակ՝ սոցիալական կարգավիճակը, ընտանկան դրությունը, պատճառած վնասը և իրավախախտ անձին վերաբերող այլ գործոններ) պետք է ազդեցություն ունենան պատասխան գործողությունների համարժեքության վրա (օրինակ՝ ուշադրություն պետք է դարձնել զոհին պատճառած վնասի փոխհատուցման իրավախախտի ցանկությանը, աղջկա կամ տղայի լիարժեք և հանրօգուտ կյանք վարելու կամքին):

Երիտասարդ իրավախախտի բարեկեցության ապահովմանն ուղղված պատասխան գործողությունները կարող են դուրս գալ անհրաժեշտության սահմաններից և

## **ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

դրանով վնաս հասցնել կոնկրետ երիտասարդի հիմնական իրավունքներին, ինչը նկատվում է անչափահասների նկատմամբ արդարադատության որոշ համակարգերում: Այդ դեպքում պետք է ապահովել պատասխան գործողության համարժեքությունը՝ հաշվի առնելով իրավախախտման հանգամանքների առանձնահատկությունները, իրավախախտի, ինչպես նաև տուժածի անձը:

**2. Անչափահասների նկատմամբ քրեական գործերով քննության արագությունը:** Քրեական գործերով քննության արագությունը այն համընդհանուր գաղափարներից է, որն իր ամրագրում է ստացել բազմաթիվ միջազգային փաստաթղթերում և կիրառվում է ոչ միայն անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերով, այլև ցանկացած հանցագործության քննության<sup>6</sup>, քանի որ յուրաքանչյուր մեղադրյալ ունի ողջամիտ ժամկետներում դատարանի առջև կանգնելու իրավունք: Անչափահասների գործերով վարույթում այս պահանջն առավել կարևոր է, որովհետև հակառակ դեպքում կարող է վտանգվել այն ողջ դրականը, ինչին կարելի է հասնել դատական քննության և դատավճռի կայացման միջոցով:

Անչափահասների նկատմամբ քրեական գործերի արագ քննության կանոնն իր ամրագրումն է ստացել Պեկինյան կանոնների 20.1 կետում, համաձայն որի՝ անչափահասի վերաբերյալ ցանկացած գործ պետք է քննվի արագ՝ թույլ չտալով անհարկի ձգձգումներ: Կարծում ենք, որ յուրաքանչյուր ժողովրդավարական երկրի քրեադատավարական համակազմի համար այն առաջնահերթ խնդիր է<sup>6</sup>:

**3. Անչափահասի հասկացությունը:** Ըստ Պեկինյան կանոնների՝ անչափահաս է համարվում նա, ով իրավախախտման համար գործող իրավական համակարգի շրջանակներում կարող է ենթարկվել պատաս-

խանատվության այն ձևով, որը տարբերվում է մեծահասակի նկատմամբ կիրառվող պատասխանատվության ձևից, ընդ որում՝ անչափահասը պետք է կասկածվի իրավախախտում կատարելու համար, կամ հաստատվել է, որ նա է կատարել այն (2.2):

Պեկինյան կանոնների համաձայն՝ այն իրավական համակարգերում, որոնցում ընդունվում է «անչափահասների քրեական պատասխանատվության տարիք» հասկացությունը, այդպիսի տարիքի ստորին սահմանը չպետք է առավել ցածր տարիքային մակարդակ ենթադրի՝ հաշվի առնելով զգացմունքային, հոգեկան և մտավոր հասունության գործոնները:

Քրեական պատասխանատվության նվազագույն տարիքի սահմանները, ըստ պատմամշակութային առանձնահատկությունների, միանգամայն տարբեր են: Ժամանակակից մոտեցման կիրառումը պայմանավորված է երեխայի՝ քրեական պատասխանատվությանը վերաբերող բարոյախոգեբանական ասպեկտները կրելու ընդունակությունների որոշմամբ, այսինքն՝ բացահայտ հակահասարակական վարքագծի համար երեխային պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը որոշվում է անհատական ընդունակությունների, անչափահասի ըմբռնման և ընկալման կարողությամբ: Եթե քրեական պատասխանատվության տարիքային սահմանը չափից ավել ցածր է կամ ընդհանրապես չի սահմանված, ապա պատասխանատվության գաղափարը դառնում է անիմաստ: Դրա համար, ինչպես նշված է մեկնաբանություններում<sup>7</sup>, պետք է ջանքեր գործադրել՝ խելամտորեն որոշելու ցածրագույն տարիքային այն սահմանը, որը կարող է կիրառվել միջազգային մասշտաբով<sup>8</sup>:

**4. Ձերբակալման կամ կալանքի տակ գտնվող անչափահասների նկատմամբ վարվեցողության կանոնները:** Պեկինյան կանոններում հատուկ ուշադրություն է հատկացվում անչափահաս անձանց ձեր-



բակալմանը և կալանավորմանը, քանի որ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառմամբ էապես սահմանափակվում են նրանց իրավունքներն ու ազատությունները: Պեկինյան կանոնների ընհանուր գաղափարախոսությունն այն է, որ անչափահասի նկատմամբ ձերբակալում կամ կալանավորում պետք է կիրառել ծայրահեղ դեպքերում և ամենակարճ ժամանակահատվածով, իսկ հնարավորության պարագայում այն պետք է փոխարինել այլընտրանքային միջոցով, օրինակ՝ դաստիարակչական հսկողության հանձնելու ընտանիքում կամ էլ դաստիարակչական հաստատություններում:

Պեկինյան կանոններից հետևում է, որ մինչև դատական քննությունը ազատությունից զրկված յուրաքանչյուր անչափահաս պետք է պահվի մեծահասակներից առանձին և իրավունք ունենա հաղորդակցվելու իր ընտանիքի անդամների հետ (13.4): Անչափահասի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը կարևոր է, որովհետև չի կարելի թերագնահատել անչափահասի նկատմամբ «քրեական ազդեցության» վտանգավորությունը:

Քանի որ անչափահասի բարեկեցության ապահովումը յուրվեճալ արդարադատության հիմնական նպատակ է, հետևաբար ազատությունից զրկվելու ողջ ընթացքում պետք է ապահովել անչափահասների խնամքը, պաշտպանությունը, անհրաժեշտ անհատական, սոցիալական, հոգեբանական, բժշկական, ֆիզիկական օգնությունը, ինչպես նաև կրթության, պրոֆեսիոնալ պատրաստության ասպարեզներում օգնությունը՝ անշուշտ հաշվի առնելով տարիքը, սեռը և անձը:

**5. Լիազոր մարմիններին ներկայացվող պահանջները:** Պեկինյան կանոններում առանձնահատուկ պահանջներ են ներկայացվում վարույթն իրականացնող մարմինների պրոֆեսիոնալ պատրաստվածությանը, ինչն ապահովում է յուրվեճալ արդարադատության խնդիրների պատշաճ իրակա-

նացումը: Պեկինյան կանոնների 12.1, 22.1 և 22.2 կանոնների համաձայն՝ իրենց պարտականությունները լավագույնս կատարելու համար ոստիկանության ծառայողները, որոնք հաճախակի կամ բացառապես զբաղվում են անչափահասների հանցագործությունների կանխումով, պետք է հատուկ հրահանգավորվեն և նախապատրաստվեն: Իրավապահպան մարմինների աշխատակիցները իրենց աշխատանքում պետք է պատրաստ լինեն հաշվի առնելու անչափահասների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև իմանան և կիրառեն այն ծրագրերը, որոնք նախատեսված են անչափահասների հետ վարվեցողության համար, որպեսզի անչափահասի և արդարադատության համակարգի միջև ընդհարում չլինի:

Այդ նպատակով խոշոր քաղաքներում պետք է ստեղծվեն ոստիկանական հատուկ ստորաբաժանումներ, որոնք անհրաժեշտ են ոչ միայն կանոններում տեղ գտած սկզբունքների պահպանումն ապահովելու, այլև անչափահասների կատարած հանցագործությունները կանխելու և դրանց դեմ մղվող պայքարը առավել արդյունավետ ապահովելու, ինչպես նաև անչափահաս իրավախախտների նկատմամբ վարվելաձևը բարելավելու համար:

Որակավորման ապահովումը անչափահասների վերաբերյալ գործով անաչառ և արդյունավետ արդարադատության իրականացման անհրաժեշտ տարր է: Դրա համար պետք է բարելավել լիազոր մարմինների անձնակազմի ճիշտ ընտրությունը, մասնագիտական պատշաճ պատրաստությունը և վերապատրաստումը: Նշված պայմանների ապահովումը կնպաստի նրանց կողմից իրենց պարտականությունների պատշաճ կատարմանը: Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս անաչառության հասնելու նպատակով պետք է խուսափել քաղաքական, սոցիալական, սեռական, ռասայական, կրոնական, մշակութային կամ ցանկացած ուրիշ հիմքով անչափահասների

## **ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

գործերով արդարադատության համակարգի ընտրության, անձնակազմի նշանակման և առաջխաղացման գործում ցանկացած խտրականությունից: Պետք է նշել, որ ՄԱԿ-ի 6-րդ Կոնգրեսում հատուկ ուշադրություն հատկացվեց քրեական արդարադատության համակարգում կին աշխատակիցների ապահովմանը, նրանց ընտրության, պատրաստության, ինչպես նաև առաջխաղացման աջակցմանը:

**6. Մինչդատական վարույթում անչափահասների նկատմամբ քրեական գործի կարծույթ կամ քրեական հետապնդման դադարեցումը:** Պեկինյան կանոնների 11.1 կանոնի համաձայն՝ անչափահաս իրավախախտների վերաբերյալ գործերի քննության ժամանակ իշխանության իրավասու մարմինները հնարավորության սահմաններում չպետք է դիմեն գործի պաշտոնական քննության: Ոստիկանությունը, դատախազությունը, անչափահասների գործերով վարույթ իրականացնող մյուս մարմինները պետք է լիազորված լինեն այդպիսի գործերով որոշում ընդունել իրենց հայեցողությամբ, առանց գործերի պաշտոնական լսումների: Կանոններում ընդգծվում է այն գաղափարը, որ շատ դեպքերում լավագույն արդյունքներ է տալիս իշխանության իրավասու մարմինների կողմից չմիջամտելը, այսինքն՝ գործի կարծումը ամենասկզբում, առանց այն այլընտրանքային (սոցիալական) մարմիններին փոխանցելու: Դա հատկապես վերաբերում է ոչ լուրջ խախտումներին, երբ ընտանիքը, դպրոցը և ոչ պաշտոնական սոցիալական հսկողություն իրականացնող այլ ինստիտուտները ձեռնարկել են կամ մտադիր են ձեռնարկել ներգործության պատշաճ միջոցներ:

Կանոններում նաև սահմանված է, որ այդպիսի կարծում թույլատրվում է միայն անչափահասի համաձայնությամբ (11.3), սակայն դա չպետք է ընդունվի անվերա-

պահորեն, քանի որ երբեմն համաձայնությունը կարող է անչափահասի կողմից տրվել հուսահատ վիճակում: Կանոնում ընդգծվում է, որ գործի կարծման բոլոր մակարդակներում ստիպողականությունն ու ահաբեկումը պետք է հասցնել նվազագույնի: Անչափահասները չպետք է զգան, որ իրենց նկատմամբ գործադրվում է ճնշում (օրինակ՝ դատական քննությունից խուսափելու համար), կամ չպետք է ենթարկվեն ճնշման՝ այս կամ այն ձևով գործերը կարծելու համաձայնություն ստանալու նպատակով:

**7. Անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանների պարզումը:** Պեկինյան կանոններից հետևում է, որ պետությունը պետք է ձգտի ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան անչափահասի համար ապահովել կյանքի բովանդակալից պայմաններ կյանքի այն փուլում, երբ անչափահասն առավել հակված է ոչ ճիշտ վարքագծի, և բարերար ազդեցություն կունենա հանցագործությունների և իրավախախտումների հնարավորությունից առավել չափով զերծ անձի զարգացման և կրթություն ստանալու գործում:

Պեկինյան կանոններն իրավապահայան մարմիններին պարտավորեցնում է բոլոր դեպքերում, բացառությամբ մանր իրավախախտումների, մինչև իշխանության իրավասու մարմնի կողմից որոշման կայացումը ուսումնասիրել անչափահասի շրջապատն ու պայմանները, որոնցում նա ապրում է, ինչպես նաև իրավախախտում կատարելու հանգամանքները, որպեսզի աջակցեն իշխանության իրավասու մարմնին՝ գործով ողջամիտ դատական որոշում կայացնելու (16.1):

Մեկանաբանություններում առաջ է քաշվում այն գաղափարը, որ նշված խնդրի իրականացման համար պետք է կատարվեն սոցիալական ուսումնասիրություններ և դրանք ներկայացվեն գործի դատական քննության ընթացքում: Դատարանը անչափահասի գործով արդարադա-

տություն իրականացնելիս անպայման պետք է իմանա անչափահասին վերաբերող համապատասխան փաստերի մասին, օրինակ՝ անչափահասի սոցիալական և ընտանեկան միջավայրի, դպրոցում՝ նրա ուսման, դաստիարակության և այլ հանգամանքների մասին: Կարծում ենք, որ ճիշտ կլիներ այդպիսի ծառայություններ ստեղծել նաև մեր իրավական համակարգում, որոնք կարող են էական աջակցություն ցույց տալ դատարաններին անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս:

Միջազգային փաստաթղթերում տեղ գտած այս և մյուս դրույթները կոչված են նպաստելու ազգային իրավական համակարգերում անչափահասների գործերով վարույթի այնպիսի արդյունավետ կարգ

սահմանելուն, որը քրեական դատավարությունում կապահովի անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանությունը: Այդ հիմնադրույթները համադրելով ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում տեղ գտած անչափահասների գործերով վարույթի իրավական կարգավորման հետ՝ կարող ենք ասել, որ անչափահասների իրավունքների և ազատությունների ոչ արդյունավետ պաշտպանության հիմնական պատճառը քրեադատվարական գործող օրենսդրության անկատարությունն է: Սրանից հետևում է, որ քրեադատվարական նոր օրենսգրքում անչափահասների գործերով վարույթի կարգավորման հիմքում պետք է դնել միջազգային փաստաթղթերում տեղ գտած չափորոշիչները:

<sup>1</sup> Պեկինյան կանոնների անգլերեն տարբերակում օգտագործվող «Juvenile Justice» հասկացությունը հայերենում թարգմանվում է «անչափահասների նկատմամբ արդարադատություն»:

<sup>2</sup> Տե՛ս Мельникова Э.Б. Ювенальная юстиция: Проблемы уголовного права, уголовного процесса и криминалистики: Учебное пособие, М., 2000, էջ 163:

<sup>3</sup> Տե՛ս Ս.Ա. Դիլբանդյան, Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում: Եր., Երևանի պետական համալսարանի հրատ., 2011, էջ 337-394:

<sup>4</sup> Պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծն անչափահասների վերաբերյալ քրեական գործերով վարույթի հարցերը հիմնականում կարգավորում է միջազգային փաստաթղթերում տեղ գտած սկզբունքներին համապատասխան:

<sup>5</sup> Պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում առաջին անգամ վարույթի ողջամիտ ժամկետն առանձնացվել է որպես սկզբունք: Այսպես, նախագծի 24-րդ

հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախաքննությունը և դատաքննությունը պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում:

<sup>6</sup> Միաժամանակ, պետք է նշել, որ առաջին անգամ նախագծի 418-րդ հոդվածում առանձին պահանջ է ներկայացվում անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի արագությանը: Մասնավորապես, նախագծում ամրագրված է, որ մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման ժամկետները երկարացվել չեն կարող:

<sup>7</sup> ՄԱԿ-ի Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու նվազագույն չափորոշիչ կանոնները ներառում են ոչ միայն հոդվածներ, այլև դրանց մեկնաբանությունները:

<sup>8</sup> Այս կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 416-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ անչափահասին վերագրվող հանցանքի մասին վարույթի դրույթները կիրառվում են այն անձանց վերաբերյալ վարույթներով, որոնց տասնութ տարին չի լրացել ձերբակալման կամ մեղադրանք ներկայացնելու պահին:

**Քրեական իրավունք****INTERNATIONAL LEGAL REGULATION  
OF JUVENILE CASE PROCEEDINGS****Nelly AGHABABYAN**

*PhD student of the Chair of Criminal Process  
and Criminology of the Yerevan State University*

---

International regulation of the legal status of the juvenile highlights the need for common legal regulation of the investigation of criminal cases involving the juvenile. International society is equally bewildered by the issues of protecting the rights and legitimate interests of the juvenile in the sphere of protection of rights and legitimate interests of the juvenile in criminal justice

system. It should be noted that the study of mutual experience in this field between the different countries also plays an important role, it's necessary for the expansion of this institution. On the verge of adopting a new Criminal Procedure Code of the Republic of Armenia, both the adoption of ideas from international instruments and the study of the experience of other countries are significant. The processes taking place in the world are forcing the international society to develop necessary documents, which provide the unified regulation of the relations arisen in the field of juvenile justice.

## ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՈՒՂԴԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՀԱՏԿԱՆԻԾ

### Սերգեյ ԱՌԱՔԵԼՅԱՆ

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի  
դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու*

### Գոռ ԱԼՈՅԱՆ

*Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն  
համայնքների դատախազության դատախազ,  
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

**Բ**ռնության տարածումը ժամանակա-կից առաջադեմ մարդկության առջև ծառայած կարևորագույն հիմնախնդիրներից է:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բռնությունը հասարակական կեցության անբաժան մասն է: Դրա ակունքները սկիզբ են առնում մարդկության ծագման առաջին իսկ օրերից և մշտապես ուղեկցում նրան: Բռնությունն ու դաժանությունը արդեն վաղուց կենսական տարբեր խնդիրներ լուծելու սովորական և գերադասելի միջոցներ են: Մեր օրերում բռնությունը ներթափանցել է հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները՝ ընտանեկան կենցաղային տարրական բռնարարներից մինչև գիտության և տեխնիկայի նվաճումներով ուղեկցվող զինված բռնությունը միջպետական հարաբերություններում: Ընդ որում, նշված ծայրահեղությունները որպես կանոն հանցավոր չեն համարվում: Դրանցից առաջինի դեպքում բռնությունը դատապարտվում է միայն բարոյական տեսանկյունից, իսկ երկրորդի դեպքում՝ արդարացվում քաղաքականապես:

Բացասական այդ երևույթի հասկացութային տարբեր բաղադրատարրերը (սոցիոլոգիական, կրոնական, բժշկական, սեռական, հանցավոր և այլն) արդեն վաղուց համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում են<sup>1</sup>: Այսպես, քրեական ի-

րավունքի տեսության մեջ «բռնություն» կատեգորիան ի սկզբանե կապել են «կատարող-տուժող» հարաբերությունները ներառող համակարգի հետ: Այդ կապակցությամբ արտահայտված մոտեցումները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի, որոնք մատնանշվել են դեռևս Ի.Յա. Ֆոյնիցկու աշխատություններում, որտեղ տվյալ բաժանումը նկարագրվում է հետևյալ կերպ. «... Արարքի գնահատումը կապվում է կամ տուժողի հետ, որի պարագայում հաշվի է առնվում այն արդյունքը, որին հանգեցրել է տվյալ արարքը, կամ հանցավորի հետ, անկախ տվյալ արարքի հետևանքներից: Նշված դեպքերից առաջինի կողմնակիցները ներկայացնում են, այսպես կոչված, «հարկադրանքի դպրոցը», որը դրվել է գերմանական իրավական ընտանիքի երկրների օրենսդրության հիմքում, իսկ երկրորդինը՝ «բռնության դպրոցը», որի վրա հիմնվել է ֆրանսիական իրավական ընտանիքի երկրների օրենսդրությունը»<sup>2</sup>:

Այսօր նույնպես քննարկվող երևույթի վերաբերյալ մոտեցումները միասնականությամբ աչքի չեն ընկնում: Մասնավորապես, որոշ հեղինակներ բռնության էությունը կապում են մեկ ուրիշի վարքագծի ազատությունը նպատակամղված սահմանափակելու, նրան որոշակի վարքագիծ դրսևորելուն հարկադրելու հետ: Այսպես, օրինակ՝ Ա.Ա. Հուսեյնովը բռնությունը նկարագրում է որպես առանձին մարդու կամ մարդկանց խմբի վրա արտաքին, ուժային ներգործություն, որն իրականացվում է այն անձանց կամքին հակառակ, որոնց նկատմամբ գործադրվում է: Բռնության նպատակը, ըստ հեղինակի, այդ անձին (անձանց) նշված ներգործությունը կիրառողի կամքին ենթարկելն է, նրանց ճնշելը, հնազանդեցնելը: Այլ կերպ ասած, շարունակում է

### **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Ա.Ա. Յուսեյնյովը, բռնությունը հասարակական հարաբերություն է, որի պարագայում որոշ անհատներ (մարդկանց խմբեր), արտաքին հարկադրանքի միջոցներ կիրառելով, ստիպում են իրենց ենթարկվել այլ անհատների (մարդկանց խմբերի)<sup>3</sup>:

Քննարկվող հարցին է անդրադարձել նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը: Այսպես, կազմակերպության «Բռնությունը և դրա ազդեցությունը առողջության վրա» խորագրով զեկույցում քննարկվող երևույթը սահմանվել է որպես «ֆիզիկական ուժի կամ իշխանության միտումնավոր գործադրում կամ դրա իրական սպառնալիք, որն ուղղված է մեկ այլ անձի, անձանց խմբի կամ համայնքի դեմ, որի արդյունք են հանդիսանում (կամ առկա է դրա հավանականության բարձր աստիճան) մարմնական վնասվածքները, մահը, հոգեբանական վնասվածքը, զարգացման շեղումները կամ այլ վնաս»<sup>4</sup>:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «բռնություն» եզրույթը լայն կիրառություն է ստացել հասարակական ամենատարբեր գիտություններում, ինչի պատճառով էապես բարդացել է դրա՝ որպես քրեաիրավական կատեգորիայի ընկալումը: Մասնավորապես, բռնությունը սահմանում են որպես հասարակության քաղաքական, սոցիալական, տնտեսական կազմակերպման տարր: Բոլոր դեպքերում, սակայն, ընդհանուրն այն է, որ «բռնություն» բառի բովանդակությունն են կազմում մի կողմից հասարակական հարաբերությունների որոշ սուբյեկտների հարկադրանք պարունակող վարքագիծը, որն ուղղված է այլ սուբյեկտների նկատմամբ և իրականացվում է վերջիններիս կամքին հակառակ, մյուս կողմից՝ այդ վարքագծի բոլոր հետևանքները<sup>5</sup>:

Այս առումով պետք է նշել, որ «բռնություն» և «հանցագործություն» հասկացությունները չի կարելի նույնացնել: Բռնու-

յան ամեն դրսևորում չէ, որ պարունակում է քրեական օրենսգրքի որևէ հանցակազմով նախատեսված հատկանիշներ: Ուստի բռնությամբ կատարվող հանցագործությունների մասին կարելի է խոսել միայն այն պարագայում, երբ բռնությունը նախատեսված է որպես հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ<sup>6</sup>:

ՀՀ քրեական գործող օրենսգրքի Հատուկ մասում «բռնություն» կատեգորիան նախատեսված է ավելի քան 50 հանցակազմերում: Ընդ որում, տվյալ դեպքում նկատի են առնվում ոչ միայն այն հանցակազմերը, որոնցում այդ հասկացությունն ուղղակիորեն մատնանշվում է, այլև որոնցում դրա փոխարեն օգտագործվում են այլ հասկացություններ, որոնք, քրեագետների կարծիքով, ենթադրում են բռնության գործադրում: Այդ կապակցությամբ Լ. Դ. Գաուխմանն արդարացիորեն նշում է, որ «մի շարք դեպքերում նախատեսված են գործողություններ, որոնք, ըստ էության, ենթադրում են բռնություն կամ կարող են արտահայտվել բռնության մեջ, ինչպես նաև նշվում են բռնության հետևանքները՝ մահ պատճառելու կամ մարմնական վնասվածքների տեսքով»<sup>7</sup>:

Հարկ ենք համարում նշել նաև, որ քրեական օրենքը չի բացահայտում «բռնություն» կատեգորիայի հասկացությունը: Այդ իսկ պատճառով տարբեր հեղինակներ յուրովի են մեկնաբանում այն: Մասնավորապես, քրեագետների մեծամասնությունը բավարարվում է հարկադրանքի տարրեր պարունակող գործողությունները և դրանց հետևանքները թվարկելով: Մյուսները փորձում են որոշակի պարզաբանումներ ներկայացնել, սակայն նրանց մոտեցումները հաճախ չեն համընկնում: Այսպես, Վ.Ի. Սիմոնովը քննարկվող կատեգորիայի կապակցությամբ արտահայտված ժամանակակից մոտեցումները բաժանում է չորս խմբի՝

1) տուժողի նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրում,

2) տուժողի մարմնական անձեռնմխե-

լիության վրա ցանկացած ներգործություն,

3) տուժողի վրա այնպիսի ներգործություն, որը կարող է արտահայտվել հարված (հարվածներ) հասցնելով, մարմնական վնասվածքներ կամ մահ պատճառելով,

4) մեկ այլ անձի օրգանիզմի վրա նրա կամքին հակառակ իրականացվող ցանկացած հակաիրավական ներգործություն<sup>8</sup>:

Առանձին դեպքերում «բռնություն» կատեգորիայի սահմանումները հիշեցնում են հանցավոր արարքի նկարագրություն: Այսպես, Պ.Ն. Նազարովը բռնությունը սահմանում է որպես «ֆիզիկական կամ հոգեկան ուժի գործադրմամբ և մեղավորությանը կատարված կամային, հանրորեն վտանգավոր, հակաիրավական արարք, որը ոտնձգում է քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների դեմ»<sup>9</sup>:

Ա.Ա. Պիոնտկովսկին այդ կապակցությամբ նշում է, որ «բռնություն գործադրելու էությունը մեկ այլ անձի որոշակի գործողություններ կատարելուն կամ չկատարելուն հարկադրելն է, ինչը հակասում է նրա ցանկություններին»<sup>10</sup>: Ջարգացնելով այդ միտքը՝ Վ.Դ. Մենշազինը նշում է, որ բռնություն ասելով պետք է հասկանալ տուժողի մարմնական անձեռնմխելիության դեմ ուղղված ցանկացած ներգործություն<sup>11</sup>: Միևնույն ժամանակ, Ռ.Դ. Շարապովի կարծիքով, «բռնություն» բառի իմաստն այն է, որ դրանով բացատրում են «որևէ անձի որոշակի վարքագիծը մեկ ուրիշի նկատմամբ՝ նրա կամքին (ցանկությանը) հակառակ»<sup>12</sup>: Իսկ Ա.Ն. Ռոմանկովը և Ն.Մ. Բուկակը համարում են, որ «բռնությունը, ինչպես և հարկադրանքը ուղղված են մեկ այլ անձի ազատ կամարտահայտության դեմ»<sup>13</sup>:

Հարկ ենք համարում նշել նաև, որ առանձին հեղինակներ նույնացնում են «բռնություն» և «հարկադրանք» հասկացությունները: Այսպես, օրինակ Ա.Ի Բոյկոյի կարծիքով, «բռնությունը (կամ հարկադրանքը) քաղաքացիների անձնական (ֆիզիկական կամ հոգեկան) անձեռնմխե-

լիության դեմ ուղղված ոտնձգություն է»<sup>14</sup>: Իսկ Օ.Ա. Բուրկինան և Ս.Պ. Դեմյանենկոն նշում են. «Բռնության էությունն այն է, որ մարդուն հարկադրում են վարվել իր ցանկություններին հակառակ»<sup>15</sup>:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ «բռնություն» կատեգորիայի էության բացահայտման գործում առկա են որոշ հանգամանքներ, որոնք հաճախ անուշադրության են մատնվում հետազոտողների կողմից: Մասնավորապես, «բռնություն» եզրույթն օգտագործվում է տարբեր երևույթների նկարագրության համար, ուստի այն պետք է հասկացվի առնվազն երկու իմաստով լայն (սոցիոլոգիական) և նեղ (քրեաիրավական): Այս առումով խնդիրն այն է, որ արդեն հարյուր տարուց ավելի տևող բանավեճերի ընթացքում տեղի է ունեցել համապատասխան հասկացությունների խառնաշփոթ, որը բանավիճող կողմերը հաճախ չեն նկատում: Քիչ չեն այն դեպքերը, երբ ընդդիմախոսները, օգտագործելով միևնույն եզրույթը, տարբեր իմաստներ են դնում դրա մեջ<sup>16</sup>:

Այսպիսով, վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ «բռնություն» և «հարկադրանք» հասկացությունների միջև առկա է ուղղակի փոխկապակցվածություն: Ընդ որում, դրանք երկուսն էլ օգտագործվում են ՀՀ քրեական գործող օրենսգրքում՝ չունենալով օրենսդրական համապատասխան սահմանումներ: Քր. օր.-ում այդ հասկացությունների օգտագործման տարբերակների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարբեր հանցակազմերում «բռնություն», «բռնության սպառնալիք» և «այլ սպառնալիքներ» կատեգորիաները մարդուն հարկադրելու ձևեր են, որոնք կիրառվում են հանցավոր որոշակի նպատակների հասնելու համար<sup>17</sup>: Բանն այն է, որ «հարկադրանքը» սահմանվում է որպես անձի կամքին հակառակ նրա նկատմամբ գործադրվող ներգործություն, որի նպատակն է ստիպել նրան վարվելու այս կամ այն կերպ<sup>18</sup>:

Միևնույն ժամանակ, պետք է համաձայ-

### **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Նել այն հեղինակներին, ովքեր նշում են, որ «բռնությունը հարկադրանքի միայն մի մասն է, դրա դրսևորման ձևերից մեկը: Ուստի «հարկադրանք» հասկացությունն ավելի լայն է, քան «բռնությունը»: Վերջինս միշտ անմիջականորեն ուղղված է որոշակի անձի դեմ՝ ներգործելով նրա կենսաբանական ենթակառուցվածքի վրա, մինչդեռ հարկադրանքը կարող է նաև այլ բնույթ կրել: Ընդ որում, հարկադրանքը՝ որպես արտաքին աշխարհի առարկաների վրա մարդու նպատակամղված ներգործության եղանակ, իր հերթին կարող է լինել էներգետիկ (ֆիզիկական ներգործություն) և տեղեկատվական (ինտելեկտուալ կամ գիտակցական ներգործություն) բնույթի: Այդ իսկ պատճառով բռնությունը և դրա գործադրման սպառնալիքը հարկադրանքի դրսևորման առավել վտանգավոր ձևեր են»<sup>19</sup>:

Այս առումով բավարար հիմքեր կան եզրակացնելու, որ մեկ այլ անձի կամքին հակառակ նրա նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելը, ինչպես նաև տարբեր միջոցներով նրան անգիտակից կամ անօգնական վիճակի մեջ դնելը կամ կախյալ վիճակում գտնվող անձի մասին հոգ տանելու պարտականությունները չկատարելը հանդես են գալիս որպես ֆիզիկական հարկադրանքի դրսևորումներ: Ինչ վերաբերում է հոգեկան հարկադրանքին, ապա դրա դրսևորումներ պետք է համարել ֆիզիկական ուժ գործադրելու, առողջությանը վնաս պատճառելու, սպանության, ինչպես նաև տուժողին վախեցնելու հատկություն պարունակող այլ բնույթի (օրինակ՝ գույք ոչնչացնելու կամ վնասելու, որոշակի իրավունքներ կամ ազատություններ սահմանափակելու) սպառնալիքները: Բնականաբար նշված բոլոր դեպքերում նկատի են առնվում ներգործության ոչ իրավաչափ դրսևորումները<sup>20</sup>:

Հարկ ենք համարում նշել նաև, որ, ՀՀ

քրեական գործող օրենսգրքի դրույթներին համապատասխան, «բռնությունը» և դրա «գործադրման սպառնալիքը» հասկացվում են որպես հարկադրանքի առավել ագրեսիվ, վտանգավոր դրսևորումներ: Մինչդեռ հարկադրանքի այնպիսի ձևեր, ինչպիսիք են անձին անգիտակից կամ անօգնական վիճակի մեջ դնելու նպատակով նրան գաղտնի կերպով տարատեսակ նյութերով արբեցնելը կամ կախյալ վիճակում գտնվող անձի մասին հոգ տանելու պարտականությունները չկատարելը և այլն, դժվար է դասել բռնությանը կատարվող արարքների շարքը: Այդ իմաստով ստացվում է, որ քր. օր.-ով նախատեսված մի շարք հանցակազմերի առումով (այդ թվում՝ ավազակության, կողոպուտի, շորթման, առանց հափշտակելու նպատակի ուրիշի տրանսպորտային միջոցը փախցնելու համար պատասխանատվություն նախատեսողների), որտեղ բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը նախատեսված է որպես հանցագործության հատկանիշներ, հարկադրանքի վերոնշյալ ձևերը չեն կարող իրավաբանական նշանակություն ունենալ և ազդել արարքի որակման վրա:

Նման վիճակը, մեր կարծիքով, անընդունելի է: Հետևաբար կարծում ենք՝ անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ, որոնք կվերացնեն օրենքում առկա հիշատակված բացը: Մասնավորապես, օրենսդրորեն պետք է սահմանել, որ համապատասխան հանցագործությունների հատկանիշ է համարվում նաև մարդու օրգանիզմ նրա կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով, որոշակի նյութեր ներարկելով կամ հիպնոս կիրառելով նրան անգիտակից կամ անօգնական վիճակի մեջ դնելու եղանակը:

Այսպիսով, բռնությունը հարկադրանքի դրսևորման ձևերից մեկն է: Հետևաբար առանց «հարկադրանք» կատեգորիայի հասկացությունը սահմանելու և դրսևորման հնարավոր ձևերը պարզաբանելու հնարավոր չէ բացահայտել նաև «բռնություն» կա-



տեգորիայի բովանդակությունը:

Մասնավորապես, հարկադրանքը մեկ այլ անձի կամքին հակառակ նրան ենթարկեցնելն է: Այն կարող է լինել ինչպես ոչ իրավաչափ, այնպես էլ իրավաչափ, ինչպես հանրորեն վտանգավոր, այնպես էլ հանրորեն օգտակար, ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան: Ֆիզիկական հարկադրանքի դրսևորման ձևերն են՝

1) մեկ ուրիշի ֆիզիկական անձեռնմխելիության խախտմանն ուղղված ուժային ներգործությունը,

2) տուժողի օրգանիզմ ալկոհոլ, թմրանյութ, ինչպես նաև հոգեմետ, ուժեղ ներգործող կամ թունավոր նյութեր ներարկելու կամ հիպնոսի կիրառմամբ նրան անգիտակից կամ անօգնական վիճակի մեջ դնելը,

3) կախյալ վիճակում գտնվող անձի մասին հոգ տանելու պարտականությունները չկատարելով՝ նրա կյանքը կամ առողջությունը վտանգելը:

Ուժի գործադրումը ֆիզիկական հարկադրանքի առավել տարածված դրսևորումն է, որը, քրեական գործերի ուսումնասիրության մեր տվյալներով, կիրառվում է բռնությամբ կատարվող հանցագործությունների 90%-ից ավելի դեպքերում: Հարկադրանքի տվյալ ձևի առանձնահատուկ դրսևորումներ են տուժողի ֆիզիկական անձեռնմխելիության խախտմանն ուղղված՝ զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործվող այլ առարկաների, առավել վտանգի աղբյուրների (վտանգավոր կենդանիների, ավտոմեքենայի կամ տրանսպորտային այլ միջոցի և այլն) գործադրման դեպքերը<sup>21</sup>:

Վերը նշված եղանակներով անգիտակից կամ անօգնական վիճակի մեջ դնելը մեկ այլ անձի վարքագիծը կառավարելու խիստ ազդեցիկ միջոց է, որը, մեր կարծիքով, ֆիզիկական հարկադրանքի առավել վտանգավոր դրսևորումներից մեկն է: Հիշատակված նյութերի կամ առարկաների օգտագործմամբ կամ հիպնոսի կիրառմամբ մարդու օրգանիզմին կարող է պատճառվել ոչ պակաս (երբեմն՝ նաև ավելի

մեծ) վնաս, ինչ որ զենքի գործադրման պարագայում<sup>22</sup>: Հետևաբար, ֆիզիկական հարկադրանքի նշված ձևերը ևս պետք է համարվեն սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների եղանակներ: Թերևս առավել նպատակահարմար է դրանք նախատեսել ինքնուրույն հանցակազմերով:

Իրենից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի կյանքի և առողջության ապահովման պարտականությունները չկատարելով ևս հանցավորը կարող է հարկադրել տուժողին որոշակի վարքագիծ դրսևորելուն<sup>23</sup>: Ուստի ֆիզիկական հարկադրանքի տվյալ ձևը նույնպես, մեր կարծիքով, պետք է նախատեսվի ՀՀ քր. օր.-ով որպես թե՛ մարդու և թե՛ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների եղանակ:

Ինչ վերաբերում է մարդու ազատ տեղաշարժվելու հնարավորությունը սահմանափակելուն, ապա պետք է նշել, որ այն ինքնին, առանց ֆիզիկական ուժ գործադրելու հետ կապված ներգործության (օրինակ՝ դուռը կողպելով, խաբելով և այլն), չի կարող համարվել ֆիզիկական հարկադրանքի տարատեսակ: Բանն այն է, որ տվյալ արարքը կապված չէ մարդու մարմնի վրա ուժային ներգործության հետ<sup>24</sup>: Հետևաբար այն չի կարող համարվել նաև բռնությամբ կատարվող հանցագործության (այդ թվում՝ սեփականության դեմ ուղղված) հատկանիշ:

Հոգեկան հարկադրանքը ներառում է ինչպես ֆիզիկական հարկադրանքի վերը նշված դրսևորումների գործադրման, այնպես էլ տուժողի կամ մեկ ուրիշի այլ բարիքներին վնաս պատճառելու սպառնալիքները, որոնք առաջացնում են վախի, տագնապի, մտահոգության և նման այլ զգացումներ: Այլ կերպ ասած՝ ցանկացած սպառնալիքի էությունը հենց նշված զգացումներն առաջացնելն է, իսկ դրանց օբյեկտը մարդու հոգեկան անձեռնմխելիությունն է<sup>25</sup>:

Այսպիսով, սեփականության դեմ ուղղ-

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ված բռնությամբ կատարվող հանցագործությունների եղանակ պետք է համարել ոչ միայն ֆիզիկական ուժի գործադրումը կամ դրա գործադրման սպառնալիքը, այլև տուժողի կամքին հակառակ նրա օրգանիզմ

ալկոհոլ, թմրանյութ, հոգեմետ, ուժեղ ներգործող կամ թունավոր նյութեր ներարկելու կամ հիպնոսի կիրառմամբ նրան անգիտակից կամ անօգնական վիճակի մեջ դնելը, ինչպես նաև կախյալ վիճակում գտնվող անձի մասին հոգ տանելու պարտականությունները չկատարելով՝ նրա կյանքը կամ առողջությունը վտանգելը կամ նման առարքներ կատարելու սպառնալիքները:

<sup>1</sup> Տե՛ս Насилие и его влияние на здоровье: доклад о ситуации в мире / под ред. Этьенна Г. Круга и др.; пер. с англ. М., 2003, էջ 5, Гуггенбюль А. Зловещее очарование насилия. Профилактика детской агрессивности и жестокости и борьба с ними / пер. с немец. Н. Скородума, послесл. В. Зелинского. СПб., 2000, էջ 7, Тевлюкова О.Ю. Насилие как феномен социальной организации: опыт теоретико-методологического анализа: дис. ... канд. социолог. наук. Новосибирск, 2005, էջ 13 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Фойницкий И.Я. Курс Уголовного права. Часть Особенная: Посягательства на личность и имущество. СПб., 1890, էջ 86:

<sup>3</sup> Տե՛ս Гусейнов А.А. Понятие насилия и ненасиления // Вопросы философии, 1994, N 6, էջ 36, ինչպես նաև՝ Гусейнов А.А. Этика ненасиления // Вопросы философии, 1992, N 3, էջ 79:

<sup>4</sup> Տե՛ս Насилие и его влияние на здоровье. Доклад о ситуации в мире / Под ред. Этьенна Г. Круга и др./ Пер. с англ. М: Издательство «Весь Мир», 2003, էջ 5:

<sup>5</sup> Տե՛ս Тевлюкова О.Ю. Насилие как феномен социальной организации: опыт теоретико-методологического анализа, էջ 13:

<sup>6</sup> Տե՛ս Бойцов А.И. Преступления против собственности. СПб., 2002, էջ 428, Иванцова Н.В. Объективные признаки уголовно наказуемого насилия // Сборник научных трудов. М., 2001, Вып. 2, էջ 96, Дагель П.С. Проблемы вины в советском уголовном праве // Ученые записки ДВГУ, 1968, Вып. 21, էջ 93, Шарапов Р.Д. Физическое насилие в уголовном праве. СПб., 2001, էջ 19, Иващенко А.В. Насилие и

уголовный закон // Социально-правовые проблемы борьбы с насилием: межвуз. сб. науч. тр. Омск, 1996, էջ 28, Гаухман Л.Д. Борьба с насильственными посягательствами. М., 1969, էջ 7, Сердюк Л.В. Насильники и их жертвы: криминологическое и уголовно-правовое исследование. Уфа, 2002, էջ 16, Романков А.Н., Букаев Н.М. Насилие как способ совершения преступлений против собственности: монография. Сургут, 2001, էջեր 21-22, Иващенко А.В. Социально-правовая природа насилия // Социально-правовые аспекты противодействия насилию. Омск, 1999, էջ 6:

<sup>7</sup> Տե՛ս Гаухман Л.Д. Насилие как средство совершения преступления. М., 1974, էջ 74:

<sup>8</sup> Տե՛ս Симонов В.И. Уголовно-правовая характеристика физического насилия. Свердловск, 1972, էջ 16:

<sup>9</sup> Տե՛ս Назаров П.Н. К вопросу о насилии при грабеже и разбое // Труды Киевской ВШ МООП СССР. Киев, 1968. Вып. 1, էջ 91:

<sup>10</sup> Տե՛ս Пионтковский А.А. Преступления против личности. – М., 1938, էջ 88:

<sup>11</sup> Տե՛ս Пионтковский А.А., Меньшагин В.Д. Курс советского уголовного права: (Особенная часть). М., 1955. Т. 1, էջ 722:

<sup>12</sup> Տե՛ս Шарапов Р.Д. Физическое насилие в уголовном праве. СПб., 2001, էջ 21:

<sup>13</sup> Տե՛ս Романков А.Н., Букаев Н.М. Насилие как способ совершения преступлений против собственности: монография. Сургут, 2001, էջեր 21-22:

<sup>14</sup> Տե՛ս Комментарий к УК Российской Федерации / под ред. А.И. Бойко. – Ростов н/Д, 1996, էջ 278.

- <sup>15</sup> St'u Буркина О.А., Демьяненко С.П. Понимание насилия в философии и праве // Онтология и аксиология права: тезисы докладов и сообщений Второй междунар. науч. конф. (октябрь 2005 г.). – Омск, 2005, тэ 122:
- <sup>16</sup> St'u Токарчук Р.Е. Насилие как составообразующий признак хищений: вопросы уголовной ответственности: Диссерт... канд. юрид. наук. Омск, 2008, тэтр 38-39:
- <sup>17</sup> St'u Шал Шаратов Р.Д. Физическое насилие в уголовном праве, тэтр 233, 270, Панов Н.И. Квалификация насильственных преступлений. – Харьков, 1986, тэ 26, Симонов В.И. Уголовно-правовая характеристика физического насилия, тэ 3:
- <sup>18</sup> St'u, орһушл` Романков А.Н., Букаев Н.М. Насилие как способ совершения преступлений против собственности, тэ 21, Неклюдов Н.А. Руководство к Особенной части русского уголовного права. – СПб., 1876, тэ 631:
- <sup>19</sup> St'u Симонов В.И. Уголовно-правовая характеристика физического насилия, тэ 4, Плохова В.И. Криминологическая и правовая обоснованность составов ненасильственных преступлений против собственности: автореф. дис... д-ра юрид. наук. – Екатеринбург, 2003, тэтр 39-40, Жордания И.Ш. Структура и правовое значение способа совершения преступления. – Тбилиси, 1977, тэ 96; Бойцов А.И. Преступления против собственности, тэ 432:
- <sup>20</sup> St'u Шал Токарчук Р.Е. Насилие как составообразующий признак хищений: вопросы уголовной ответственности, тэтр 41-42:
- <sup>21</sup> St'u Шал Панов Н.И. Квалификация преступлений, совершаемых путем применения физического насилия // Проблемы дальнейшего укрепления социалистической законности в деятельности органов внутренних дел: межвуз. сб. науч. тр. Киев, 1986, тэ 31, Симонов В.И. К вопросу о понятии физического насилия // Сборник аспирантских работ. Свердловск, 1971, Вып. 13, тэ 236, Казаченко И.Я., Сабиров Р.Д. Уголовно-правовое понятие насилия // Уголовный закон и совершенствование мер борьбы с преступностью: межвуз. сб. науч. тр. Свердловск, 1981, тэ 20:
- <sup>22</sup> St'u Шал Симонов В.И. Как следует квалифицировать дачу одурманивающих веществ // Сборник аспирантских работ. Свердловск, 1971. Вып. 13, тэ 24, Гаухман Л.Д. Борьба с насильственными посягательствами, тэ 28:
- <sup>23</sup> St'u Шал Никитин Е.В. Корыстно-насильственные преступления против собственности: дис... канд. юрид. наук. – Омск, 2002, тэ 52, Ткаченко В.И. Насилие, не опасное и опасное для жизни и здоровья, как уголовно-правовая категория // Гос-во и право, 1992, N 12, тэ 80:
- <sup>24</sup> St'u Шал Гаухман Л.Д. Борьба с насильственными посягательствами, тэтр 13-14, Симонов В.И. К вопросу о незаконном лишении свободы // Уголовный закон и совершенствование мер борьбы с преступностью: межвуз. сб. науч. раб. – Свердловск, 1981, тэ 74:
- <sup>25</sup> St'u Шал Антонян Ю.М. Преступная жестокость. – М., 1994, тэтр 54-55:

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ****THE VIOLENCE AS AN ATTRIBUTE OF  
A CRIME AGAINST PROPERTY****Sergey ARAKELYAN**

*Docent of the YSU Department of Criminal Law,  
Candidate of Legal Sciences*

**Gor ALOYAN**

*Prosecutor of the Prosecutor's office of Arabkir  
and Kanaker-Zeitoun Communities,  
Aspirant (Applicant) of the YSU  
Department of Criminal Law*

---

Issues related to the understanding of violence as an attribute of a crime against property are discussed in this article.

In particular, it is noted, that the “violence” and “crime” concepts can not be identified. Not all manifestations of violence can be recognized as a violent crime. Therefore, the offense may be only those

acts of violence, which are provided in the Criminal Code as an objective feature of crime.

Besides, the authors mentioned, that in the current Criminal Code of the Republic of Armenia the category “violence” is provided in more than 50 articles, including in 4 articles providing responsibility for crimes against property. Moreover, in this case they mean not only those articles, in which the concept of violence is directly provided, but in which the lawmaker using the concepts implying violence.

In the final part of the article is mentioned, that as a violent crimes against property method should be considered not only physical force, or the threat of its use, but also injecting into the victim's body, against his will, an alcohol, drugs or toxic substances, or the threats of these acts.

---

## ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՅԱԿԱԶՄԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### Վազգեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության թիվ 3-րդ բաժնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու*

Մաքսանենգության հանցակազմը բովանդակային առումով առնչվում է ամենատարբեր ոլորտներին՝ տնտեսությունից մինչև թմրամիջոցների, զենքի, զինամթերքի, մշակութային արժեքների ապօրինի շրջանառություն: Մաքսանենգության հանցակազմը նախատեսված է ՀՀ քր. օր.-ի 215 հոդվածով, որը զետեղված է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գլխում: Սակայն մաքսանենգությունն ինքնին երկօբյեկտ հանցագործություն է, իսկ հանցակազմի երկրորդ նասով նախատեսված որակյալ տեսակի անմիջական օբյեկտն առավելապես հասարակական անվտանգությունն ու բնակչության առողջությունն են, քան թե տնտեսական իրավահարաբերությունները: Այս իմաստով մաքսանենգությունն ունի բարդ օրենսդրական կառուցվածք և դրանով տարբերվում է մյուս տնտեսական հանցագործություններից: Բացի այդ, կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ քննարկվող հանցատեսակն առնչվում է ինչպես ներքին շուկային, այնպես էլ արտաքին տնտեսական գործունեությանը: ՀՀ քր. օր.-ի 215 հոդվածը վերջին անգամ բարեփոխման ենթարկվեց 2011 թ. հունիս ամսին, որով պատժի առավելագույն՝ վեց տարի պատժաչափը իջեցվեց 5 տարվա, գույքի (մաքսանենգության առարկայի) բռագրավումը դարձավ պարտադիր յուրաքանչյուր դեպքում՝ անկախ այն բանից՝ մաքսանենգության առարկան առկա է, թե ոչ: Երբ առկա չէ մաքսանենգության առարկա գույքը, ապա

պարտադիր բռնագրավման է ենթակա այդ գույքի արժեքը: Մասնավորապես, ըստ նախկին օրենսդրության, երբ անձը թաքցրած առարկայի մաքսանենգություն էր կատարում, որը հայտնաբերվում և նրաից վերցվում էր, այն ճանաչվում էր իրեղեն ապացույց, և դատարանի կողմից անձը մեղավոր ճանաչվելու դեպքում մշված գույքը անխուսափելիորեն բռնագրավվում էր: Իսկ այն դեպքերում, երբ անձի կատարած մաքսանենգությունը ի հայտ էր գալիս, օրինակ, հետբացթողումային հսկողության ժամանակ, երբ փաստափոթերը խաբեությամբ օգտագործելու եղանակով մաքսանենգության դեպք էր հայտնաբերվում (ենթադրենք՝ փոխված էր լինում հաշիվ-ապրանքագիրը), այս պարագայում ապրանքները վաղուց արդեն իրացված էին լինում ապրանքային շուկայում, և դատարանին ոչինչ չէր մնում բռնագրավման համար, քանի որ հոդվածի իմաստով գույք էր հանդիսանում միայն մաքսանենգության առարկան: Այժմ խնդիրը լուծված է, քանի որ բերված վերջին օրինակի պարագայում անձի գույքի վրա բռնագանձում կատարած մաքսանենգ առարկաների արժեքի չափով: Այս բարեփոխմամբ լուծվեց երկակի ստանդարտների բացառման խնդիրը: Նշված փոփոխությամբ այժմ մաքսանենգություն է համարվում նաև ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը կամ ոչ իր անվամբ հայտարարագրելը:

Սակայն օրենսդրական վերջին փոփոխություններից հետո էլ վերջնականապես հնարավոր չէղավ խուսափելու երկակի ստանդարտների կիրառման հնարավորությունից: Մասնավորապես, հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արարքը համարվում է խոշոր չափերով կատարված, եթե տեղափոխված ապրանքների կամ առարկաների

## **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

արժեքը գերազանցում է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը (մեկ միլիոն դրամ)՝ բացառությամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ տեղափոխելու դեպքի, երբ խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը) (երկու հարյուր հազար դրամ): 33 քր. օր.-ի 215 հոդվածի 5-րդ մասում նշված արժեքը տարբեր մեկնաբանությունների տեղիք է տալիս: Այսպիսի ձևակերպմամբ պարզ չի դառնում խոսքը մաքսային արժեքի<sup>6</sup>, թե՞ շուկայական արժեքի մասին է:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում մաքսանենգության հանցակազմի ապաքրեականացման հարցը այն հիմնավորմամբ, որ մաքսանենգության ոչ որակյալ տեսակի կատարման պատճառով չեն վճարվում սահմանված հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները: Չնայած մաքսանենգության հանցակազմը ձևական է և որևէ հետևանք չի պահանջվում, այնուամենայնիվ հանցակազմի հանրային վտանգավորության առկայության համար պահանջվում է մաքսանենգ ապրանքների համար սահմանված մաքսային վճարների չվճարում, հակառակ պարագայում արաքը հանրորեն վտանգավոր պարզապես չի կարող համարվել և չի կարող դիտվել իբրև հանցագործություն: Նշված հարցի ճիշտ լուծման համար այն պետք է ուսումնասիրվի նաև տնտեսագիտական հարթությունում: Ուստի մաքսանենգության ապաքրեականացման կամ քրեականացման հարցը պետք է լուծում ստանա՝ միայն հաշվի առնելով կոնկրետ պետության տնտեսական առանձնահատկություններն ու իրողությունները, մակրոտնտեսական ցուցանիշները: Նշված հիմնախնդիրը

նպատակահարմար է վերլուծել ՌԴ քրեական օրենսդրության հետ համադրելու եղանակով, քանի որ հենց ՌԴ-ում է, որ 2012թ. դեկտեմբերի 10-ից ընդհանրապես հրաժարվել են քրեական օրենսգրքում ունենալ նշված հանցատեսակը իհարկե միայն լայն շրջանառության ապրանքների մասով: Մաքսանենգության սովորական (ոչ որակյալ տեսակի) հանցակազմը նախատեսված է եղել ՌԴ քրեական օրենսգրքի 188 հոդվածով, որը ներկայումս չի գործում: Օրենսդրական այս նախաձեռնության հիմնավորումներից ամենազխաժողովրդայն է, որ լայն սպառման ապրանքների առանց մաքսազերծման իրացումն ի վերջո հանգեցնում է հարկերից խուսափելուն, և այդպիսի արարքների մաքսանենգությունը պետք է դիտել որպես հարկերից չարամտորեն խուսափուելու եղանակ, այլ ոչ թե առանձին հանցանք՝ ի դեմս մաքսանենգության: ՌԴ քրեական օրենսգրքի 226.1 հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում զինվորական և մշակութային նշանակության մեծաթիվ ապրանքների մաքսանենգության համար: 229.1 հոդվածով պատասխանատվություն է նախատեսված նաև թմրամիջոցների և հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների մաքսանենգության համար: Այսինքն՝ սրանցից բացի, հիմնական ապրաքաշրջանառության առարկա հանդիսացող ապրանքատեսակների առանց մաքսային հսկողության փոխադրումը մաքսային սահմանով չի առաջացնում քրեական պատասխանատվություն, եթե դրանց իրացման հետևանքով չեն առաջանում թաքցված հարկեր:

Մաքսանենգության դեմ արդյունավետ պայքար մղելու կարևորությունը չափազանց մեծ է առողջ տնտեսություն ունենալու համար մասնավորապես մեզանում, քանի որ 33 պետական բյուջեի ավելի քան 1/3-ը, շուրջ 40 տոկոսը, կազմում են մաքսային մուտքերը: Մաքսանենգության հանցակազմը սերտորեն կապված է հարկերից չարամտորեն խուսափելու հանցակազմի հետ: Երբ ուսումնասիրում ենք վիճակագ-

րական տվյալները, հետևյալ պատկերն ենք ստանում. Հայաստանի Հանրապետությունում 2012թ. ընթացքում ներմուծումը կազմել է համախառն ներքին արդյունքի 33.5 տոկոսը կամ շուրջ 3.269 միլիարդ ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, իսկ արտահանումը՝ 12.9 տոկոսը կամ շուրջ 1.495 միլիարդ ԱՄՆ դոլարին համարժեք (Տվյալները վերցված են ԱՄՆ կենտրոնական հետախուզական գործակալության պաշտոնական ինտերնետ կայքից՝ [www.cia.gov/factbook/](http://www.cia.gov/factbook/)): Ռուսաստանի Պաշտպանությունում նույն ժամանակահատվածում ներմուծումը կազմել է երկրի համախառն ներքին արդյունքի 18.4 տոկոսը կամ շուրջ 335.4 միլիարդ ԱՄՆ դոլարին համարժեք, իսկ արտահանումը՝ 27.8 տոկոսը կամ շուրջ 530.7 միլիարդ ԱՄՆ դոլարին համարժեք (Տվյալները վերցված են ԱՄՆ կենտրոնական հետախուզական գործակալության պաշտոնական ինտերնետ կայքից՝ [www.cia.gov/factbook/](http://www.cia.gov/factbook/)): Ինչպես տեսնում ենք, ՌԴ-ում հակառակ պատկերն է, այսինքն՝ արտահանման ցուցանիշը գերազանցում է ներմուծման ցուցանիշին: Հայտնի է, որ գրեթե բոլոր պետությունները խթանում են արտահանումը, և արտահանվող ապրանքատեսակների համար նախատեսված են զրոյական դրույքաչափեր: Ներմուծման ժամանակ գանձվում են օրենքով սահմանված մաքսային վճարները՝ ԱԱՀ, մասատուրք, ակցիզային հարկ և այլն, որոնց մի մասը՝ որպես վերջնական հարկային պարտավորություն, իսկ մի մասը, օրինակ՝ ԱԱՀ-ն, որոշ դեպքերում հետագայում հաշվանցվում է որպես հարկային վերջնական պարտավորություն: Այսպիսի վիճակագրության պարագայում մաքսանենգության հանցակազմի ապարեականացումը ՀՀ-ում անխուսափելիորեն կհանգեցնի ֆիսկալ քաղաքականության գրեթե լիակատար ձախողման, անմիջական պատճառական կապով դա կհանգեցնի բյուջետային մուտքերի թերակատարման, կավելանան նենդունման սովետրային ծավալները, մրցակցությունից աս-

տիճանաբար դուրս կմղվեն տեղական արտադրատեսակները, շուկան կհամալրվի հիմնականում անորակ ապրանքներով: Կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում մաքսանենգության հանցակազմի անհրաժեշտությունը նախ և առաջ պայմանավորված է առողջ տնտեսություն ունենալու հրամայականով:

Պետք է նշել, որ օրենսդրական փոփոխությունները ոչ բոլոր դեպքերում են ճիշտ: Մասնավորապես՝ ՀՀ քր. օր.-ի 215 հոդվածի 2-րդ մասով, ի թիվս շրջանառությունն արգելված կամ սահմանափակված այլ ապրանքների կամ առարկաների, պատասխանատվություն էր նախատեսված նաև ռազմամթերք հանդիսացող առարկաների մաքսանենգության համար: Գործող օրենքով ռազմամթերքը չի նախատեսվում հոդվածի դիսպոզիցիայում. դրա փոխարեն նախատեսված է ռազմական նշանակության արտադրանքը, ինչպես նաև նման արտադրանք չհամարվող պայթուցիկ նյութերը կամ սարքերը, զենքը՝ բացի ողորկափող որսորդական հրազենից և դրա փամփուշտներից: Առաջին հայացքից նման ձևակերպումով կարծես թե միայն բացառություն է նախատեսված ողորկափող որսորդական հրազենի փամփուշտների համար, սակայն ակոսավոր որսորդական հրազենի փամփուշտների մաքսանենգության համար նույնպես հնարավոր չէ անձին քրեական պատասխանատվության ենթարկել քննարկվող հոդվածի 2-րդ մասով: Բանն այն է, որ այդպիսի փամփուշտները թեպետ հանդիսանում են ռազմամթերք, սակայն դրանք ոչ թե ռազմական նշանակության արտադրանք են, այլ որսորդական նշանակության: Նշված հանգամանքը պարզվում և արձանագրվում է փորձագետի համապատասխան եզրակացությամբ: Փամփուշտները չեն մտնում նաև զենքի հասկացության մեջ: Արդյունքում, «ռազմամթերք» տերմինը դիսպոզիցիայում չնախատեսելով, հանցակազմի շրջանակները նեղացվում են, քանի որ ռազմական նշանակության յուրաքանչյուր արտադրանք

### **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ռազմամթերք է, սակայն ոչ բոլոր ռազմամթերքներն են ռազմական նշանակության:

Ինչ վերաբերում է մշակութային արժեքների, ապա դրա առանձնահատկությունը այն է՝ արդյոք դրանց տեղափոխման համար հատուկ կանոններ սահմանված են, թե ոչ, քանի որ ինչպես 215 հոդվածի 1-ին, այնպես էլ 2-րդ մասերով սահմանված է մշակութային արժեքների մաքսանենգությունը: Ընդ որում, իրերը մշակութային արժեք են, թե՞ ոչ, հավաստվում է բացառապես փորձագետի եզրակացությամբ: Իսկ տեղափոխման համար հատուկ կանոնները սահմանվում են համապատասխան ենթաօրենսդրական ակտերով: Այս հանգամանքներով պայամանվորված էլ որոշվում է մշակութային արժեքների մաքսանենգության որակման հարցը:

Ամփոփելով քննարկվող հանգամանք-

ները՝ կարելի է նշել, որ Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրողությունների ներկա պայմաններում անթույլատրելի է մաքսանենգության հանցակազմի ապաքրեականացումը: Բացի այդ՝ անհրաժեշտ է ՀՀ քր. օր.-ի 215 հոդվածի 5-րդ մասում «արժեքը» բառից առաջ ավելացնել «մաքսային» տերմինը, քանի որ ապրանքները մաքսային սահմանով տեղափոխելու ընթացքում դեռևս չեն գտնվում ապրանքային շուկայում, և դրանց օրինական մաքսազերծման դեպքում անձը մաքսային վճարումները կատարում է հիմք ընդունելով ապրանքների մաքսային արժեքը, հետևաբար մաքսային արժեքը որոշելը և դրանով առաջնորդվելը ճիշտ է: Որպես մաքսանենգության ծանրացնող հանգամանք «ռազմական նշանակության արտադրանք» եզրույթի փոխարեն պետք է նախատեսել «ռազմամթերք» տերմինը, քանի որ այն առավել լայն հասկացություն է:



---

## LEGISLATIVE CORE PROBLEMS OF SMUGGLING CORPUS DELICTI IN THE REPUBLIC OF ARMENIA

**Vazgen SHAHNAZARYAN**

*Head of the 3-rd division of the Investigation  
Department of the RA State Revenue  
Committee, Candidate of Law Sciences*

---

**T**he current article dwells on some core problems of smuggling crime.

The author has particularly referred to the structure of smuggling, mentioning that it is a double-object crime. Smuggling features have been analyzed which underline the differences between other crimes directed to economic activities. The article includes a comparative analysis of the referred crime between Russian Federation Criminal Code, as in the Russian Federation they have decriminalized the poor quality type of smuggling. The author has arrived to the conclusion that the decriminalization of the crime in the Republic of Armenia is inevitable doomed to bringing to an almost complete failure of fis-

cal policy, which shall on immediate causative basis culminate in the under-fulfillment of budget inflows: there shall be an increase in shadow volumes of importation, domestic products shall gradually be pushed out of competitiveness, the market shall be basically replenished with products of poor quality.

It has as well been suggested that the term "customs" should be added before the word "value" in the 5<sup>th</sup> part of article 215 of the RA Criminal Code, as the goods, while being transported through customs boarder, are not yet in the product market, and in the case of legal clearance of the latters one performs the customs payments on the basis of the customs value of the product, hence it is correct to determine the customs value and be guided by it.

As a smuggling compounding feature, instead of the term "product of military significance" it was put forward to consider the term "ammunition" for it implies an ever broader circle of conception.

---

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ,  
ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Արա ՏԻԴԱՆՅԱԼ**

*ՀՀ-ում ինտերպոլի ազգային կենտրոնի բյուրոյի պետ, «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի ասպիրանտ*

**Պ**ատժի և պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը պետության հիմնական և կարևորագույն սկզբունքներից է: Այն սահմանված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 7-ով, որի հիմնական էությունը այն է, որ յուրաքանչյուր անձ, ով կատարել է հանրորեն վտանգավոր և քրեօրեն պատժելի արարք, կրի օրենքով սահմանված համարժեք պատիժ:

Սակայն, հանցագործություն կատարած անձինք հանցագործությունը կատարելուց հետո հիմնականում փորձում են խուսափել պատասխանատվությունից՝ թաքնվելով իրավապահ մարմիններից: Օգտվելով պետությունների սահմանների թափանցիկությունից, նորագույն տեխնիկայի օգտագործմամբ կեղծ փաստաթղթերի պատրաստման, ուրիշի անհատական տվյալների յուրացման (fishing) և այլ մեթոդների կիրառման հնարավորությունից՝ հանցագործություն կատարած անձիք շատ հեշտությամբ կարողանում են մեկնել այն երկրներից, որտեղ կատարել են հանցագործությունը՝ հուսալով խուսափել պատասխանատվությունից: Հանցավոր խմբավորումներն առավել ճկուն են գործում՝ երբեմն միտումնավոր խախտելով երկրների պետական սահմանները իրենց հանցավոր գործունեության իրականացման համար: Մի շարք հանցագործություններ, ինչպիսիք են օրինակ՝ տնտեսական,

համակարգչային, էկոլոգիական, կարող են ունենալ անդրսահմանային հետևանքներ, երբ հանցագործություն կատարած անձը նույնիսկ չի լքում իր երկիրը:

Գիտակցելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ միջազգային հանցագործությունների, հատկապես ահաբեկչական և անդրազգային հանցավոր խմբավորումների դեմ պայքարն արդյունավետ իրականացնել հնարավոր է միայն համատեղ ջանքերով, միջազգային հանրությունը և հատկապես իրավապահ մարմինները ձեռնամուխ են եղել պայքարի նոր մեթոդների մշակմանը և արդեն իսկ գործողների կատարելագործմանը:

Այս առումով պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի ի կատարածելու կարևորագույն մեթոդներից մեկը հանցանք կատարած անձանց հանձնման ինստիտուտն է: Վերջինիս կարևորությունը փաստում է նաև այն հանգամանքը, որ տվյալ ոլորտը կարգավորվում է իրավունքի տարբեր ճյուղերով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քրեական օրենսգրքով, քրեական դատավարության օրենսգրքով, մի շարք միջազգային կոնվենցիաներով, երկկողմ և բազմակողմ պայմանագրերով, որոնց միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Հանցանք կատարած անձանց հանձնման ինստիտուտի բուն էությունն առավել պարզ հասկանալու համար նախ անհրաժեշտ է պարզաբանել դրա անվանումը: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 16-ը կոչվում է «Հանցանք կատարած անձանց հանձնելը», որը, համաձայն հոդվածի մաս 2-ի, վերաբերում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած, Հայաս-

տանի Յանրապետությունում գտնվող օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու կամ պատիժը կրելու համար օտարերկրյա պետությանը հանձնելուն: Այսինքն խոսքը երկու իրավական կարգավիճակ ունեցող անձանց հանձնման մասին է, որը հետապնդում է երկու նպատակ՝ քրեական պատասխանատվության ենթարկել, պատիժը կրել:

Գործնականում հիմնականում կիրառվում է «էքստրադիցիա» տերմինը, իսկ վերջին շրջանում առավել շատ գործածվում է «արտահանձնում» բառը:

Արտասահմանյան երկրների օրենսդրություններում հանցանք կատարած անձանց հանձնման ինստիտուտը հայտնի է ընդամենը մեկ տերմինով՝ extradition: Այն ծագել է լատիներեն extradere կամ extraditio բառից, որը նշանակում է փախուստի դիմած հպատակին ստիպողաբար իր տիրոջը վերադարձնել: Extra լատիներեն նշանակում է «դուրս», de նշանակում է «-ից», իսկ re՝ «իրականություն, վայր», այսինքն՝ ինչ-որ վայրից դուրս. լատիներեն ex նշանակում է նաև «-ից», իսկ ditio՝ «առաքում», այսինքն՝ ինչ-որ մի վայրից անձի փոխանցում: Ինչ վերաբերում է extradition տերմինի սահմանմանը, ապա դեռևս 1902 թվականին ԱՄՆ վճռաբեկ դատարանը պարզաբանել է այն, համաձայն որի՝ էքստրադիցիան «մի պետության կողմից մեկ այլ պետությանը անձի հանձնումն է, որը մեղադրվում է կամ դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իր երկրի տարածքից դուրս և մյուսի տարածքային իրավասության շրջանակում, որը, լինելով իրավասու փորձելու պատժել նրան, պահանջում է հանձնումն»<sup>1</sup>:

Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքում (հոդված 13), ինչպես և մեր քրեական օրենսգրքում, կիրառվել է «հանցանք կատարած անձանց հանձնելը» (Выдача лиц, совершивших преступления) ձևակերպումը, սակայն ՌԴ Սահմա-

նադրության հոդված 63-ի մաս 2-ում սահմանված է «հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձանց հանձնումը» (Выдача лиц, обвиняемых в совершении преступления) ձևակերպումը:

Եր. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» հանձնել նշանակում է տալ, ուրիշի տրամադրության տակ դնել, վերադարձնել և այլն: Իմաստային առումով «հանձնելը» համապատասխանում է ձևակերպման բնույթին, սակայն գոյություն ունի նաև հանձնման ինստիտուտ, որը չպետք է խառնել «հանցանք կատարած անձանց հանձնելու» ինստիտուտի հետ (այս երկուսի տարբերությանը կանդաղառնանք քիչ ավելի ուշ):

Եթե փորձենք extradition բառը թարգմանել և հարմարեցնել հայերենին, ապա լավագույն տարբերակը կարող ենք համարել հենց «արտահանձնում» բառը, որը, սակայն, առկա չէ հայերենի բացատրական բառարաններում և, փաստորեն, նորաբանություն է:

Իրավաբանական գրականության մեջ հանդիպում են էքստրադիցիայի հասկացության մի շարք մեկնաբանությունների, համաձայն որոնց՝ էքստրադիցիան.

1. գործընթաց է, երբ մի երկրի արդարադատությունից խուսափող անձը, որը ապաստան է փնտրում մեկ այլ երկրի տարածքում, վերջինիս կողմից փոխանցվում է առաջինին,

2. ակտ է, որի համաձայն պետությունը փոխանցում է հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձին կամ դատապարտյալին այն երկրին, որն իրավունք ունի այդ անձին դատապարտելու կամ պատժելու,

3. մի երկրի կողմից մյուսին անձի ձևական փոխանցումն է՝ նրան մեղադրելու կամ պատժելու համար,

4. մեղադրյալի կամ դատապարտյալի փոխանցումն է այն երկրին, որի տարածքում համարվում է, որ այդ անձը կատարել է հանցագործություն կամ դրա համար դատապարտվել է այն երկրի կողմից, որի տա-

### **Քրեական իրավունք**

րածքում տվյալ պահին գտնվում է ենթադրյալ հանցագործը,

5. հանցագործի փոխանցումն է այն երկրի կողմից, որի տարածքում գտնվում է հանցագործը, մեկ այլ երկրի՝ նրա նկատմամբ դատաքնություն իրականացնելու կամ պատիժ կիրառելու նպատակով,

6. հանցագործին այլ պետությանը փոխանցելու գործընթաց է՝ քրեական պատիժ կիրառելու նպատակով,

7. դատավարական օգնության ակտ է, որի էությունը հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի կամավոր փոխանցումն է մեկ այլ պետությանը այն երկրի կողմից, որի տարածքում նա գտնվում է, և որը տուժել է այդ անձի կողմից կատարված հանցագործության պատճառով և պահանջում է նրա փոխանցումը:

Հիշյալ ձևակերպումներից ոչ մեկը չի կարելի սխալ համարել, քանզի դրանցից յուրաքանչյուրն այս կամ այն կերպ արտացոլում է էքստրադիցիայի էությունը՝ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձն մի երկրի կողմից մեկ այլ երկրին փոխանցելը՝ վերջինիս կողմից իր իրավասությունները կիրառելու նպատակով: Սակայն այդ բոլոր ձևակերպումներն ամբողջությամբ չեն արտահայտում էքստրադիցիայի էությունը: Որոշ հեղինակներ էքստրադիցիայի սահմանման մեջ հիմնական շեշտը դնում են ոչ թե դրա բուն էության, այլ գործընթացի վրա, որից էլ ձևավորվում է սահմանման անկատար կամ թերի լինելու հանգամանքը<sup>2</sup>:

ԱՄՆ-ի իրավական պրակտիկայում էքստրադիցիան ևս սահմանվում է որպես «գործընթաց, որի միջոցով երկիրը, համաձայն պայմանագրային դրույթների և գործող սահմանափակումների, խնդրում է մեկ այլ երկրի իրեն փոխանցել անձին, որը մեղադրվում է հայցող երկրի քրեական օրենսգրքով պատժելի իրավախախտում կատարելու մեջ, այն դեպքում, երբ այդ

անձը տվյալ պահին գտնվում է հայցվող երկրի իրավասության ներքո՝ այդ անձին նրա նկատմամբ ներկայացված քրեական մեղադրանքի համար պատասխանատվության ենթարկելու, դատական քննություն իրականացնելու և կայացված վճիռն ի կատար ածելու նպատակով»:

Կարծում ենք, որ առավել կարևոր է ուշադրություն դարձնել հողված 16-ի ձևակերպման բուն էությանը՝ «հանցանք կատարած անձանց հանձնելը»: Փաստորեն «հանձնվում» են *հանցանք* կատարած անձիք (այստեղ խոսքը չի վերաբերում պատիժը կրելու համար հանձնելուն): Այսինքն մենք արդեն իսկ գիտենք, որ հենց հանձնման ենթակա անձն է կատարել հանցագործությունը: Իսկ ո՞ր մնաց անմեղության կանխավարկածը: Համաձայն Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի հողված 6-ի մաս 2-ի. «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, անմեղ է համարվում, մինչև որ նրա մեղավորությունը չապացուցվի օրենքին համապատասխան»: Նմանատիպ դրույթ սահմանված է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հողված 21-ով, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հողված 9-ի՝ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի մաս 1-ի համաձայն. «Անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից»: Այսինքն՝ միայն դատարանն է իրավասու անձին ճանաչել մեղավոր կատարված հանցագործության համար, մինչդեռ հանձնման ենթակա են հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձինք, այսինքն՝ մեղադրյալները, որոնց նկատմամբ դեռ դատական քննություն չի իրականացվել, և չի բացառվում, որ այդ անձը արդա-

րացվի:

Հետևաբար կարծում ենք, որ այս ձևակերպումը կարիք ունի փոփոխման: Որպես այլընտրանք առաջարկում ենք օգտագործել ընդամենը մեկ տերմին (ինչպես էքստրադիցիան է), որի լավագույն տարբերակը կարող է լինել հենց «արտահանձնումը»:

Հոդված 16-ի նկարագրական մասում ևս օգտագործվում է «հանցանք կատարած» արտահայտությունը, և հիշյալ պատճառաբանությամբ այն կարելի է փոխարինել «հանցագործության կատարման մեջ մեղադրվող» արտահայտությամբ (հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձի նկատմամբ հետախուզում հայտարարվում է քրեական գործով անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելուց հետո):

Նմանատիպ փոփոխություններ անհրաժեշտ է կատարել նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածներում (478, 479, 480, 487):

Բացի այդ, ինչպես նշեցինք, հանձնումը վերաբերում է երկու իրավական կարգավիճակ ունեցող անձանց: Եթե պատիժը կրելու նպատակով անձանց հանձնելու պարագայում անեն ինչ պարզ է, այսինքն՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով անձը մեղավոր է ճանաչվել կատարված հանցագործության համար և ենթակա է հանձնման պատիժը կրելու նպատակով, մինչդեռ մյուս պարագայում, ըստ օրենսդրի, անձը հանձնվելու է «քրեական պատասխանատվության ենթարկելու» նպատակով: Այստեղ կրկին խնդրի առաջ ենք կանգնում, քանզի անձը համարվում է մեղադրյալ, նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում և հայտնաբերվելուց ու հանձնումն իրականացվելուց հետո դատական քննության ընթացքում պետք է հաստատվի նրա մեղքը կատարված հանցագործության մեջ, որից հետո սահմանվի պատիժ, և որից հետո միայն կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Այս փուլերից յուրաքանչյուրում անձը

կարող է թե՛ արդարացվել, թե՛ ազատվել քրեական պատասխանատվությունից: ԱՄՆ վճռաբեկ դատարանի 1902 թվականի՝ էքստրադիցիայի հասկացության պարզաբանման տեքստում նշված է «փորձելու պատժել» արտահայտությունը, այսինքն՝ միանշանակ չէ, որ անձին կկարողանան ենթարկել պատժի:

Նմանատիպ ձևակերպում է տրված նաև Եվրոպական կոնվենցիայի 1957 թվականի Հանձնման մասին, հոդված 1-ում. «Պայմանավորվող կողմերը պարտավորվում են միմյանց հանձնել Կոնվենցիայի դրույթներին և պայմաններին համաձայն հանձնման ենթակա բոլոր այն անձանց, որոնց դեմ հայցող կողմի իրավասու մարմինները գործ են հարուցել, կամ որոնք հետախուզվում են վերոհիշյալ մարմինների կողմից դատավճռի ի կատար ածման կամ կալանավորման նպատակով»:

Մինչդեռ, 2002 թվականին Քիշնևում ստորագրված ԱՊՀ երկրների Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիայի հոդված 66-ով նույնպես տրված է մեր և ՌԴ օրենսգրքերին համապատասխան ձևակերպում. «Պայմանավորվող կողմերը պարտավորվում են, Կոնվենցիայով նախատեսված պայմաններին համապատասխան, հարցման հիման վրա միմյանց հանձնել իրենց տարածքներում գտնվող անձանց՝ քրեական պատասխանատվության ենթարկելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար»:

Հետևաբար, կարծում ենք՝ «քրեական պատասխանատվության ենթարկելու» արտահայտությունը անհրաժեշտ է փոխարինել «քրեական հետապնդում իրականացնելու» արտահայտությամբ, ինչպես որ տրված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի հոդված 480-ում:

Արտահանձնումը քրեական հետապնդումից և պատժի կրումից խուսափող և այլ երկրի տարածքում գտնվող անձանց վե-

### **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

րադարձման ամենատարածված և հիմնական միջոցն է: Սակայն գործում են քրեական հետապնդումից և պատժի կրումից խուսափող անձանց վերադարձման այլ միջոցներ ևս, որոնք չպետք է շփոթել արտահանձնման հետ: Դրանց առավել տարածված ձևերն են.

1. դատապարտյալի փոխանցումը,
2. փոխանցումը և հանձնումը,
3. արտաքսումը,
4. խաբկանքի կիրառումը,
5. անձի առևանգումը,
6. ֆիզիկական ոչնչացումը:

1. Պատժի հետագա կրման նպատակով դատապարտյալների փոխանցումը չնայած բավականին նման է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 16-ով նախատեսված պատժի կրումից խուսափող անձանց հանձնելու դրույթներին, սակայն այս երկու ինստիտուտները էականորեն տարբերվում են միմյանցից: Պատժի հետագա կրման նպատակով դատապարտյալների փոխանցման դեպքում դատապարտյալը չի խուսափում արդարադատությունից և իր նկատմամբ սահմանված պատժի կրումից, այլ ընդամենը հետագա պատիժը իր երկրում կրելու նպատակով փոխանցվում է այն երկրին, որի քաղաքացին է, ինչը կարող է իրականացվել միայն իր՝ դատապարտյալի համաձայնության դեպքում: Հարկ է նշել, որ ոչ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում և ոչ էլ քրեական օրենսգրքում դատապարտված անձանց պատժի հետագա կրման նպատակով փոխանցման վերաբերյալ դրույթներ նախատեսված չեն (միայն Օտարերկրացիների մասին օրենքի հոդված 40-ի մաս 2-ում է տրված, որ «Այն օտարերկրացիները, որոնք ազատագրված են դատապարտվել Հայաստանի Հանրապետությունում, կարող են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով

սահմանված կարգով փոխանցվել իրենց ծագման պետություն՝ հետագա պատիժը կրելու նպատակով»): Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունը լայնորեն կիրառում է այս գործընթացը: Միայն 2012 թվականի ընթացքում ստացվել են այլ երկրներում դատապարտված և պատիժը կրող Հայաստանի Հանրապետության 62 քաղաքացու դիմում՝ պատժի մնացած մասը Հայաստանի Հանրապետությունում կրելու խնդրանքով, որոնցից քսանը բավարարվել է, երեսունհինգը՝ մերժվել, իսկ մնացածը քննարկման փուլում են: Այդ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունից այլ երկրներին փոխանցվել են վեց դատապարտյալներ:

2. Փոխանցման և հանձնման ինստիտուտը նախատեսված է մի շարք միջազգային պայմանագրերում և կոնվենցիաներում: Մասնավորապես, Միջազգային քրեական դատարանի կանոնակարգը (Հռոմ, 17.07.1998թ., հոդվածներ՝ 59, 89, 91), որը ստորագրել է նաև Հայաստանի Հանրապետությունը, նախատեսում է անձի ձերբակալումը և փոխանցումը դատարանին: Միջազգային դատարաններին անձանց փոխանցման վերաբերյալ դրույթներ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությամբ ևս նախատեսված չէ: Եվրոպական միության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ին ընդունվեց եվրոպական կալանքի սանկցիայի և անդամ երկրների միջև անձանց փոխանցման գործընթացի մասին որոշումը, որով վերացվեց արդարադատությունից խուսափել փորձող անձանց արտահանձնման գործընթացը (որոնց նկատմամբ առկա է եվրոպական կալանքի սանկցիա), և ընդունվեց այդ անձանց փոխանցման գործընթաց:

Որոշ երկրներում էլ կիրառվում է հետախուզվողների և կասկածյալների հանձնման ինստիտուտը, որն իրականացվում է երկկողմ և բազմակողմ համաձայնագրի կամ պայմանագրի առկայության դեպքում: Բրիտանական Ազգերի համագործակցության 1966 թվականի «Փախուստի դիմած

հանցագործների մասին ակտը» նախատեսում է հանցագործություն կատարած անձանց վերադարձ այն երկիր, որտեղ նրանք կատարել են հանցագործություն՝ առանց էքստրադիցիայի համար պահանջվող գործելառի:

3. Արտաքսումը, համաձայն Հայաստանի Հանրապետության «Օտարերկրացիների մասին» օրենքի հոդված 3-ի, օտարերկրացու հարկադիր հեռացումն է Հայաստանի Հանրապետությունից նրա՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու կամ բնակվելու օրինական հիմքերի բացակայության դեպքում: Հիշյալ անձիք արտաքսվում են այն երկիր, որտեղի քաղաքացին են կամ որտեղից որ ժամանել են: Հետևաբար, եթե նրանք որոնվում են քրեական հետապնդումից կամ պատժի կրումից խուսափելու համար, արտաքսման դեպքում կարող են վերադարձվել այդ երկրներ:

Արտաքսումը և արտահանձնումը տարբերվում են մի շարք հիմքերով:

Առաջին տարբերությունը այն է, որ արտաքսումն իրականացվում է այն երկրի նախաձեռնությամբ, որի տարածքում գտնվում է տվյալ անձը, մինչդեռ արտահանձնումն իրականացվում է այլ երկրի հայցադիմումի հիման վրա:

Երկրորդ, եթե արտահանձնումից հետո անձը ենթակա է քրեական հետապնդման կամ արդեն իսկ նրա նկատմամբ կայացված դատավճռի կիրառման, ապա արտաքսումը նման բան չի նախատեսում:

Երրորդ, չնայած տեսական գրականության մեջ երբեմն առաջ է քաշվում այն կարծիքը, որ արտահանձնումը պատժատեսակ է, կարծում ենք, որ դա սխալ դիրքորոշում է, քանի որ արտահանձնումն չիրականացվելու դեպքում, միևնույնն է, հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության այն երկրի տարածքում, որտեղ որ հայտնաբերվել է՝ քրեական գործը փոխանցելու պարագայում, իսկ արտահանձնման դեպքում կարող է արդարացվել, մինչդեռ արտաքսումն

հնքնին իրենից պատիժ է ներկայացնում:

4. Խաբկանքի կիրառումը քրեական հետապնդումից կամ պատժի կրումից խուսափող անձանց վերադարձնելու միջոց է, որը, փաստորեն, որևէ հակաօրինականություն չի պարունակում և համարվում է արտահանձնման այլընտրանք: Այս դեպքում իրավապահ մարմինները կիրառում են խարդախություն, խորամանկություն, խաբեություն հետախուզվողին այն երկրից, որտեղ որ նա գտնվում է, այլ երկրի կամ հետապնդում իրականացնող երկրի տարածք մուտք գործելու և այնտեղ ձերբակալելու ու վերադարձնելու համար: Օրինակ, եթե Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից հետախուզվող անձը, որը գտնվում է Թուրքիայում (որի հետ չկան դիվանագիտական հարաբերություններ) իր հարազատներին տեսակցելու կամ այլ նպատակներով մեկնի Վրաստան, որտեղ էլ ձերբակալվի:

5. Երբ արտահանձնումը հնարավոր չէ իրականացնել համաձայնագրի բացակայության, քաղաքական կամ այլ պատճառներով, երկրները երբեմն դիմում են առևանգման միջոցին՝ առանց այն երկրի համաձայնության, որի տարածքում գտնվում է հետախուզվողը: Բնականաբար, սա համարվում է հանցագործություն, ավելին՝ նույնիսկ դիտվում է որպես միջազգային բնույթի հանցագործություն և հակասում է մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների մասին սկզբունքներին: Մինչդեռ 1989թ.-ին ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի իրավական խորհրդի վարչությունը, վերանայելով իր նախկին դիրքորոշումը, որոշեց, որ համաձայն ազգային օրենսդրության՝ ՀԴԲ-ն իրավական լիազորություններ ունի ձերբակալելու անձանց այլ երկրներում՝ առանց այդ երկրների համաձայնության: Իսկ Մեքսիկայից ԱՄՆ հատուկ ծառայությունների կողմից Humberto Alvarez Machain-ի առևանգման հայտնի դեպքից հետո Իրանի Իսլամական Հանրապետության Պառլամենտում օրենքի նախագիծ էր ներկայաց-

### **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

վել, որի համաձայն՝ ԻԻՀ նախագահին իրավունք էր վերապահվում ձերբակալել ԱՄՆ քաղաքացիներին ցանկացած վայրում, եթե նրանք որևէ գործողություն են իրականացրել Իրանի քաղաքացիների կամ ունեցվածքի դեմ, և տեղափոխել նրանց Իրան՝ դատաքննության ենթարկելու համար:

Տարբեր երկրների կողմից քրեական հետապնդում իրականացնելու նպատակով անձանց առևանգում իրականացվում է միայն բացառիկ դեպքերում՝ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձանց վերադարձնելու նպատակով: Ինչպես նշեցինք, անձանց առևանգումը հանցագործություն է համարվում, սակայն շատ երկրներ, որտեղից որ իրականացվել է առևանգումը, զգալի նշանակություն չեն տալիս այդ հարցին և երբեմն էլ համագործակցում են մյուս երկրի հատուկ ծառայությունների հետ: Հանրությանը հայտնի նման դեպքերից կարելի է առանձնացնել Իսրայելի կողմից 1960 թվականին Ադոլֆ Եյխմանի առևանգումը Արգենտինայից, Թուրքիայի կողմից 1999 թվականին Աբդուլլահ Օջալանի առևանգումը Քենիայից, Իսրայելի կողմից 2011 թվականին Դիռառ Աբու Սեեսիի առևանգումը Ուկրաինայից և այլն:

6. Ֆիզիկական ոչնչացումն առավել ծանր հանցագործություն է համարվում, քան անձի առևանգումը, և կարող է միջազգային լուրջ կոնֆլիկտի պատճառ դառնալ: Այդ իսկ պատճառով, եթե անձի առևանգման դեպքում առևանգող երկիրը հիմնականում «խոստովանում» է առևանգման փաստը, ապա ֆիզիկական ոչնչացման դեպքում նման բան տեղի չի ունենում: Հանրությանը հայտնի վերջին նման դեպքերից էր 2004 թվականի փետրվարին Քաթարի մայրաքաղաքում Չեչնիայի նախկին փոխնախագահ Չելիմխան Յանդարբիևի ոչնչացումը, որը միջազգային մակարդա-

կով հետախուզվում էր Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի հոդվածներ 208, 279, 317 հատկանիշներով, կամ ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների կողմից թիվ մեկ ահաբեկիչ համարվող Բին Լադենի ոչնչացումը 2011 թվականի մայիսի 2-ին Պակիստանում:

Արտահանձնման հիմնական նպատակը պատժի անխուսափելիության սկզբունքի կիրառումն է, այսինքն՝ այն երկրի կողմից, որի տարածքում գտնվում է անձը, արտահանձնում է իրականացվում՝ մեկ այլ երկրի տարածքում քրեական հետապնդում իրականացնելու կամ այդ անձի նկատմամբ արդեն իսկ կայացրած դատավճիռն ի կատար ածելու նպատակով: Սակայն քիչ չեն այն դեպքերը, երբ արտահանձնում չի իրականացվում ինչ-ինչ պատճառներով: Եվ տեղին է այն կարծիքը, որ արտահանձնման մասին որոշում հիմնականում կայացվում է ոչ թե հանցավորության դեմ համատեղ պայքարի օբյեկտիվ անհրաժեշտության նկատառումներից կամ իրավաբանական բոլոր փաստարկների անշահախնդիր ուսումնասիրությունից ելնելով, այլ այդ որոշումը պարունակում է քաղաքական ենթատեքստ<sup>3</sup>, և հանձնող ու հայցող երկրների միջև առկա հարաբերություններից, հանձնող երկիրը կարող է «գտնել» հիմնավորումներ հայցը չբավարարելու կամ բավարարելու համար: Այդ իսկ պատճառով գործում է միջազգային իրավունքի կարևորագույն սկզբունքը՝ «արտահանձնիր կամ դատապարտիր»: Գիշտ է, չի կարելի պնդել, թե երկրից արտահանձնումը և այդ երկրում դատապարտումը հավասարազոր են. օրինակ՝ պատժի ավելի խիստ լինելու հանգամանքը, դատապարտյալների պահման պայմանները, հետազայում այդ երկիր վերադառնալու բարդությունները պատճառ են դառնում, որ ՀՀ իրավապահ մարմինների կողմից հետախուզվող և եվրոպական երկրներում մինչէքստրադիցիոն կալանքի տակ գտնվող անձինք գերադասեն արտահանձնման մասին դատարանների որոշումները բողոքարկելու միջոցով



ավելի երկար մնալ այդ երկրների բանտերում, քան պատիժը կրել ՅՅ-ում: Այդուհանդերձ, նպատակը մեկն է՝ պատժի ամխուսափելիությունը:

Սակայն սա արտահանձնման միակ նպատակը չէ: Նախ՝ արտահանձնումը վկայում է միջազգային պայմանագրերի վրա հիմնված երկրների միջև համագործակցության դրսևորման և միջազգային իրավակարգի ամրապնդման մասին: ՄԱԿ-ի Յանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության վերաբերյալ 11-րդ կոնգրեսի (Բանգկոկ, 18-25 ապրիլի, 2005թ.) փաստաթղթերում ընդգծված է, որ «հանցավորությունը ավանդաբար դիտվում էր որպես ազգային դրսևորում, այդ իսկ պատճառով հանցագործությունների քննությունը և քրեական հետապնդումը տևական ժամանակ դիտվում էին որպես ներպետական խնդիր: Երկրի սահմաններից դուրս կատարված հանցագործությունները անհանգստություն չէին պատճառում այդ երկրի իշխանություններին և, հետևաբար, միտված չէին օժանդակելու մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հարցում»: Ներկայումս այդ մոտեցումն ամբողջովին փոխվել է, և երկրները գիտակցում են միայնակ պայքար մղելու անհնարիությունը և ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ պայմանագրերի միջոցով պարտավորվում են իրավական օժանդակություն ցուցաբերել միմյանց, որտեղ էական դեր է խաղում հենց արտահանձնումը<sup>1</sup>: Արտահանձնման մասին երկրների միջև պայմանագրի առկա-

յությունը վկայում է նաև միջազգային քաղաքական դաշտում այդ երկրների համագործակցության մակարդակի մասին:

Երկրորդ. արտահանձնումը զգալի դեր է խաղում հանցագործության նախականիման առումով: Տեսնելով, որ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը, նույնիսկ պատասպարվելով արտասահմանյան երկրներում, ենթարկվում է արտահանձնման և պատասխանատվության, հանցավոր նպատակ ունեցող անձինք կարող են փոխել իրենց մտադրությունը: Սակայն այստեղ առկա է նաև հակառակ արձագանքի մտավախությունը, երբ, օրինակ, անձը, տեսնելով, որ համաձայնագրի բացակայության կամ այլ հանգամանքներից ելնելով իր երկիրը արտահանձնում չի իրականացնում մի որևէ երկրից, կարող է հուսալ, որ կատարելով հանցագործություն և պատասպարվելով այդ երկրում՝ կխուսափի պատասխանատվությունից: Այս առումով դեռևս 1880 թվականի Օբսֆորդյան ռեզալուցիայի 1-ին կետում իրավաճիորեն սահմանվել է, որ արտահանձնումը «միջազգային ակտ է, որը համապատասխանում է արտահանձնում իրականացնող երկրի արդարացի շահերին, քանի որ այն նպատակ ունի կանխարգելել քրեական օրենքի խախտումը»:

Ի վերջո, արտահանձնման միջոցով պետությունը կարող է ի կատար ածել օրենքով սահմանված հարկադրանքի միջոցները, որով հավաստում է թե՛ իր քաղաքացիների պաշտպանության և թե՛ պետականության պահպանման կարողությունը:

<sup>1</sup> Jordan J. Paust, M. Cherif Bassiouni. *International Criminal Law Cases and Materials*. Kluwer Law International. The Hague, London, Boston, 1999, էջ 46:

<sup>2</sup> Տե՛ս Крупцов А.А. *Выдача лиц, совершивших преступление*. М.: Проспект, 2011, էջ 81:

<sup>3</sup> Տե՛ս Струк Ю.Б. *Понятие выдачи лиц, совершивших преступление* // *Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена*. 2007. No 29, էջ 111:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 110:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ**

**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

## **THE CONCEPT, ROLE AND IMPORTANCE OF EXTRADITION**

### **Ara FIDANYAN**

*The Head of National Central  
Bureau of Interpol in the RA,  
post-graduate student of the Academy  
of Police of the RA*

---

The present article applies to the concept of extradition, its role and objectives, the

relation to the other relevant institutions and their discrepancy.

It was attempted to analyze the concept of extradition both in semantic and legal terms, the approaches of various countries and scientists were rendered, presumable solutions and variants were recommended aimed to regulate the issues raised by the author of the article.

---

## ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ

### ՏԻՊՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ՀՀ ֆինանսների նախարարության  
իրավաբանական վարչության պետի  
տեղակալ, ԵՊՀ քաղաքացիական  
դատավարության ամբիոնի ասիստենտ,  
իրավ. գիտ. թեկնածու*

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի՝ որպես քաղաքացիական դատավարության փուլի, ինքնուրույնությունը պայմանավորված է ոչ միայն վերանայման հիմքերով, օբյեկտներով, ժամկետներով և այլ հատկանիշներով, այլև գործի քննության դատավարական կարգով<sup>1</sup>: Դա բխում է այն իրողությունից, որ քննարկվող վարույթում դատարանի հիմնական խնդիրը ոչ թե գործի ըստ էության քննությունն է կամ ստորադաս ատյանի կողմից թույլ տրված դատական սխալների վերացումը, այլ նոր երևան եկած հանգամանքների առկայության կամ բացակայության պարզումն է:

Պետք է նշել, որ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությունը մինչև «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի մայիսի 20-ի թիվ ՀՕ-94-Ն օրենքի<sup>2</sup> ընդունումը այս հարցի կապակցությամբ նախատեսում էր առանձին կարգավորում: Մասնավորապես, «Դիմումի քննության կարգը» վերտառությամբ 204<sup>17</sup>-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր, որ. «Դատարանը դատական նիստում լսում է նոր երևան եկած հանգամանքների վերաբերյալ դիմում ներկայացրած անձի հիմնավորումները և պահանջը, ինչպես նաև գործին մասնակցող

անձանց դիրքորոշումը դատական ակտի վերանայման կապակցությամբ»: Նույն հոդվածի 2-րդ մասում նաև նախատեսված էր, որ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցված դիմողի կամ գործին մասնակցող անձանց չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

Մինչդեռ նշված օրենքի ընդունմամբ, որով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը<sup>3</sup> (այսուհետ կրճատ՝ ՔԴՕ) լրացվեց «Դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթը» վերտառությամբ նոր՝ երրորդ<sup>3</sup> բաժնով, օրենսդիրը ՔԴՕ կարգավորումից դուրս թողեց նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի քննության հատուկ կանոնակարգումը և սահմանափակվեց միայն ՔԴՕ 204.38-րդ հոդվածի 1-ին մասի ընդհանրական կանոնի ամրագրմամբ, ըստ որի. «Եթե սույն բաժնով նախատեսված չեն հատուկ կանոններ, ապա նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները»:

Դատավարական օրենքի նման ձևակերպումը, ինչպես արդարացիորեն նշում է Ռ. Գ. Պետրոսյանը, դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքներով վերանայող վերաքննիչ և վճռաբեկ դատարանների թելադրում են ղեկավարվել իրենց բուն գործունեությունը կանոնակարգող վերաքննիչ և վճռաբեկ վարույթները կարգավորող ՔԴՕ չորրորդ և հինգերորդ բաժինների դրույթներով<sup>4</sup>: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ օրենսդիրը և՛ վերաքննիչ, և՛ վճռաբեկ դատարաններում սահմանել է գործի քննության գրեթե միևնույն դատավարական կարգը՝ որպես հիմք ընդունելով վճռաբեկ դատարանում գործի

**ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ****ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

քննության կանոնները: Մասնավորապես, ՔԴՕ 217-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Վերաքննիչ դատարանում գործի քննությունն իրականացվում է վճռաբեկ դատարանում գործի քննության կանոններով, եթե սույն բաժնով այլ կանոններ նախատեսված չեն»: Հետևաբար, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքների քննության դատավարական կարգը անհրաժեշտ է պարզաբանել վճռաբեկ դատարանում գործի քննության կարգը սահմանող դատավարական կանոնների տեսանկյունից՝ հաշվի անելով վերաքննիչ վարույթի առանձնահատկությունները:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո դատարանը պարտավոր է կատարել որոշակի գործողություններ, որոնք ուղղված են առաջին իսկ դատական նիստում գործի ճիշտ քննության ապահովմանը<sup>6</sup>: Այսպես, բողոքը գործի քննությանը նախապատրաստելու նպատակով ՔԴՕ-ն սահմանում է, որ վերանայման վարույթի հարուցումից հետո դատարանի դատական կազմի դատավորները ծանոթանում են բողոքին և գործի մյուս նյութերին: Իսկ դատական կազմի այն անդամը, ում դատարանի նախագահը հանձնարարել է դատական նիստում զեկուցել գործը, պարտավոր է ոչ միայն մանրակրկիտ ուսումնասիրել գործը՝ ծանոթանալ բողոքին, գործի մյուս նյութերին, այլև զեկուցում պատրաստել դատական նիստի համար (ՔԴՕ 237-րդ հոդվ., 1-ին մաս):

Դատական ակտի վերանայման բողոքը գործի քննությանը պատշաճ նախապատրաստելու տեսանկյունից չի կարելի թերագնահատել նաև գործում գտնվող բողոքի պատասխանի ուսումնասիրության կարևորությունը, քանի որ այն բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ

գործին մասնակցող այլ անձանց դիրքորոշումն է:

Հարկ է նշել, որ ՀՀ նախկին քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չէր նախատեսում նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման դիմումի պատասխան ներկայացնելու դատավարական կարգը<sup>6</sup>: Ի տարբերություն նախկին իրավակարգավորման՝ գործող դատավարական օրենսդրությունը թեկուզև վերաքննիչ և վճռաբեկ վարույթների դրույթների միջոցով ամրագրել է գործին մասնակցող այլ անձանց՝ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքը: Մասնավորապես, ՔԴՕ 212-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Գործին մասնակցող անձը, վերաքննիչ բողոքի պատճենն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավունք ունի պատասխան ուղարկելու վերաքննիչ դատարան և գործին մասնակցող այլ անձանց»: Իսկ նույն օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գործին մասնակցող անձը, ստանալով վճռաբեկ բողոքի պատճենը, մինչև գործի քննությունն իրավունք ունի իր պատասխանն ուղարկելու վճռաբեկ դատարան և գործին մասնակցող անձանց:

Նշված նորմերի համեմատության դեպքում դժվար չէ նկատել, որ դրանց միակ տարբերությունը բողոքի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետների մեջ է: Այսինքն՝ եթե վերանայման բողոքը վերաքննիչ դատարանի կողմից քննվելու դեպքում գործին մասնակցող անձը բողոքի պատասխան կարող է ներկայացնել բողոքի պատճենը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ապա վճռաբեկ դատարանի պարագայում՝ իր այդ իրավունքից կարող է օգտվել մինչև գործի քննությունը սկսելը:

Սակայն կարծում ենք, որ հարցի մնան կարգավորումը այնքան էլ արդարացված չի թվում: Խոսքն ամենից առաջ այն մասին է, որ օրենսդիրը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքը վերաքննիչ դատարանին

հասցեագրվելու դեպքում բողոքի պատասխանը ներկայացնելու համար նախատեսված երկշաբաթյա ժամկետի հաշվարկի սկիզբ է համարում բողոքի պատճենը ստանալու օրը: Եվ քանի որ դատական ակտի վերանայման հարցը լուծելու համար ՔԴՕ-ն սահմանել է մեկամսյա ժամկետ, ապա չեն բացառվում այնպիսի իրավիճակները, երբ գործին մասնակցող անձի կողմից բողոքի պատասխան ներկայացնելուց հետո դատարանը կայացնի դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու մասին որոշում:

Նման պայմաններում ակնհայտ է, որ այդ մասով առկա իրավակարգավորումը չի բխում դատական խնայողության սկզբունքից, քանի որ գործին մասնակցող այլ անձանց կողմից բողոքի պատասխան ներկայացնելը, փաստորեն, կարող է լինել նաև ապարդյուն: Ավելին, այն կարող է նաև վնաս պատճառել գործին մասնակցող այլ անձանց գույքային շահերին, քանի որ դատական ակտի վերանայման վարույթի չհարուցման պարագայում չի կարող լուծվել նաև բողոքի պատասխան ներկայացնելու կապակցությամբ գործին մասնակցող անձանց դատական ծախսերի բաշխման հարցը: Հավանաբար այս հանգամանքներն է նկատի ունեցել օրենսդիրը, երբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի<sup>7</sup> 117.7-րդ հոդվածում վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու երկշաբաթյա ժամկետի հաշվարկի սկիզբ է համարել ոչ թե բողոքը, այլ այն վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալու օրը:

Որոշակի տարակուսանքի տեղիք է տալիս նաև վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտը վերանայելիս բողոքի պատասխան ներկայացնելու համար մինչև գործի քննությունը սկսելը ժամկետի ամրագրումը: Իհարկե, այն, ի տարբերություն վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի վերանայման, հնարավորություն է տալիս խուսափելու վերը նշված խնդիրներից: Սակայն մյուս կողմից կարող

է ստացվել այնպես, որ գործին մասնակցող անձը բողոքի պատասխանը ներկայացնի գործի քննությունից բառացիորեն մի քանի ժամ առաջ: Իսկ այդ հանգամանքը հնարավորություն չի տա գործին մասնակցող այլ անձանց, այդ թվում՝ բողոք բերած անձին, ծանոթանալու պատասխան ներկայացրած անձի դիրքորոշմանը՝ գործին մասնակցող այլ անձանց բողոքի պատասխանը ուղարկելու ՔԴՕ 235-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը դարձնելով հռչակագրային և խախտելով կողմերի իրավահավասարության սկզբունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ՔԴՕ առանձին դրույթով սահմանել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի դեմ գործին մասնակցող այլ անձանց կողմից բողոքի պատասխան ներկայացնելու դատավարական կարգը: Նման դիրքորոշման օգտին է խոսում նաև նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքի դեմ բողոքի պատասխան ներկայացնելուն վերաբերող այլ խնդիրները:

Մասնավորապես, հայտնի է, որ քաղաքացիական դատավարությունը, ի թիվս այլ սկզբունքների, իրականացվում է մրցակցության սկզբունքին համապատասխան, որը ենթադրում է գործին մասնակցող յուրաքանչյուր անձի իրավունքը և միաժամանակ պարտականությունը՝ ապացուցել այն հանգամանքների առկայությունը, որոնք ընկած են իր պահանջների և առարկությունների հիմքում<sup>8</sup>: Այստեղից հետևում է, որ բողոք բերած անձն է կրում նոր երևան եկած հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը, իսկ այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը իր կողմից ներկայացված պատասխանում վկայակոչում է որոշակի հանգամանքներ, ապա դրանց ապացուցման բեռն էլ կրում է հենց վերջինս: Ընդ որում, այդ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական հետևանքներն էլ օրենսդիրը դրել է հենց ա-

**ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ****ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

պացուցման բեռը կրող անձի վրա (ՔԴՕ 48-րդ հոդվ., 6-րդ մաս):

Սակայն եթե գործող դատավարական օրենսդրությունը ոչ միայն հնարավորություն է տալիս, այլև բողոքը վերադարձնելու սպառնալիքով պարտավորեցնում է բողոք բերած անձին բողոքին կից ներկայացնել նաև նոր երևան եկած հանգամանքների առկայությունը հիմնավորող ապացույցներ, ապա նույնը չի կարելի ասել բողոքի պատասխանի կապակցությամբ: Այլ կերպ ասած՝ ՔԴՕ-ն մի կողմից սահմանում է բողոքի պատասխան ներկայացրած անձի պարտականությունը՝ ապացուցելու վկայակոչած հանգամանքները, իսկ մյուս կողմից չի նախատեսում այդ պարտականությունը կատարելու, այսինքն՝ բողոքի պատասխանին ապացույցներ կցելու իրավական հնարավորություն (ՔԴՕ 212-րդ և 235-րդ հոդվ.):

Մինչդեռ իրերի նման դրությունը համատեղելի չէ ոչ միայն կողմերի մրցակցության, այլև նրանց իրավահավասարության սկզբունքի հետ: Գաղտնիք չէ, որ կողմերի իրավահավասարության սկզբունքը սերտորեն կապված է մրցակցության սկզբունքի հետ, քանի որ առանց իրավահավասարության գործին մասնակցող անձինք լիարժեք մրցակցել չեն կարող: Դա բխում է նրանից, որ կողմերի իրավահավասարության սկզբունքը հիմնվում է ինչպես նրանց լսված լինելու իրավունքը («Audiatur et altera pars» - «Թող լսված լինի մյուս կողմը») ապահովելու, այնպես էլ մրցակցող կողմերի դատավարական միջոցների հավասարության («Non debet actori licere quod reo non permittitur» - «Զի կարելի հայցվորին թույլատրել այն, ինչն արգելված է պատասխանողին») երաշխավորման վրա<sup>9</sup>: Այս մոտեցումը իր արտացոլումն է գտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, որի համաձայն. «Կողմերի ի-

րավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև արդարացի հավասարակշռության իմաստով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որ յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում»<sup>10</sup>:

Վերոշարադրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում ապացույցներ ներկայացնելու իրավական հնարավորությամբ պետք է օժտված լինեն ոչ միայն բողոք բերած անձը, այլև բողոքի դեմ պատասխան ներկայացրած գործին մասնակցող այլ անձինք: Ըստ որում, հարկ է նկատի ունենալ, որ քննարկվող վարույթի նախկին իրավակարգավորումը թեկուզև ոչ ուղղակի նախատեսում էր այսպիսի հնարավորություն: Նման եզրահանգման համար հիմք է ընդունվում ՔԴՕ 204<sup>16</sup>-րդ հոդվածի 2-րդ 4-րդ կետը, որտեղ խոսվում էր դիմումի պատասխանում դրան կցվող փաստաթղթերի ցանկը նշելու անհրաժեշտության մասին:

Դատական ակտի վերանայման բողոքը գործի քննությանը նախապատրաստելուն ուղղված գործողությունները կատարելուց հետո դատարանը ձեռնամուխ է լինում դատական նիստում այն քննելուն: Այսինքն՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի քննության դատավարական ձևը դատական նիստն է<sup>11</sup>:

Գործի քննությունը, ընդհանուր կանոնի համաձայն, իրականացվում է դեմբաց նիստում: Սակայն բոլոր այն դեպքերում, երբ դեմբաց նիստում բողոքի քննությունը կա-

րող է հակասել գաղտնիքների (պետական, ծառայողական և այլն) պահպանության շահերին, դատարանը կարող է այն քննել դեմփակ միստում<sup>12</sup>: Գործը դեմփակ միստում քննելու մասին դատարանը պետք է կայացնի որոշում (ՔԴՕ 8-րդ հոդվ., 3-րդ մաս):

Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ներկա գտնվելու դատական միստին, որոնք պատշաճ ձևով ծանուցվում են միստի ժամանակի և վայրի մասին: Բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում դատարանն իրավունք ունի իր նախաձեռնությամբ դատական միստին կանչել բողոք բերած անձին և գործին մասնակցող այլ անձանց, սակայն նրանց չներկայանալը արգելք չէ գործի քննության համար:

Սահմանված ժամին նախագահողը բացում է դատական միստը և հայտարարում, թե ում բողոքով, որ դատարանի և որ դատական ակտի դեմ բերված բողոքով է քննվում գործը: Այնուհետև նախագահողը պարզում է դատական միստին ներկայացված անձանց ինքնությունը և ստուգում է ներկայացուցիչների լիազորությունները<sup>13</sup>:

Գործի քննությունը սկսվում է դատարանի դատական կազմի համապատասխան դատավորի զեկուցումով, որի ընթացքում զեկուցողը շարադրում է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքի և դրա դեմ ներկայացված պատասխանի փաստարկները: Ձեկուցման իմաստը դրսևորվում է նրանում, որ և՛ գործը քննող դատարանը, և՛ գործին մասնակցող անձինք կարողանան հստակ պատկերացում կազմել գործի հանգամանքների, վերանայվող դատական ակտի էության, ինչպես նաև բողոքի և դրա դեմ ներկայացված բողոքի պատասխանի փաստարկների մասին:

Ձեկուցումը ավարտելուց հետո դատական կազմում ընդգրկված մյուս դատավորներին իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողն և գործին մասնակցող անձանց (ՔԴՕ 217-րդ հոդվ., 4-րդ մաս, 238-րդ

հոդվ., 1-ին մաս): Նման հարցերի կապակցությամբ գործին մասնակցող անձանց բացատրությունները լսելուց հետո, իսկ հարցերի բացակայության դեպքում զեկուցումից հետո դատարանը ավարտում է գործի քննությունը և հայտարարում դատական ակտի հրապարակման վայրը և ժամանակը: Ընդ որում, գործի քննության արդյունքում դատարանը կայացնում է որոշում, որի կայացման, հրապարակման, գործին մասնակցող անձանց հանձնելու և ուժի մեջ մտնելու հետ կապված հարաբերությունները ևս կարգավորվում են ՔԴՕ ընդհանուր դրույթներով:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի քննության գործող դատավարական կարգը սահմանող նորմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ օրենսդիրը որևէ հատուկ կանոն չի ամրագրել գործում առկա, այդ թվում՝ բողոքին կից ներկայացված ապացույցների հետազոտման և գնահատման վերաբերյալ: Ուստի օրինաչափ հարց է առաջանում, թե արդյոք դատարանը պետք է հետազոտի և գնահատի գործում առկա ապացույցները բողոքի հիմնավորվածությունը՝ պարզելու, այսինքն՝ նոր երևան եկած հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար:

Ինչպես հայտնի է, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների առկայության կամ բացակայության մասին հավաստի և ճշգրիտ հետևությունների հանգելու միակ դատավարական միջոցը դատական ապացուցումն է, որը հնարավորություն է տալիս ապահովելու օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացումը: Ընդ որում, դատարանը գործի հանգամանքները կարող է հաստատել բացառապես օրենքով նախատեսված ապացուցման միջոցների օգնությամբ<sup>14</sup>:

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գործում որևէ ապացույցի առկայությունը ինքնին չի ենթադրում դատարանի կող-

**ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ****ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

մից համապատասխան փաստի հաստատում: Դատարանը այդ նպատակով դեռևս պետք է անմիջականորեն ընկալի ապացույցի բովանդակությունը և միայն կատարված վերլուծությունների արդյունքում հանգի որոշակի հետևությունների: Այսինքն՝ դատական ապացուցման մաս են կազմում նաև ապացույցների հետազոտմանը և գնահատմանն ուղղված դատավարական գործողությունները<sup>16</sup>:

Շարադրվածի համատեքստում ակնհայտ է, որ առաջադրված հարցին պետք է տալ դրական պատասխան: Այլ կերպ ասած՝ գտնում ենք, որ առանց գործում առկա ապացույցների հետազոտման և գնահատման դատարանի կողմից նոր երևան եկած հանգամանքների առկայության կամ բացակայության մասին ցանկացած հետևություն խաթարում է դատական ապացուցման հիմքում ընկած ողջ տրամաբանությունը: Այդ իսկ պատճառով հիմնավոր է թվում դատավարական օրենքում համապատասխան լրացում կատարելու մասին Ա.Պ. Տոմինայի առաջարկությունը<sup>16</sup>: Նման եզրահանգումը բխում է նաև այն իրողությունից, որ ՀՀ սահմանադրական դատարանը ևս հատկապես կարևորել է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում ապացուցման գործընթացի հետ կապված սկզբունքների երաշխավորման անհրաժեշտությունը<sup>17</sup>:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի քննության դատավարական կարգը, որոշակի ընդհանրություններով հանդերձ, առանձնանում է ինչպես առաջին ատյանում գործի ըստ էության քննությունից, այնպես էլ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում գործող ընթացակարգերից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում

ենք, որ անհրաժեշտ է ՔԴՕ-ն լրացնել հետևյալ բովանդակությամբ դրույթներով՝

1) **«Հոդված 204.37<sup>2</sup>. Դատական ակտի վերանայման բողոքի պատասխանը**

1. Գործին մասնակցող անձը, նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին դատարանի որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավունք ունի պատասխան ուղարկելու դատարան և գործին մասնակցող այլ անձանց:

2. Դատական ակտի վերանայման բողոքի պատասխանը ներկայացվում է գրավոր, որում նշվում են՝

1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է պատասխանը.

2) պատասխանը ներկայացրած անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները).

3) դատարանի անվանումը, որի կայացրած դատական ակտի դեմ բերվել է վերանայման բողոք, գործի համարը և դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը.

4) բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ դիրքորոշումը և դրա հիմնավորումները.

5) պատասխանին կցվող փաստաթղթերի ցանկը:

3. Ներկայացված պատասխանին կցվում է պատասխանը, իսկ ապացույցներ ներկայացվելու դեպքում՝ նաև ապացույցների պատճենները գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու ապացույցները:

4. Պատասխանը ստորագրում է այն ներկայացրած անձը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած պատասխանին կցվում է նրա լիազորությունները հավաստող լիազորագիրը կամ այլ փաստաթուղթ, եթե այն տվյալ գործով նախկինում չի ներկայացվել»:

2) **«Հոդված 204.37<sup>3</sup>. Դատական ակտի վերանայման բողոքի քննության կարգը**

1. Դատական միստը սկսելու համար սահմանված ժամին նախագահողը բա-



ցում է դատական նիստը, հրապարակում դատարանի կազմը և քննության ենթակա գործը: Դատական նիստի քարտուղարը դատարանին զեկուցում է գործին մասնակցող անձանց՝ նիստին ներկա լինելու, չներկայացած անձանց պատշաճ կարգով ծանուցված լինելու մասին: Նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցված գործին մասնակցող անձանց չներկայանալը արգելք չէ բողոքի քննության համար:

2. Նիստը նախագահողը պարզում է դատական նիստին ներկայացած գործին մասնակցող անձանց ինքնությունը, ստուգում է ներկայացուցիչների լիազորությունները: Այնուհետև դատական նիստը նախագահողը պարզում է՝ ունեն արդյոք կողմերը միջնորդություններ մինչև բողոքի քննության սկիզբը:

3. Բողոքի քննությունը սկսվում է նախագահող դատավորի կամ կոլեգիալ կազմի դատավորի զեկուցումով, որի ընթացքում զեկուցողը շարադրում է բողոքի և բողոքի դեմ ներկայացված պատասխանի փաստարկները:

4. Ձեկուցումը ավարտելուց հետո դատարանը անցնում է գործում առկա ապացույցների հետազոտմանը, որն իրակա-

նացվում է առաջին ատյանի դատարանում ապացույցների հետազոտման կարգը սահմանող կանոններին համապատասխան:

5. Դատական կազմի դատավորները իրավունք ունեն հարցեր տալու դատական նիստին ներկա գործին մասնակցող անձանց, որից հետո բողոքի քննությունը համարվում է ավարտված, և հայտարարվում է դատական ակտը հրապարակելու վայրն ու ժամանակը»:

3) «**Հոդված 204.37<sup>4</sup>. Ապացույցների գնահատումը**

1. Դատական ակտի վերանայման բողոքի հիմքի առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով դատարանը պարտավոր է գնահատել դատական նիստում հետազոտված ապացույցները և հաստատված համարելու նոր փաստ, եթե հետազոտված ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթում դատարանը ապացույցները գնահատում է սույն օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով»:

<sup>1</sup> Տե՛ս *Терехова Л.А.*, Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Дис. ... док. юрид. наук - Екатеринбург, 2008, էջեր 258-259:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2010.06.23/28(762) Հոդ. 709:

<sup>3</sup> Ընդունվել է 17.06.1998թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

<sup>4</sup> Տե՛ս *Պետրոսյան Ռ.Գ.*, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն / Ռ.Գ. Պետրոսյան (իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Լ.Ձ. Թադևոսյանի խմբագրությամբ): - Չորրորդ հրատարակություն. - Երևան.: Ոսկան Երևանցի, 2012, էջեր 544-545:

<sup>5</sup> Տե՛ս *Мазурин С.Ф.*, Гражданский процесс. — СПб., Изд-во «Питер Пресс», 2008, էջ 158:

<sup>6</sup> Տե՛ս *Հովհաննիսյան Վ.Վ.*, Քաղաքացիական գործերով դատական վերանայման ինստիտուտի զարգացման հիմնախնդիրները Հաստատում /Վ.Վ. Հովհաննիսյան: Երևանի պետ. համալսարան: - Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 228:

յաստանում /Վ.Վ. Հովհաննիսյան: Երևանի պետ. համալսարան: - Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 228:

<sup>7</sup> Ընդունվել է 28.11.2007թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007.12.19/64(588), հոդ. 1300:

<sup>8</sup> Տե՛ս *Томина А.П.*, Принцип состязательности на стадиях проверки судебных постановлений в гражданском процессе. Дис. ... к.ю.н.— Москва, 2008, էջ 18:

<sup>9</sup> Տե՛ս *Авдюков М.Г. и др.*, Советский гражданский процесс — М., Изд-во Московского университета, 1964, էջ 22:

<sup>10</sup> Տե՛ս, օրինակ, Սարգոս իրավունքների եվրոպական դատարանի *Դե Հայեսը և Գիսելն ընդդեմ Բելգիայի* գործով 1997 թվականի փետրվարի 24-ի վճիռը, կետ 53, *Պլատակուն ընդդեմ Հունաստանի* գործով 2001 թվականի հունվարի 11-ի վճիռը, կետ 47:

**ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ****ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

- <sup>11</sup> Տե՛ս *Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации* /под ред. **М.А. Викут.** М.: Изд-во «Юрайт», 2012, էջ 517:
- <sup>12</sup> Տե՛ս *Гражданский процесс: Учебник* /Под ред. д.ю.н., проф. **А.Г. Коваленко**, д.ю.н., проф. **А.А. Мохова**, д.ю.н., проф. **П.М. Филиппова.** — М.: Юридическая фирма «КОНТРАКТ»; «ИНФРА-М», 2008, էջ 304:
- <sup>13</sup> Տե՛ս **Алиев Т.Т.,** Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические аспекты, перспективы развития. Дис. ... д.ю.н., - Саратов, 2005, էջ 330:
- <sup>14</sup> Տե՛ս **Боннер А.Т.,** Установление обстоятельств гражданских дел — М.: Городец, 2000, էջ 109:
- <sup>15</sup> Տե՛ս *Гражданский процесс: Учебник.* 3-е изд., перераб. и доп. / Под ред. **М.К. Треушников.** М.: Издательский Дом «Городец», 2010, էջ 268:
- <sup>16</sup> Տե՛ս **Томина А.П.,** Принцип состязательности на стадиях проверки судебных постановлений в гражданском процессе. Дис. ... к.ю.н.— Москва, 2008, էջ 152:
- <sup>17</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-1049 որոշումը (ՀՀՊՏ 2012.10.10/49(923).1 հոդ. 1096.1):

---

## THE JUDICIAL PROCEDURE OF REVIEW OF THE JUDICIAL ACTS BASED ON NEWLY DISCOVERED CIRCUMSTANCES

**Tigran MARKOSYAN**

The present research is done to analyse and discover the procedural features of review of the judicial acts based on newly discovered circumstances.

Taking into account the homogeneous essence of the current judicial activities, objectives and problems, the author has divided separate parts of the appeal survey. Also, the necessity of study and presentation of the other persons' response to the appeal taking part in the litigation, as an

activity in preparation part of the case are emphasised.

Besides, in the light of judicial proof's logic it is founded that the court, reviewing the well-grounded essence of the appeal, in other words – the presence or absence of a newly discovered circumstance, must examine and evaluate the proofs presented in the framework of the case directly.

As a result of the research, the author has deduced some gapes in the present legal regulation, as well as some suggestion has been made to improve civil procedure.

---

**ԲԱՆԱԲԱՅԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ****ПРОБЛЕМА КЛАССИФИКАЦИИ ЛИЧНЫХ  
НЕИМУЩЕСТВЕННЫХ (МОРАЛЬНЫХ) ПРАВ АВТОРА****Евгения Никогосян***Соискатель гражданского и гражданско-  
процессуального права Раоссийско-  
Армянского (Славянского) университета*

**И**сследование юридической литературы и законодательства в области авторского права показывает, что в различные периоды исторического развития названного института отличались также и представления относительно классификации личных неимущественных (моральных) прав автора. Еще в 1902 году в решении Кассационного суда по делу *Cinquin v. Lecocq*, имевшего значительное влияние на формирование взглядов на состав *droit moral*, были перечислены личные неимущественные права автора<sup>1</sup>, хотя в нем отсутствовало положение о полной неотчуждаемости этих прав. Личные неимущественные права авторов в их классическом составе окончательно были установлены законом об авторском праве Франции 1957 года<sup>2</sup>.

Прежде чем перейти к особенностям в подходе определения в законодательствах и доктрине моральных прав автора в современный период развития названного института считаем целесообразным выделить отличительные признаки названных прав. Отметим, что проблема классификации моральных прав автора тесно связана с проблемой их отчуждения, так как именно от того, какие именно права законодатель относит к этим правам, зависит

правовое положение автора и соответственно его правомочия относительно произведения в отношении с третьими лицами. Именно с этой целью считаем необходимым выделить признаки моральных прав автора, для того, чтобы получить более четкое представление о том, какое именно право может быть отнесено к названным, а не к иным правам (под иным имеется ввиду как имущественные права, так и так называемые иные права, к которым закон относит те права, которые по той или иной причине не могут быть отнесены к личным или имущественным правам).

Так, современные исследования в области авторского права в основном содержат указание на такие признаки моральных прав автора, как их неотчуждаемость, непередаваемость, бессрочность, противопоставляя их имущественным правам. Вместе с тем, относительно таких особенностей со стороны государств наблюдаются различные подходы. Последние отражаются, например, либо принятием полной неотчуждаемости и бессрочности личных неимущественных прав автора (Франция), либо предусмотрением частичной возможности их передачи и ограничением срока их действия (Германия), либо допущением свободного отказа от некоторых моральных прав, обеспечивая их охрану лишь до окончания срока охраны экономических прав (США).

Законодательство Республики Арме-

ния указывает на следующие их особенности. В ч. 2 ст. 1102 Гражданского кодекса Республики Армения указывается на их независимость от имущественных прав, а также сохранение личных неимущественных прав за автором, в случае уступки имущественных прав на результат интеллектуальной деятельности. Ч. 3 ст. 1121 ГК, а также ч. 3 статьи 12 действующего закона РА «Об авторском праве» указывают на их неотчуждаемость, непередаваемость, бессрочность охраны, исключая право на отзыв, которое действует только в течение жизни автора. Согласно статье 1103 ГК РА право авторства является неотчуждаемым и непередаваемым и действует бессрочно.

Что касается неотчуждаемости моральных прав и возможности отказа от этих прав следует отметить, что согласно внесенным в 2001 году изменениям в статью 11 Закона 2000 года автору предоставлялось право отказаться от права на неприкосновенность произведения или права использовать либо разрешать использовать произведение под своим именем, под псевдонимом или анонимно. Последнее является свидетельством тому, что законодатель в РА не определился на счет природы личных неимущественных прав автора и, в частности, основных признаков названных прав, что требует дополнительного осмысления со стороны государства.

Не однозначным является подход относительно вышеназванного вопроса даже зарубежным правом континентальной семьи. Например, право Германии, которое следует монистической концепции авторского права, рассматривающей имущественные и неимущественные правомочия автора как связанные между собой части одного единого права, устанавливает невоз-

можность передачи другому лицу авторское право в целом, а также ничтожность полного отказа от него. Допускается передача лишь отдельных аспектов права. Например, § 39 Закона Германии об авторском праве и смежных правах предусматривает, что издатель вправе вносить в произведение изменения, которые являются необходимыми для осуществления его договорных прав. Таким образом фактически получается не передача морального права, а законодательное ограничение авторских прав для соблюдения признанных правом интересов других лиц либо общества в целом<sup>3</sup>. В отличие же от монистического подхода следовательно дуалистического подхода Франция в Кодексе интеллектуальной собственности выделяет имущественные и неимущественные права (ст. L. 121 и L. 122), но вместе с тем в ст. L. 111-1 указывается, что они являются составными частями «исключительного права на нематериальный объект». Следовательно авторское право не может быть полностью уступлено, но также не исключается возможность одностороннего отказа от реализации своего права, которое понимается как частичный отказ от права или отказ от одного из элементов права, но лишь временный.

В странах же англо-саксонской системы также не допускается полная уступка моральных прав, но возможен отказ от этих прав<sup>4</sup>.

Исходя из вышеизложенного, можно сделать вывод, что в обеих правовых семьях вопрос о возможности отчуждения автором моральных прав решается исходя из практических целей, связанных с передачей имущественных прав. Применительно же к отдельным видам моральных прав, естественно, применяется различный подход к

### ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷՔ

возможности передачи этих прав.

Что касается такого признака как бессрочность моральных прав, то ст. L.121-1 Кодекса интеллектуальной собственности Франции прямо устанавливает такой признак моральных прав. В германском законодательстве и доктрине прослеживается тенденция к прекращению охраны моральных прав с истечением срока охраны имущественных прав. Данный подход исходит из монистической теории, согласно которому, как уже выше отмечалось, авторское право рассматривается как единое целое. Срок действия моральных прав подвергается наибольшему ограничению в англо-саксонских странах. Например, в Великобритании эти права действуют лишь до момента окончания имущественных прав (ст. 86 (1)), а в США лишь в течение жизни автора (§106A (d)).

Следует также отметить, что особенности личных неимущественных прав автора также вытекают из положений международных нормативно-правовых актов, в частности Бернской конвенции. Не менее значительное влияние в ходе закрепления законодательствами различных стран некоторых особенностей названных прав оказали множество теорий относительно правовой природы моральных прав автора.

Итак, переходя к вопросу классификации моральных прав, отметим, что п. 1 статьи 6 bis Бернской конвенции называет в качестве личных неимущественных право требовать признание авторства и право противодействовать всякому извращению, искажению или иному изменению произведения, а также любому другому посягательству на произведение, способному нанести

ущерб чести или репутации автора. Закрепляя лишь право авторства и право на неприкосновенность, вместе с тем странам участницам предоставляется право самостоятельно определять перечень этих прав. В связи с этим государства участницы, стремясь приводить национальные законодательства в соответствие с международно-правовыми актами, показывают различный подход при определении личных неимущественных интересов автора, следствием чего является более или менее широкая классификация моральных прав автора. Например, законодательство Великобритании об авторском праве указывает лишь на право быть признанным автором произведения и право на возражение против такого обращения, которое умаляет значение произведения, то есть признаются лишь те моральные права, которые предусмотрены в качестве исходных в ст. 6 bis Бернской конвенции. Страны же континентальной правовой семьи придают большую значимость моральным правам в отличии от системы «копирайт», и, по всей видимости, по этой причине предусматривают более широкий перечень моральных прав. Так, стандартный перечень названных прав, признанный в литературе<sup>5</sup> и, вместе с тем, предусмотренный законодательствами, наряду с правом признаваться автором произведения (*право авторства* или как называется в зарубежной литературе *the right of paternity* или же *the right of attribution*) и *правом на неприкосновенность* (или как некоторые юрисдикции в зависимости от объема этого права называют *правом на защиту репутации*) включает также право решать когда и как делать произведение доступным для всеобщего сведения (*право обнародования*) и *право на отзыв* своего произ-

ведения после опубликования (право на отзыв). Такой классификации следуют такие страны как Франция, Германия, Италия, в том числе и Армения. Отметим также, что в советской литературе<sup>6</sup> к личным неимущественным правам автора относились также право на воспроизведение и распространение, то есть права, которые современным законодательством отнесены к имущественным. Названные права относились к личными неимущественным в силу существующей между ними и правом на опубликование тесной связи, выражающейся в том, что произведение можно опубликовать путем предварительного воспроизведения экземпляров произведения и последующего их распространения. Однако с изменением в государственном и экономическом строе страны изменились и представления относительно моральных интересов автора, и следовательно классификация этих прав.

Необходимо отметить также, что в литературе существует точка зрения, относившее право доступа к моральным правам. Сторонники такого подхода в защиту своей позиции приводят следующие аргументы: во-первых, право доступа способствует реализации творческого начала личности автора; во-вторых, оно не направлено на обязательное получение автором или его наследниками имущественной выгоды (дохода) от использования созданного им произведения; в-третьих, данное право действует только в течение жизни автора; и, наконец, оно не переходит по наследству<sup>7</sup>.

Некоторые страны англо-саксонской правовой семьи в качестве морального права прямо предусматривают право против лжеатрибуции (*the right against false attribution*), то есть право автора противодействовать указанию своего

авторства в отношении не созданных им произведений<sup>8</sup>. Другие же признают данное право в пределах доктрины права на частную жизнь (*right of privacy*)<sup>9</sup>.

Как уже выше отмечалось, впервые моральные права получили окончательное закрепление во французском законе 1957 года «О литературной и художественной собственности»<sup>10</sup> (ст. L.111-1). В последнем указывается, что авторское право включает как атрибуты морального порядка, так и атрибуты экономического порядка, и соответственно, выделяет личные неимущественные и имущественные права. Закон, в свою очередь, содержит следующий перечень моральных прав автора: право на уважение имени автора, право на уважение его авторства, право на уважение его произведения, право на выпуск произведения в свет. При этом следует заметить, что французский законодатель, не раскрывает содержания вышеуказанных прав. Их содержание раскрывается доктриной авторского права Франции.

Относительно рассматриваемого нами вопроса существенные изменения претерпело законодательство Российской Федерации. Статья 15 ранее действовавшего закона РФ «Об авторском праве и смежных правах»<sup>11</sup> предусматривала следующие моральные права: *право авторства, право на имя, право на обнародование*, включавшее также *право на отзыв; право на защиту репутации автора*, содержание которого является более узкой версией права на неприкосновенность. Таким образом названным законом был закреплен точный перечень моральных прав автора. В ныне действующей части IV ГК РФ отсутствует точность в определении видов личных неимущественных прав автора, нет систематизации этих прав и тем самым законодателем, по тем или

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

иным причинам, им придается неопределенный характер. Отметим, что данная неопределенность возникает вследствие следуюших положений ГК РФ. Последним впервые введено понятие интеллектуальных прав (ст. 1226 ГК РФ), которое относится ко всем охраняемым объектам авторского права, смежным правам и промышленной собственности. Интеллектуальные права включают, в первую очередь, исключительное право, которое имеет имущественное содержание. Две другие интеллектуальные права — это личные неимущественные права и иные права. Отметим, что определение иных прав в отдельную группу объясняется тем, что отнесение их к личным или имущественным правам не являлось бы безоговорочным. П. 2 ст. 1228 ГК РФ дает неширокий и вместе с тем неисчерпывающий перечень личных неимущественных прав автора, в качестве каковых указывает лишь право авторства и право на имя. В отношении же других прав ГК РФ не содержит таких определенных указаний. Относительно иных прав, прямо не отнесенных ГК РФ ни к исключительным, ни к иным интеллектуальным правам (а именно права на неприкосновенность произведения, права на обнародование произведения, а также права на отзыв), то никаких конкретных ориентиров для их квалификации текст Кодекса не дает, что представляет собой заметный пробел в регулировании<sup>12</sup>. Вместе с тем можно сделать вывод, что так как принадлежность автору наряду с ними исключительного (т.е. строго имущественного) права оговорена в п. 2 ст. 1255 ГК особо, относиться они могут либо к личным неимущественным, либо к

“иным” интеллектуальным правам.

Что касается Республики Армения, то до принятия 13 мая 1996 года первого закона “Об авторском праве и смежных правах” отношения в сфере авторского права регулировались нормами IV раздела Гражданского кодекса АрмССР, который утратил силу с принятием названного закона. Согласно ч. 1 статьи 11 данного закона автору предоставлялись следующие личные неимущественные права в отношении своего произведения: право быть признанным автором произведения, запретить упоминание своего имени, если желает остаться анонимным, право быть представленным под псевдонимом, право опубликовать произведение, право неприкосновенности произведения (право запечатать искажение, извращение произведения или другое посягательство в отношении произведения).

Далее в связи с присоединением РА ко Всемирной Торговой Организации (ВТО), условием последней в сфере авторского права было исполнение положений Соглашения о торговых аспектах прав на интеллектуальную собственность (далее Соглашение ТРИПС). К концу 90-х годов был составлен также проект нового Гражданского кодекса РА, в главе 63 раздела 10 которого содержались положения относительно авторских прав. Действовавшее же законодательство в данной области в основном противоречило как требованиям Соглашения ТРИПС, так и положениям проекта Гражданского кодекса РА. В связи с этим появляется необходимость внесения многочисленных изменений и дополнений в названный закон. Данное обстоятельство породило необходимость принятия нового закона об авторском праве, который был принят 12 января 2000 года, сохраняя структуру старого закона.



Ст. 11 указанного закона закрепляла следующие личные неимущественные права автора произведения: *право авторства, право на имя автора, право на неприкосновенность произведения*. Данный закон также закреплял признак независимости от имущественных прав автора, а также сохранение за автором личных неимущественных прав после уступки его исключительных прав на использование произведения. В настоящее время личные неимущественные права авторов регулируются ст. 12 закона РА “Об авторском праве и смежных правах”, принятого в 2006 году, а также ст. 1121 ГК РА, согласно которым автору принадлежат помимо права авторства и права на имя, право на защиту произведения от возможных искажений, изменений или от посягательств, способных нанести вред репутации и достоинству автора (право на защиту репутации и достоинства автора), право на первое обнародование произведения в любой форме или право разрешать обнародование произведения (право на обнародование) и право на отзыв. Таким образом, в новом законе расширяется перечень личных неимущественных прав автора, впервые включая в его состав право на первое обнародование произведения и право на отзыв, но вместе с тем широкое право неприкосновенности было заменено более узким правом на защиту репутации и достоинства автора. Возможно такое определение служит буквалному следованию тексту Бернской конвенции. Применительно к названному праву следует отметить, что такие страны как Франция, Бельгия, Австрия, Германия, Швейцария, Греция придерживаются широкого понимания права неприкосновенности (ввиду отсутствия признака ущерба репутации). Более узкая интерпретация данного права

содержится в законодательствах стран Северной Европы. Согласно закону Дании автор вправе возражать против искажения произведения или представления его публике способом или при обстоятельствах, порочащих художественные достоинства произведения и авторитет автора<sup>13</sup>. Такому подходу следуют также Финляндия, Исландия.

Как видно из вышеизложенного армянское законодательство в ходе своего развития использовало обе эти концепции. Однако в отличие от законодательства РФ, которое вернулось к ранее установленному праву на неприкосновенность, ограничило объем данного права признаком ущерба репутации.

Считаем, что право неприкосновенности произведения более точно выражает сущность данного права как личного неимущественного, так как наиболее полно отражает интеллектуальную и личную связь автора с произведением, другими словами, ценность произведения заключается в том, что оно является проявлением личности автора, а право неприкосновенности защищает целостность такого проявления. Внесение любых изменений без согласия автора или, иначе говоря, изменение первоначальной формы произведения, которая была задумана и реализована автором, всегда может причинить вред репутации и достоинству автора. Защита же репутации и достоинства автора сохраняется за автором на общих гражданско-правовых основаниях (ст. 162 ГК РА). Принимая во внимание вышеназванные обстоятельства, необоснованным является также защита репутации после смерти автора, так как кроме автора никто не может судить о причинении вреда его репутации.

Обобщая вышеизложенное, можно

**ՔՂՂՔԱՑԻՎՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ**

отметить, что при определении личных неимущественных прав автора государства показывают различный подход к их перечню, который, как уже выше отмечалось, может быть узким, ограничиваясь лишь исходными правами, предусмотренными Бернской конвен-

цией, либо более широким, представляя более полную защиту моральным интересам автора. Республика Армения, как показывает ход развития законодательства об авторском праве, придерживается второго подхода, но вместе с тем, как видно из вышеизложенного, замечаются тенденции к экономизации авторского права, а также к ослаблению связи между произведением и личной сферой автора.

<sup>1</sup> Natalia C. Suhl. Moral rights protection in the United States Under the Berne Convention: A Fictional Work?// Fordham Intellectual Property, Media and Entertainment Law Journal, том.12 //Berkeley Electronic Press (bepress)., 2002, ст. 1210//<http://ir.lawnet.fordham.edu/iplj>

<sup>2</sup> См. перевод Закона Франции «О литературной и художественной собственности» от 11 марта 1957 г. Гражданское, торговое и семейное право капиталистических стран//Сборник нормативных актов: Авторское право. Учеб. пособие/Под ред. В. К. Пучинского, М. Н. Кузнецова.– М., 1988.–С. 83–107.

<sup>3</sup> См. Е.И. Каминская, личные неимущественные права автора: отказ от ненужных иллюзий или утрата ценностей? / Е.И. Каминская // Актуальные вопросы российского частного права. Сборник статей, посвященный 80-летию со дня рождения профессора В.А.Дозорцева. - М.: Статут, 2008. - С. 224-260.

<sup>4</sup> См. Sect. 87 Copyright, Designs and Patents Act 1988 (of November 15, 1988), § 106 A (e) 17 United States Copyright Law of 1976 (Public Law 94-553 of October 19, 1976)

<sup>5</sup> См., например, Гражданское право. под ред. В.П. Мозолина ст. 47-48.; Гражданское право. Т. 2. 3-е изд., под. ред. Е. А. Суханова, ст. 294; Henri Desbois, Le droit d'auteur en France. 3 изд. 1978 г.,ст. 472; Edward J.

Damich, The Right of Personality: A Common-Law Basis for the Protection of the Moral Rights of Authors, 23 GA. L. Rev. 1 (1988)

<sup>6</sup> См. Антимонов Б.С. Флейшиц Е.А. Авторское право. 1957. -С. 41-48.

<sup>7</sup> См. Д.В. Подносков, Право следования и право доступа в российском авторском праве, дисс.канд. юр. Наук 12.00.03, М. 2006, ст. 58

<sup>8</sup> См. Sect. 84 (1) CDPА, §106A (1) (B) U.S.C., Chapt. 7 113-(1) Copyright and Related Rights Act,2000 of Ireland

<sup>9</sup> См. дело художника-экспрессиониста Эмиля Нольде /Huw Beverley-Smith, Ansgar Ohly and Agnis Lucas-Schloetter, Privacy, Property and Personality. Civil Law Perspectives on Commercial Appropriation //United States of America by Cambridge University Press, New York, 2005, ст.126

<sup>10</sup> Азбука авторского права. - UNESCO. 1985.- ст. 11

<sup>11</sup> Закон РФ «Об авторском праве и смежных правах» от 9 июля 1993г. // [http://www.copyright.ru/ru/library/zakonodatelstvo/avtorskoe\\_pravo\\_i\\_smezhnye\\_prava/ob\\_avtorskom\\_prave\\_i\\_smezhnih\\_pravah/](http://www.copyright.ru/ru/library/zakonodatelstvo/avtorskoe_pravo_i_smezhnye_prava/ob_avtorskom_prave_i_smezhnih_pravah/)

<sup>12</sup> Е.И. Каминская, указ. соч. ст. 224-260.

<sup>13</sup> В.Вейнке, Авторское право:регламентация, основы, будущее.М.: Юрид. Литература, 1979

---

## THE PROBLEM OF THE CLASSIFICATION OF MORAL RIGHTS OF AUTHORS

**Yevgenya NIKOGHOSYAN**

*PHD student, RASU, Chair of Civil and Civil Procedure law*

---

**S**tudy of the legal literature and legislation concerning the rights of authors shows that in the different periods of the development of the mentioned institution there have been various approaches towards the classification of moral rights of authors.

Moral rights of authors established by legislation of different countries (France, Germany, Italy, Russian Federation,

England, USA etc.) and distinctive features by which those rights differ from economic rights (particularly such features like inalienability, nontransferability, perpetuity of that rights) are presented in this article.

Studying the Continental European copyright law and common law copyright a tendency of decaying of the relation between the work and the author's personality can be observed. The latter can be also seen in the provisions of copyright law of the Republic of Armenia in particular the effective legislation established the right of honor and reputation of author instead of the right of work integrity.

---

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԴՐԱԵՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ**

**Արսեն ԹԱՎԱԴՅԱԼ**

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի  
ամբիոնի ասպիրանտ*

Համաշխարհային տնտեսական համակարգերի զարգացման պատմությունը ցույց է տվել, որ առավել արդյունավետ են նրանք, որոնց հիմքում ընկած է շուկայական մրցակցությունը, այսինքն՝ բոլոր ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների «արդար մրցակցությունը», որը հասարակության և նրա քաղաքացիների կարիքների առավել բավարարման առաջնահերթ պայմանն է<sup>1</sup>: Մրցակցությանը վնաս հասցնող գործելակերպերից են հակամրցակցային համաձայնությունները, երբ մի քանի տնտեսվարող սուբյեկտներ պայմանավորվում են չմրցակցել՝ դրանով իսկ վնաս հասցնելով սպառողներին և խոչընդոտելով այլ տնտեսվարող սուբյեկտների մուտքը ապրանքային շուկա կամ դուրս մղելով նրանց այդտեղից:

Ցանկացած օլիգոպոլիստական շուկայում առկա են ֆիրմաների գործելակերպը և գնագոյացման մեխանիզմները համակարգելու խթաններ: Դա հիմնականում կատարվում է ֆիրմաների կողմից ապրանքի բացթողնման միանման գներ սահմանելու միջոցով՝ տվյալ ճյուղի և յուրաքանչյուր ֆիրմայի սեփական շահույթը ավելացնելու համար: Ցանկացած օլիգոպոլիստ, գործելով առանձին, ստանում է ավելի քիչ շահույթ, ուստի նա ձգտում է գործել համաձայնեցված<sup>2</sup>:

Հակամրցակցային համաձայնությունների դեմ ուղղված առաջին օրենսդրական

ակտերը մշակվել են ԱՄՆ-ում: Դեռևս 1890թ.-ին ընդունված Շերմանի ակտի<sup>3</sup> 1-ին հոդվածը հակաօրինական է ճանաչում տրեստը կամ ցանկացած այլ տեսակի պայմանագիրը կամ միավորումը, որի նպատակն է նահանգների կամ օտարերկրյա պետությունների միջև առևտրի կամ արդյունաբերության զարգացման սահմանափակումը:

Հակամրցակցային համաձայնություններն արգելող դրույթներ նախատեսում է նաև Եվրոպական տնտեսական համագործակցության ստեղծման մասին 1957 թ.-ի Հռոմի պայմանագիրը<sup>4</sup>: Դրա 85 հոդվածի 1-ին մասը արգելում է ձեռնարկությունների միջև բոլոր համաձայնությունները, ձեռնանկությունների միավորումների բոլոր այն որոշումները և համաձայնեցված գործողությունները, որոնք կարող են վնաս հասցնել անդամ երկրների միջև առևտրին և որպես նպատակ կամ հետևանք սահմանափակում, կանխում կամ խեղաթյուրում են մրցակցությունը Միասնական շուկայի սահմաններում: Հակամրցակցային համաձայնությունների կանխման վերաբերյալ դրույթ է նախատեսում նաև ՄԱԿ-ի ՅՈՒՆԿ-ՏԱԴ-ի կազմած «Մրցակցության վերաբերյալ տիպային օրենքը»<sup>5</sup>:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված հիմնական իրավական ակտը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքն է<sup>6</sup> (այսուհետ նաև՝ Օրենք): Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հակամրցակցային համաձայնությունների հասկացությունը. «Հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարք-

ները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները (այսուհետ՝ համաձայնություններ), որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը»: Ուսումնասիրենք այս բնորոշման առանձին հատկանիշները:

Ըստ Օրենքի՝ հակամրցակցային համաձայնությունները կնքվում են տնտեսվարող սուբյեկտների միջև: Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է տնտեսվարող սուբյեկտին՝ որպես արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ, այլ կազմակերպություն, դրա ներկայացուցիչ, ներկայացուցչություն կամ մասնաճյուղ, անձանց խումբ, առևտրային ցանց:

Ինչպես տեսնում ենք, Օրենքը տնտեսվարող սուբյեկտների բավականին լայն շրջանակ է նախատեսում: Առանձնահատուկ ուշադրության է արժանի անձանց խումբը որպես մեկ տնտեսվարող սուբյեկտ դիտելը: Օրենքը տալիս է այն պայմանների ամբողջությունը, որոնց դեպքում իրավաբանական և ֆիզիկական անձինք կարող են համարվել միևնույն անձանց խմբի մեջ մտնող: Փաստորեն, այդ պայմանները հանգում են այն մտքին, որ եթե անձինք ունեն ընդհանուր տնտեսական շահեր և որոշակի աստիճանի փոխկապվածություն, նրանք կարող են համարվել նույն անձանց խմբի մեջ մտնող:

Անձանց խումբը որպես առանձին տնտեսվարող սուբյեկտ դիտելը հանգեցնում է հետևյալ եզրակացության. համաձայնությունը ենթադրում է, որ այն պետք է կայացվի երկու և ավելի տնտեսվարող սուբյեկտների միջև: Անձանց խումբը, անկախ այդ խմբի մեջ մտնող իրավաբանական և ֆիզիկական անձանց քանակից, մեկ տնտեսվարող սուբյեկտ է: Ուստի, եթե հակամրցակցային համաձայնությունը կնք-

վում է նույն անձանց խմբի մեջ մտնող երկու կամ ավելի սուբյեկտների միջև, օրենքի իմաստով այն չի կարող հակամրցակցային համաձայնություն համարվել, քանի որ այն չի կնքվում երկու տնտեսվարող սուբյեկտի միջև: Այս նույն միտքը, սակայն համակենտրոնացումների վերաբերյալ, արտահայտել է նաև Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով)՝ նշելով, որ եթե միավորումը տեղի է ունենում նույն անձանց խմբի միջև, այն չի համարվում համակենտրոնացում: Կարծում ենք՝ այս հետևությունը կիրառելի է նաև հակամրցակցային համաձայնությունների համար:

Հակամրցակցային համաձայնությունների սուբյեկտային կազմի առանձնահատկությունը հնարավորություն է տալիս տարբերակելու հակամրցակցային այս վարքագիծը մյուսից՝ արգելված պետական օժանդակության տրամադրումից: Օրենքի 16.1 հոդվածը արգելում է պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից կոնկրետ տնտեսվարող սուբյեկտի կամ տնտեսվարող սուբյեկտների որոշակի խմբի տրամադրվող ցանկացած օժանդակությունը, որն ուղղակի կամ անուղղակի կերպով հանգեցնում կամ կարող է հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը կամ վնասում կամ կարող է վնասել սպառողների շահերը: Այս երկու հակամրցակցային վարքագծերի նմանությունն այն է, որ երկուսի դեպքում էլ առկա է սուբյեկտների բազմաթվությունը: Սակայն հիմնական տարբերությունը, ինչպես բխում է Օրենքից, այն է, որ հակամրցակցային համաձայնությունները կնքվում են միայն տնտեսվարող սուբյեկտների միջև, իսկ հակամրցակցային վարքագիծը արգելված պետական օժանդակություն համարելու համար անհրաժեշտ է, որ առկա լինի պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի մասնակցություն: Այդ մասնակցությունը պետք է նաև փոխ-

## **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

կապակցված լինի տվյալ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի լիազորությունների հետ և որոշակիորեն բխի դրանցից:

Սուբյեկտային կազմի առանձնահատկությունները հնարավորություն են տալիս տարբերակելու հակամրցակցային համաձայնությունները նաև գերիշխող դիրքի չարաշահումից: Վերջինիս դեպքում անհրաժեշտ է, որ առկա լինի մեկ սուբյեկտ, որը ապրանքային շուկայում իր բաժնեմասի կամ այլ հանգամանքների շնորհիվ կարող է ազդել շուկայի իրավիճակի վրա: Այդ իսկ պատճառով արգելվում է վերջինիս կողմից որոշակի գործողությունների կատարումը: Իսկ հակամրցակցային համաձայնությունների դեպքում անհրաժեշտ է, որ որոշակի գործողություն իրականացվի երկու կամ ավելի սուբյեկտների կոմից, և վերջիններիս՝ ապրանքային շուկայում բաժնեմասի չափը որոշիչ չէ:

Հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի կարգավորման միջև տարբերությունը վերլուծելու համար անհրաժեշտ է քննել կոլեկտիվ գերիշխող դիրքի ինստիտուտը, որը նախատեսված է որոշ երկրների<sup>8</sup>, այդ թվում և՛ Հայաստանի օրենսդրությամբ: Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը սահմանում են կոլեկտիվ գերիշխող դիրքի հասկացությունը. «Ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող կամ ձեռք բերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը: Ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գե-

րիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող կամ ձեռք բերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը»:

Չնայած կոլեկտիվ գերակայությունը միջազգային պրակտիկայում բավականին տարածում ստացած ինստիտուտ է, սակայն դրա կիրառումը բավականին վիճելի է և քննադատության է արժանանում տեսական գրականության մեջ: Հեղինակների մի խումբը նշում է, որ «տեսականորեն համատեղ գերիշխող դիրքի պայմաններում չարաշահումը որպես հակամրցակցային օրենսդրության խախտում կարող է ներկայացվել և՛ որպես հակամրցակցային համաձայնություն, և՛ որպես գերիշխող դիրքի չարաշահում»<sup>9</sup>, և «կոլեկտիվ գերիշխող դիրքի ներդրման պատճառն այն է, որ հակամրցակցային մարմինը այդպես էլ չի սովորել ապացուցել այնպիսի խախտումներ, ինչպիսին են տնտեսվարող սուբյեկտների համաձայնեցված գործողությունները, և փորձում է ստանալ ազդեցության նոր միջոցներ, ինչը դժվար թե արդարացի է»<sup>10</sup>: Տեսական գրականության մեջ կոլեկտիվ գերակայությանը երբեմն տրվում են այնպիսի սահմանումներ, որոնք հնարավորություն չեն տալիս դրանք տարանջատել հակամրցակցային համաձայնություններից: Մասնավորապես նշվում է, որ «կոլեկտիվ գերիշխող դիրքը շուկայի դրություն է, որի դեպքում մի քանի խոշորագույն կազմակերպություններ գիտակցված հրաժարվում են միմյանց միջև մրցակցությունից և համախմբված շուկայական իշխանության ուժով իրենց գործողություններով ձևավորում են ապրանքների շրջանառության իրենց ձեռնտու պայմաններ, շուկայից հեռացնում են ընդհանուր մրցակիցներին կամ չեն թույլատրում մրցակիցների մուտքը շուկա»<sup>11</sup>: Այս երկու հասկացությունների միջև շփոթի հիմնական պատճառը դրանց տարբերակման ոչ հստակ լինելն է:

Օրենքի դրույթները ուսումնասիրելիս

հարց է ծագում՝ արդյո՞ք կոլեկտիվ գերիշխող դիրքի դեպքում տնտեսվարող սուբյեկտները պետք է գործեն համատեղ: Եթե այո, ո՞րն է այս տիպի չարաշահումների տարբերությունը հակամրցակային համաձայնություններից, եթե ոչ, ի՞նչ իմաստ կա սահմանել նույն հողվածի մի կետով գերիշխող դիրքի որոշման մեկ պայման՝ ապրանքային շուկայի մեկ երրորդը գրավելը, մյուս կետով՝ այլ պայման<sup>12</sup>:

Որպես կոլեկտիվ գերիշխող դիրքի ինստիտուտի օրենսդրական ամրագրման արդարացում կարող է հնչել հետևյալ միտքը, որ պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերել այն շուկաներին, որտեղ առկա են մեկ մեծ մասնակից ու բազմաթիվ փոքր, և նրանց միջև, որտեղ առկա են մի քանի համեմատաբար մեծ տնտեսվարող սուբյեկտներ, որոնք, սակայն, չեն գրավում որոշիչ բաժնեմաս: Այդպիսի շուկաներում տնտեսվարող սուբյեկտների համար ավելի հեշտ է ազդել շուկայական դրության վրա: Սակայն Օրենքում կատարված փոփոխություններով, որոնք ուժի մեջ են մտել 23 մայիսի 2011թ.-ին<sup>13</sup>, նախատեսվել է այսպես կոչված գերիշխող դիրքի որոշման որակական չափանիշ, ըստ որի՝ անկախ ապրանքային շուկայի բաժնեմասից, եթե տնտեսվարող սուբյեկտն ունի շուկայական իշխանություն, վերջինս կարող է համարվել գերիշխող դիրք գրավող: Ուստի վերոնշյալ արդարացումը նույնպես կիրառելի չէ, քանի որ գերիշխող դիրքի որոշման որակական չափանիշի ներդրումը արդեն իսկ հնարավորություն է տալիս տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին տարբերակված մոտեցում ցուցաբերելու տարբեր ապրանքային շուկաների նկատմամբ:

Օրենքի 5-րդ հոդվածը տալիս է այն ձևերը, որոնցով կարող է դրսևորվել հակամրցակցային համաձայնությունները: Հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների՝ մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը հանգեցնող

– գործարքները,  
– համաձայնությունները,  
– ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը,

– տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները:

Հարկ է վերլուծել հակամրցակցային համաձայնությունների դրսևորման նշված ձևերը առանձին-առանձին՝ մատնանշելով նաև այն հանգամանակները, որոնց առկայության դեպքում հակամրցակցային համաձայնությունը կարելի է համարել ապացուցված:

**Հակամրցակցային համաձայնություն համարվող գործարքներ:** Գործարք ասելով՝ Օրենքի 5-րդ հոդվածը հղում է կատարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքին<sup>14</sup>: Տնտեսվարող սուբյեկտների միջև գործարքը պետք է մեկնաբանել պայմանագրի լույսի ներքո: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ներկայացված պայմանագրերի առանձին տեսակների կարգավորումները արդեն իսկ նախատեսում են որոշակի դրույթներ, որոնք կարող են առնչվել տնտեսական մրցակցության պաշտպանությանը: Մասնավորապես, այդպիսի դրույթներ վերաբերում են գործակալության և ֆրանչայզինգի պայմանագրերին: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 808 հոդվածը նշում է, որ գործակալության պայմանագրով կարող է նախատեսվել որոշակի տարածքում գործող այլ գործակալների (պրինցիպալների) հետ նմանօրինակ պայմանագրեր չկնքելու պարտավորությունը կամ ձեռնպահ մնալու այդ տարածքում գործակալության պայմանագրի առարկան կազմող նմանօրինակ ինքնուրույն գործունեություն իրականացնելուց: 975 հոդվածը նույնպես սահմանում է, որ որոշակի դեպքերում ֆրանչայզինգի պայմանագրով կարող է սահմանվել այլ տնտեսվարող սուբյեկտների հետ պայմանագրեր չկնքելու և պայմանագրային հարաբերությունների մեջ չմտնելու դեպքեր: Պետք է նշել, որ Տնտեսական մրցակցու-

## **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

յան պաշտպանության պետական հանձնաժողովը իր պարզաբանումներից մեկում նշել է, որ ֆրանչայզինգի պայմանագիրը կարող է դիտվել որպես հակամրցակցային համաձայնություն<sup>16</sup>: Կարծում ենք, չնայած նշված հանգամանքին, այդպիսի սահմանափակումները ֆրանչայզինգի պայմանագրում ամեն դեպքում պետք է համարվեն թույլատրելի, քանի որ այդ պայմանագրերով նախատեսվող հնարավոր սահմանափակումները իրականում նպաստում են ապրանքային շուկայի զարգացմանը՝ պաշտպանելով ֆրանչայզինգի պայմանագրի կողմերի մտավոր սեփականության իրավունքները: Հատկանշական է, որ «Մրցակցության պաշտպանության մասին» Ռուսաստանի Դաշնության դաշնային օրենքի<sup>16</sup> 12-րդ հոդվածն ուղղակիորեն նշում է, որ ֆրանչայզինգի պայմանագրերը թույլատրելի են:

Գործարքի տեսքով հակամրցակցային համաձայնության առկայության համար միակ կիրառելի ապացույցը գրավոր պայմանագիրն է: Կարելի է, իհարկե, քննարկել բանավոր պայմանագրի առկայության պայմաններում նշված ձևով կայացված հակամրցակցային համաձայնության առկայության հնարավորությունը: Սակայն, ապացուցման բարդության պատճառով, առավել արդյունավետ է ցանկացած պարագայում, երբ առկա չէ գրավոր պայմանագիր, համարել, որ հակամրցակցային համաձայնությունը դրսևորվել է գործարք չհանդիսացող համաձայնության կամ համաձայնեցված գործողության ձևով, ինչի մասին կխոսվի ստորև:

**Տնտեսվարող սուբյեկտների ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված հակամրցակցային գործողությունները կամ վարքագիծը:** Տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունները առավել հաճախ որևէ կերպ գրավոր չեն ֆիքսվում: Դրանք հիմնականում

դրսևորվում են այդ տնտեսվարող սուբյեկտների վարքագծով: Պետք է նշել, որ հակամրցակցային համաձայնությունների առկայությունն ապացուցել զուտ միայն փաստական ապացուցման հիման վրա բավականին բարդ է: Այդ իսկ պատճառով եվրոպական Միության դատարանը ազատել է հանձնաժողովին հակամրցակցային համաձայնության կոնկրետ փաստը ապացուցելու պարտականությունից, եթե առկա է համաձայնեցված գործողությունների մասին վկայող հանգամանք<sup>17</sup>:

Նմանատիպ մոտեցում նախատեսված է նաև Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, ըստ որի՝ հակամրցակցային համաձայնությունը համարվում է ապացուցված, եթե՝

ա) առկա է այդ մասին վկայող որևէ փաստական տվյալ (այդ թվում՝ ցանկացած գրավոր փաստաթուղթ կամ գրավոր այլ ապացույց, տեսագրություն կամ ձայնագրություն) կամ օրենքով չարգելված ցանկացած այլ ապացույց,

բ) այդ մասին են վկայում տնտեսվարող սուբյեկտների գործողությունները կամ վարքագիծը:

Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը հաստատում է հոդվածի 2-րդ մասում նախատեսված գործողությունների (համաձայնեցված գործողությունների) առկայությունը, այլևս չի պահանջվում համաձայնության առկայության ապացուցումը:

Այս գործիքը շատ արդյունավետ կարող է լինել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի համար հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարի գործում: Սակայն, պետք է նշել, որ Հանձնաժողովը ոչ արդյունավետ է կիրառում Օրենքի նշված դրույթը: Մասնավորապես, ՏՄՊԴՀ-ն իր 21 դեկտեմբերի 2009թ.-ի թիվ 93 Ա որոշման<sup>18</sup> մեջ դեղերի շրջանառության ոլորտում գործող մի շարք տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության միջոց կիրառելիս



հիմնվել է այդ հողվածի վրա: Սակայն հետագայում ՏՄՊՊՀ-ն իր 23 ապրիլի 2010 թվականի թիվ 48-Ա որոշմամբ<sup>19</sup> անվավեր ճանաչեց 93 Ա որոշումը՝ մատնանշելով, որ այն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով: Պրակտիկայի այսպիսի զարգացումները չի կարելի համարել արդարացված, քանի որ հակամրցակցային համաձայնության կայացման փաստի ամրագրումը բավականին բարդ գործընթաց է, և միայն այդ փաստի հիման վրա պատասխանատվության կիրառումը իրավաչափ համարելը բավականին բարդացնում է Համաձայնագրողվի գործունեությունը:

Սակայն պետք է ի նկատի ունենալ, որ համընկնող վարքագիծը ոչ միշտ է վկայում հակամրցակցային համաձայնության առկայության մասին: Այդ գործողությունները պետք է նաև բավարարեն որոշակի պայմաններ: Տեսական գրականության մեջ առանձնացնում են հետևյալ երկուսը՝

– այդ գործողությունների արդյունքը համապատասխանում է համաձայնության բոլոր մասնակիցների շահերին, եթե միմյանց գործողությունները նախապես հայտնի են մնացածին,

– տնտեսվարող սուբյեկտների գործելակերպի փոփոխությունը պայմանավորված է այլ տնտեսվարող սուբյեկտների գործելակերպով և ոչ թե տնտեսական գործոնների արդյունք է, որոնք հավասար չափով ազդում են մնացած տնտեսվարող սուբյեկտների վրա<sup>20</sup>:

Ինչպես նշվեց, առաջին պայմանը միմյանց գործողությունների նախապես հայտնի լինելն է: Համաձայնեցված գործողությունների դեպքում կանխատեսելիությունը տնտեսվարող սուբյեկտների նպատակներից մեկն է<sup>21</sup>: Առանց տեղեկատվության փոխանակության տնտեսվարող սուբյեկտների համար շատ բարդ կլինի համաձայնեցնել իրենց գործողությունները:

Սակայն հնարավոր է, որ տեղեկատվության փոխանակության փաստ առկա

չլինի: Այդ պատճառով հաճախ նշվում է, որ գործողությունը որպես համաձայնեցված հակամրցակցային որակելու համար տեղեկատվության նախնական փոխանակումը լրացուցիչ չափանիշ է, բայց ոչ պարտադիր<sup>22</sup>:

Համաձայնեցված հակամրցակցային գործողությունները ապացուցված համարելու համար բավարար է, որ տնտեսվարող սուբյեկտների վարքագծի փոփոխությունները կապված լինեն ոչ թե որոշակի տնտեսական օբյեկտիվ պայմանների փոփոխության հետ, այլ պայմանավորված լինեն մյուս տնտեսվարող սուբյեկտի վարքագծի փոփոխությամբ: Մասնավորապես, եթե մեկ ապրանքային շուկայում տնտեսվարող սուբյեկտները փոփոխեն իրենց վարքագիծը, օրինակ՝ իջեցնեն կամ բարձրացնեն վաճառվող ապրանքի գինը զուտ այն պատճառով, որ մյուս տնտեսվարող սուբյեկտը այդպես է վարվում, կարելի է հակամրցակցային համաձայնեցված գործողության առկայությունը ապացուցված համարել: Միևնույն ժամանակ, տվյալ պարագայում պետք է բացակայեն այլ օբյեկտիվ տնտեսական պայմաններ, մասնավորապես՝ հարկերի, այլ վճարների, հումքի, փոխադրումների գների փոփոխությունները:

Որպես համաձայնեցված գործողությունների ապացուցման աղբյուր կարող են ծառայել հանդիպումների արձանագրությունները, նամակագրությունը, նախկին աշխատողների, հաճախորդների, մրցակիցների հետ հարցազրույցները<sup>23</sup>: Այսպես, ամերիկյան ամենահայտնի հակամենաշնորհային գործերից մեկում (U.S. Steel ընկերության դեմ) որպես հակամրցակցային գործողությունների առկայության հիմնավորում բերվում էին այսպես կոչված «Հարիի մոտ ընթրիքները»՝ պողպատագործական արդյունաբերության ղեկավարների պարբերական հանդիպումները<sup>24</sup>:

Ուստի առաջարկում ենք Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրել, որ հակամրցակցային համաձայնությունը հա-

## **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

մարվում է ապացուցված, եթե այդ մասին են վկայում տնտեսվարող սուբյեկտների գործողությունները կամ վարքագիծը, եթե դրանք պայմանավորված չեն տնտեսական սուբյեկտներից անկախ տնտեսական պայմանների փոփոխությամբ:

**Տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները որպես հակամրցակցային համաձայնություն:** Մրցակցային իրավիճակին վնաս հասցնող համաձայնեցված վարքագիծ դրսևորելու ցուցումներ կարող են պարունակվել նաև տնտեսվարող սուբյեկտների տարատեսակ միավորումների՝ առևտրաարդյունաբերական պալատների, գործատուների միությունների կողմից ընդունվող որոշումներում: Անհրաժեշտ չէ, որ այդ որոշումները լինեն պարտադիր տվյալ միավորման անդամ տնտեսվարող սուբյեկտների համար: Ձուտ այն հանգամանքը, որ այդ որոշումը արդեն իսկ ուղղակի ցուցում է պարունակում կատարելու որոշակի գործողություն, որը, փաստորեն, հակամրցակցային է, բավարար է որոշումը հակամրցակցային համաձայնություն որակելու համար:

Սակայն, հիմնականում այս ձևով կայացվող հակամրցակցային համաձայնությունները ուղղակի հրահանգ չեն պարունակում: Հակամրցակցային վարքագիծ դրսևորելու ցուցումները նշված են լինում անուղղակի՝ քողարկելու համար ոչ իրավաչափ վարքագիծը: Այդ դեպքում տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները հակամրցակցային համաձայնություն որակելու համար բավարար է, որ այդ տնտեսվարող սուբյեկտների վարքագծի փոփոխությունը պայմանավորված չլինի տնտեսական գործոնների փոփոխությամբ, այլ ի հայտ եկած լինի այդ որոշումը կայացնելուց հետո:

**Տնտեսվարող սուբյեկտների՝ գործարք և համաձայնեցված գործողություն չհանդիսացող այլ համաձայնությունները:** Ինչպես

նշվեց, Օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ հակամրցակցային համաձայնություններ են տնտեսվարող սուբյեկտների ոչ միայն գործարքները (պայմանագրերը) և համաձայնեցված գործողությունները, այլև «համաձայնությունները»:

Պետք է նշել, որ գրականության մեջ կարծիքներ են հնչում, որոնց համաձայն հակամրցակցային համաձայնությունները կարող են դրսևորվել միայն գործարքների կամ համաձայնեցված գործողությունների ձևով. եթե գրավոր գործարք առկա չէ, ապա տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է համաձայնեցված գործողությունների առկայություն: Նշվում է, որ համաձայնությունները կարող են լինել գրավոր և բանավոր, և եթե գրավոր համաձայնությունը բավականին հեշտ ապացուցելի է, ապա բանավոր համաձայնությունը հաստատելու համար անհրաժեշտ է վկաներ կանչել, օգտագործել այլ ապացույցներ, ինչը անիրական է: Այդ իսկ պատճառով հակամրցակցային բանավոր համաձայնությունները հաճախ որակվում են որպես համաձայնեցված գործողություններ<sup>26</sup>: Դ. Ա. Պետրովի այս միտքը այլ կերպ ներկայացնում է Ա. Ն. Վարլամովան, ով առաջարկում է համաձայնեցված գործողությունների բնորոշման մեջ նշել, որ վերջիններս կնքվում են բանավոր<sup>26</sup>: Նշվում է նաև, որ հակամրցակցային համաձայնությունների կայացման ձևերի մեջ, գործարքներից և համաձայնեցված գործողություններից բացի, համաձայնությունները նշելը առնվազն ավելորդ է<sup>27</sup>, քանի որ դա իր վրա իրավական բեռ չի կրում:

Սակայն կարծում ենք՝ այս մոտեցումը հիմնավորված չէ. հակամրցակցային համաձայնությունները կարող են կայացվել ինչպես գործարքների, համաձայնեցված գործողությունների ձևով, այնպես էլ այնպիսի համաձայնությունների, որոնք չեն կարող որակվել որպես գործարք և համաձայնեցված գործողություն:

Պայմանագիրը, ըստ քաղաքացիական

օրենսգրքի, համաձայնություն է, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն: Յետևաբար, բոլոր պայմանագրերը համաձայնություն են, բայց ոչ բոլոր համաձայնություններն են պայմանագիր: Այս տեսանկյունից, մասնավորապես, հնարավոր է, որ տնտեսվարող սուբյեկտների միջև առկա լինի որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնություն, որը, սակայն, չառաջացնի, փոփոխի կամ դադարեցնի որևէ քաղաքացիական իրավունք կամ պարտականություն: Միաժամանակ, տնտեսվարող սուբյեկտները դեռ սկսած չլինեն համաձայնեցված գործողություններ: Այդ համաձայնությունը, միևնույն է, կհամարվի պատժելի, քանի որ Օրենքի 36-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հակամրցակցային համաձայնություն կայացնելու համար, և անհրաժեշտ չէ, որ տվյալ պարագայում առկա լինի որևէ հետևանք՝ տնտեսական մրցակցության կանխման ձևով:

Համաձայնությունները մրցակցային օրենսդրության տեսանկյունից ավելի լայն երևույթ են, քանի որ կարող են ինչպես հաստատել, փոփոխել կամ դադարեցնել կողմերի իրավունքները կամ պարտականությունները (այսինքն՝ կարող են լինել քաղաքացիաիրավական պայմանագիր), այնպես էլ կարող են զուտ արձանագրել կողմերի ցանկությունները երրորդ անձանց կամ իրենց վերաբերյալ յուրաքանչյուրի ապագա գործողությունների մասին: Ցանկությունը որոշակի գործելակերպի վերաբերյալ գաղափար է, ենթադրություն<sup>28</sup>:

Այսինքն՝ Օրենքի 5-րդ հոդվածի իմաստով համաձայնությունը կողմերի բանավոր կամ գրավոր ձևակերպված մտադրություն է, որը, սակայն, չունի քաղաքացիաիրավական պայմանագրին բնորոշ հատկանիշներ: Ուստի գործարք չհամարվող համաձայնությունը որպես հակամրցակցային համաձայնության կայացման ձև

նշելը արդյունավետ է, քանի որ հնարավորություն է տալիս կանխելու նաև մրցակցությանը վնաս հասցնող այն վարքագծերը, որոնք չեն կայացվել պայմանագրերի տեսքով, դեռ առկա չէ համաձայնեցված գործողություն, սակայն այդ համաձայնության նպատակը մրցակցության սահմանափակումը, կանխումը կամ արգելումն է: Այդպիսի համաձայնության առկայությունը ապացուցելու համար կարող են կիրառվել ինչպես գրավոր ապացույցներ՝ նամակներ, արձանագրություններ, այնպես էլ վկաների ցուցմունքները:

Տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված գործարքները, համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները որպես հակամրցակցային համաձայնություն որակելու համար անհրաժեշտ է, որ դրանք ուղղակի կամ անուղղակի հանգեցնեն կամ հնարավոր լինի հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Այսինքն՝ անպայման չէ, որ տնտեսվարող սուբյեկտները նպատակ ունենան սահմանափակելու, կանխելու կամ արգելելու մրցակցությունը: Չուտ այն հանգամանքը, որ իրենց վարքագիծը օբյեկտիվորեն հանգեցնում է կամ կարող է հանգեցնել այդ հետևանքին, բավարար է տնտեսվարող սուբյեկտներին հակամրցակցային համաձայնություն կայացնելու համար պատասխանատվության ենթարկելու համար:

Այն, թե ինչին կարող են վերաբերել հակամրցակցային համաձայնությունները, հնարավորություն է տալիս տարբերակել դրանք մասնավորապես համակենտրոնացումներից: Երկու դեպքում էլ մասնակից են երկու կամ ավելի տնտեսվարող սուբյեկտ: Սակայն եթե հակամրցակցային համաձայնությունների արդյունքը մրցակցության սահմանափակումը, վնասումը կամ արգելումն է, համակենտրոնացումների նպատակը այլ է: Դրա հետևանքով եր-

## **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

կու կամ ավելի տնտեսվարող սուբյեկտ որոշակիորեն միավորվում են: Համակենտրոնացումը կարող է չվնասել մրցակցությանը: Սակայն եթե ՏՆտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը գտնի, որ համակենտրոնացումը վնաս է պատճառում մրցակցությանը, ապա կարող է արգելել այն կամ դրա մասնակիցներին առաջադրել կատարման համար պարտադիր լրացուցիչ պայմաններ կամ պարտավորություններ:

Այսինքն հակամրցակցային համաձայնությունների և համակենտրոնացումների տարբերությունը դրանց ուղղվածության մեջ է: Այս առումով հատկանշական է ՏՆտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 18.07.2012թ.-ի 292 Ա որոշումը<sup>9</sup>: Այդ որոշ-

մամբ Հանձնաժողովը քննարկեց հետևյալ դեպքը. յոթ ընկերություն կնքում են գործակալման պայմանագիր մեկ ընկերության հետ, որով վերջինս իրավունք է ստանում գործելու այդ ընկերությունների հաշվին, այդ թվում՝ կնքել պայմանագրեր, անել հայտարարություններ և իրականացնել գործադիր մարմնի այն իրավունքները, որոնք հնարավոր է իրականացնել լիազորագրի միջոցով: Հանձնաժողովը իրավաջիորեն համարել է, որ տվյալ դեպքում առկա է ոչ թե հակամրցակցային համաձայնություն, այլ համակենտրոնացում, քանի որ գործակալման պայմանագիրը հանգեցնում է ոչ թե մրցակցության սահմանափակման, վնասման կամ արգելման, այլ այդ պայմանագրի միջոցով մեկ տնտեսվարող սուբյեկտ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող է ազդել ուրիշների որոշումների կայացման վրա, ինչը, ըստ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, համակենտրոնացում է:

<sup>1</sup> Տե՛ս Кинев А. Ю. Картели и другие антиконкурентные соглашения: право и практика, Инфотропик Медиа. М., 2011, էջ 3:

<sup>2</sup> Տե՛ս Авдашева С. Б., Розанова Н. М. Доминирующее положение и антиконкурентные соглашения, Экономический вестник Ростовского государственного университета, 2004, том 2 N 2. P., էջ 118:

<sup>3</sup> Շերմանի ակտի տեքստը հասանելի է այստեղ՝ <http://www.law.cornell.edu/uscode/text/15/chapter-1>

<sup>4</sup> Եվրոպական տնտեսական համագործակցության ստեղծման մասին Հռոմի պայմանագրի տեքստը հասանելի է այստեղ՝ [http://www.ab.gov.tr/files/ardb/evt/1\\_avrupa\\_birligi/1\\_3\\_antlasmalar/1\\_3\\_1\\_kurucu\\_antlasmalar/1957\\_treaty\\_establishing\\_eec.pdf](http://www.ab.gov.tr/files/ardb/evt/1_avrupa_birligi/1_3_antlasmalar/1_3_1_kurucu_antlasmalar/1957_treaty_establishing_eec.pdf):

<sup>5</sup> ՅՈՒՆԿՏԱԴ-ի կազմած «Մրցակցության վերաբերյալ տիպային օրենքի» տեքստը հասանելի է այստեղ՝ [http://www.un.org/ru/documents/decl\\_conv/conventions/pdf/law\\_competition.pdf](http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/pdf/law_competition.pdf)

<sup>6</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետու-

թյան օրենք N ՀՕ 112, ՀՀՊՏ 2000.12.15/30 (128):

<sup>7</sup> Տե՛ս Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 11 դեկտեմբերի 2009թ.-ի դ 91-Ն որոշումը «Համակենտրոնացման վերաբերյալ պաշտոնական պարզաբանման մասին»:

<sup>8</sup> Տե՛ս օրինակ՝ Закон о защите экономической конкуренции Украины. No 2210-III:

<sup>9</sup> Տե՛ս Шаститко А. Е. Государственная политика в отношении соглашений и согласованных действий, ограничивающих конкуренцию. М.: ТЕИС, 2004 էջ 37:

<sup>10</sup> Варламова А. Н. Конкурентное право России – М.: ИКД «Зерцало-М», 2008, էջ 294:

<sup>11</sup> Տե՛ս Сушкевич А. Коллективное доминирование: Становление института // Хозяйство и право // 2009, 7 էջ 91:

<sup>12</sup> Տե՛ս Ա. Թավադյան, Մենաշնորհային և գերիշխող դիրքի կարգավորումն «Ըստ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, Պետություն և իրավունք, թ. 3 (49), էջեր 40-47:

- <sup>13</sup> Տե՛ս ԶԶ օրենքը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ԶԶ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԶԶՊՏ 2011.05.13/27(830) հոդ. 656:
- <sup>14</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք ԶԶՏՊ 1998.08.10/17(50):
- <sup>15</sup> Տե՛ս Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 19 օգոստոսի 2011թ.-ի դ 340-Ն որոշումը «Տնտեսվարող սուբյեկտների կողմից կնքվող ֆրանչայզինգի պայմանագրի վերաբերյալ պաշտոնական պարզաբանման մասին»:
- <sup>16</sup> Տե՛ս Գեդերալնի Զոն «Օ Զաշիտե Կոնկուրենցիի» օտ 18.07.2009 N 181-Փ3 <http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=132761>
- <sup>17</sup> Տե՛ս Judgment of the Court of First Instance (Fifth Chamber, extended composition) of 26 October 2000. - Bayer AG v Commission of the European Communities. - Competition - Parallel imports - Article 85(1) of the EC Treaty (now Article 81(1) EC) - Meaning of "agreement between undertakings" - Proof of the existence of an agreement - Market in pharmaceutical products. - Case T-41/96.<http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:61996A0041:EN:HTML>
- <sup>18</sup> Տե՛ս Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 21 դեկտեմբերի 2009թ.-ի թիվ 93 Ա որոշում:
- <sup>19</sup> Տե՛ս Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 23 ապրիլի 2010 թվականի թիվ 48-Ա որոշում:
- <sup>20</sup> Տե՛ս Սետրօվ Դ. Ա. Անտիմոնօպօլնօե Զոնօդատելնօե; տեօրիա և քրաքտիկա քրիմենենիա, - Նեստօր-Իստօրիա, Տանքտ-Սետերբուրք, 2012, էջ 106:
- <sup>21</sup> Տե՛ս Տուշքեվիչ Ա. Գ. Անտիկոնկուրենտնօե սօղաշենենիա: Զաքրետօ, Իսքլյուչենիա Իզ Զաքրետօ և Իք քրեդելօ և նօվօմ Գեդերալնօմ Զոնօն «Օ Զաշիտե կոնկուրենցիի», Զոնօն Րօսսիի: օքսիտ, անալիզ, քրաքտիկա. 2007, N 6, էջեր 36-37:
- <sup>22</sup> Տե՛ս Սենքօ Է. Յ. Տօօտնօշենիա քօնօնի «սօղաշենենիա» և «սօղասօննօննօե Զեյստօնօն» և Րօսսիյսքօմ անտիմօնօպօլնօմ Զոնօնօդատելնօե, Զոնօն, 2008, N 2, էջեր 37-40:
- <sup>23</sup> Տե՛ս Յարլաօօօ Յ. Ն. Քրաօօօե օբեսքրենենիա Րազնիտիա կոնկուրենցիի: Սքեբնօե քօսօբիե. - Մ.: Տտատ, 2010, էջ 183:
- <sup>24</sup> Տե՛ս Բեստ Մ. Նօօօօ կոնկուրենցիա. Ինստրումենտօ քրօմօշլեննօմ քօլիտիկա. Մ.: ՏԷԻՏ, 2002, էջեր 101-102:
- <sup>25</sup> Տե՛ս Սետրօվ Դ. Ա. Անտիմօնօպօլնօե Զոնօնօդատելնօե; տեօրիա և քրաքտիկա քրիմենենիա, - Նեստօր-Իստօրիա, Տանքտ-Սետերբուրք, 2012, էջ 105:
- <sup>26</sup> Տե՛ս Յարլաօօ Յ. Ն. Կոնկուրենտնօե քրաօ Րօսսիի. ԻԿԴ «Զերցալօ-Մ», Մօսքօօ, 2008, էջ 319:
- <sup>27</sup> Տե՛ս Քրօբլեմօ կարտելիօօնենիա Րօսսիյսքի քրնքօօ // Գօսսադարստեննօն կոնկուրենտնօն քօլիտիկա և ստիմուլիօնենիա կոնկուրենցիի և Րօսսիյսքօմ Գեդերալնօմ Մատերիալօ Յերօս. նաւք.-քրաքտ. կօնք. 10 քրելօ 2007, Մօսքօօ, էջ 226:
- <sup>28</sup> Տե՛ս Սետրօվ Դ. Ա. Անտիմօնօպօլնօե Զոնօնօդատելնօե; տեօրիա և քրաքտիկա քրիմենենիա, - Նեստօր-Իստօրիա, Տանքտ-Սետերբուրք, 2012, էջ 105:
- <sup>29</sup> Տե՛ս Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 18 հուլիսի 2012թ.-ի 292- Ա որոշումը:

---

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ****WAYS OF EXPRESSION OF ANTI-COMPETITION AGREEMENTS, DIFFERENTIATION THEREOF FROM OTHER ANTI-COMPETITION BEHAVIORS****Arsen TAVADYAN**

*Post-graduate student of the Chair of the Civil Law department of the Yerevan State University*

---

**T**he article covers the survey of elements of anti-competition agreements. The survey of such elements in the meantime gives differentiation between anti-competition agreements and other expressions of anti-competition behavior.

Here the institute of collective dominant position is analyzed. It is noted that,

although this institution has sufficient spread in the international practice, it is criticized in the scientific literature.

The ways of expression of anti-competition agreements are analyzed. There are also described the conditions upon which existence consistency of anti-competition agreements can be considered as proved.

There is proposed to make supplementation to the RA Law "On Protection of Economic Competition" with the purpose of avoiding any confusion between expressions of anti-competition agreements and regular economic behavior.

---

## MARRIAGE, AN EXCEPTIONAL CONTRACT

**Gholam REZA SHIRAZI**

*PHD student of private law in  
Yerevan State University*

---

**Introduction.** According to the social history of mankind, human has to adjust to the rules and regulations in order to co-existence. diversity of cultures, rituals and customs is resulted in diversity of structures and frameworks in which conventions fall. Individuals who seek a disciplined and particular relations, choose their favorite pattern and frame with regard to their needs. The way of emergence and conditions of obligations depicts their mutual rights, as well as, determines their particular effects. That is why it is believed that legal actions are originated from willing, intention and mutual consent.[1,p.9]

In this study, we try to find an answer to the question whether marriage is a usual (common) convention, like other contracts, or not.

### **1- Law affairs**

The law includes a set of life rules and regulations in the society. In other words, the codes regulate social relations of mankind. Law affairs are divided into two groups of law actions and incidents(occurrences). The law occurrence is an incident by human(consciously or unconsciously) or other agent in the external world. Consequently, it is followed by legal effect(s)[2,p.33]. In other words, the effect of law occurrences does not depend on its doer's will, instead, the law confirms its effect(s). For example: usurpation, birth, death, intentional destruction.

The law actions consist of the conditions which are constructed by including will of

individual(s) in the credit world in order to prove realization of the law effects. The law actions, by extension, are divided into the following categories: a) the law actions which need composition such as transactions and unilateral acts(eigha), b)those which rely on the will, but they do not need composition because they are news such as; claim, testimony, confession[3,pp17-18].

The word (eigha)- unilateral will- literally means realization. In the law term; it is composition of a law essence to a will. For example, we mention divorce in Iran's law which depends only on the husband will and does not need the acceptance of wife.

Transaction is a law condition which is the result of mutual agreement of two or more persons' will in a nominal form. The will of the individuals who want to enter a transaction, move and work harmoniously in the mental and psychological world. To make a transaction essence the will of two persons- natural or legal- are necessary as the two parties of the contract. Therefore; transaction consists of mutual cooperation of two or some persons' will in formation of a law essence[2,pp.39-47].

Iran's civil code in article 183 has defined the contract as follows: a contract is concluded when one or more person(s) enter into a mutual agreement with one or more other person(s) regarding a specific matter and where the obligations involved are accepted by all parties. Law professors find this definition incomplete.

### **2- Definition of Marriage**

Marriage and family is not a new phenomenon. It has been among all nations and societies and its background dates back to the creation of Adam on the Earth. With regard to its own tradition, costumes and culture, each nation and community, did it as

---

## **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՄ**

they do it in our contemporary time. In Iran, the civil law has not a comprehensive definition for marriage and it dominantly deals with its conditions and impacts. In the legislated law of Iran, marriage is a civil contract and it keeps its public aspect and religious situation like the past periods. In the civil law of Iran, marriage is not taken into account as formality contract and it is held by the couple consent and agreement and not being registered in the marriage office would not result in invalidity [4,p.45].

Law professors have produced different definitions for marriage that is implied below:

Marriage contract means the legislative relation between man and woman by a contract and it gives them the right of sexual enjoyment [5,p. 286].

Marriage contract is a legal-emotional relation by a contract between man and woman and it gives them the right of living together and the evident manifestation of this relation is sexual enjoyment [6,p.42].

Lord Penzes defines marriage contract as intentional and exclusive union of man and woman for a life time [7,p. 27].

One of the sociologists recognizes three factors causing marriage: instinct of having a child, economic need and love [8,p. 15].

Marriage is a divine treaty and legal-emotional relation by a contract between man and woman and give them the right of living together. The right of private enjoyment is the evident manifestation of this relation [9,p. 13].

By use of article one and ten in Family Law of Republic of Armenia, marriage is defined as: it is a contract relation based on mutual intention and consent of a man and woman. By this contract, both man and woman recognize mutual love, respect, protection and responsibility. The contract

contains both property and non-property aspects.

Marriage is a contract that is the basis of family couple relation between man and women, therefore, it should have the basic conditions of other contracts. But what are the general conditions of contracts?

### **3- General conditions of contracts**

By general conditions of contracts, we mean those terms which are not for a particular one. In other words, the general conditions includes the entire contracts. Article 190 of Iran's civil code has declared : for a contract to be valid, the following conditions must be met. 1- the intention and mutual consent of all parties to the contract. 2- the legal capacity of all parties. 3- the existence of a definite subject-matter to the contract. 4- that the basis of the transaction is lawful.

Some general conditions as intention and consent are resulted from freedom of domination of humans' will (ruling human will) in the social relations as well as analysis of the relations. It is impossible for a normal conscience to accept law realization without intention and consent. Some general conditions as legitimacy and prosperity of subject protect and guard social and judicial order.

The basic condition of intention and consent contain both sides. Therefore, if one side is in lack of intention and consent, the contract shall not be valid. In law action, consent consists of desire for doing the action. It is achieved in the decision-making stage after assessment. If intention or will of composition is the constructor element of the contract, it will be realized in the next stage- namely stage of execution of decision [2,pp.133-137].

#### **a. Capacity**

In law term capacity means human's competence for possession or exercise of rights and duties. Article 956 of Iran's civil code and paragraph 2 of article 20 in civil code of Armenia have defined the capacity



of possession of right in the same way as: "a human being possesses the capacity to exercise rights from the moment of birth to the death." Thus, by alive birth, everybody achieves condition of citizenship rights and duties. According to article 958 of Iran's civil code, legal capability is the necessary condition to apply and exercise civil rights. It puts it so : " every human being is entitled to the enjoyment of civil rights but may only exercise those rights if they are legally qualified to do so."

The question raised here is that what is legal capability, and who has legally qualified to do so? Article 211 of the same code reply in this way:"for parties to a contract to be competent, they must be of full legal age, in full command of their senses and fully mature." So, to exercise civil rights, one must be of full age, sane and mature. Paragraph 1 of article 24 in civil code of R. Armenia determines that capacity of a citizen by his actions to acquire and exercise civil law rights, to create for himself civil law duties and to fulfill them(civil law dispositive capacity) arises in full with the attainment of maturity, i.e., on the attainment of the age of eighteen. The same article and article 30 in the civil code of Armenia has recognized some kind of incomplete or partial capacity for ages between 14-18. By article 10 of family code of Armenia in which the marriage age is 17 for women and 18 for men, and paragraph 3 of article 24 in civil code, it is concluded that the age of full civil law dispositive capacity for women is 17 provided that they are married. Moreover, according to article 22 in civil code the age of complete capacity can be less than 17 or 18 for both men and women based on the necessity or expedience.

The condition of capacity, in fact, returns to the condition of intention and consent. In other words, the person who is lack of capacity, he/she is lack of composition intention and consent or legal valid consent.

The annulment and not binding of law actions of individuals who are lack of capacity refer to the lack of one of the two elements- intention or consent. Besides, reason is the obligatory condition for capacity, because without reason, intention of composition is impossible. Moreover, maturity and growth are necessary because the insane and minor that is capable of making decision cannot recognize their benefits; therefore, they are lack of legal valid consent, although they can have intention of composition[2,pp.253-254].

#### **b. Maturity**

In legal term, maturity means passage of individual into the natural perfection in which the sexual force is awakened and the individual becomes ready for marriage. This stage of natural trend is accompanied by a kind of rational and mental evolution, although it is not by itself enough for ending incapacitated period. moreover the maturity must be proved. The note of article 1210 in Iran's civil code has determined 9 lunar year for girls and 15 lunar year for boys to be accounted as mature. The second note of the same article declares that on reaching the age of maturity, the property of minors can be transferred to them provided that it is established that they have been matured. By these two notes, it is concluded that reaching the age of maturity decisively does not mean maturity.

With regard to the note of the one article of permission of opening deposit account for infants; mother can open an account for her orphan child, and she can withdraw money from this account until the child reaches 18 solar year.

The article 1 of the code of infants and adolescences protection, protects the entire individuals who are below 18. According to this article and other articles, it is concluded that the age of 18 is the circumstantial evidence of full maturity for both men and women; so, everybody who intends to

## **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔ**

achieve full dispositive capacity has to prove his/her maturity before the age of 18.

### **4- Conditions for Family Formation**

As mentioned before, family is constructed by two persons -a woman and man-through marriage contract. Man and woman who recognize their readiness for acceptance of the responsibility, those who believe their ability as father or mother, should sign this contract. Now, we deal with the conditions of the two persons:

#### **a. Age Condition**

Marriage is a contract; therefore, it should have all general conditions of contracts including intention and consent of the participants and their legitimization consisting mature, rational. Note 1, article 1210 civil code has declared age 15 for boys' and 9 for girls' maturity. Also, note 2 say an immature orphan can get his/her properties if his/her maturity has been proved.

Actually, marriage contract has simultaneous financial and non-financial commitments. Now, the question is whether we can define a financial commitment for a boy whose age is 15 but his maturity has not been proved in the court. Certainly the answer is negative because the boy, in the marriage contract, undertakes to pay a property to the girl as alimony. Although article 1041 in civil code approved by Expediency Council declare: Marriage contract of a girl below 13 and a boy below 15 is possible by their parents or master's permission and recognition of a just court, according to the precedent united verdict number 37/62 in 23/12/1985 reaching the age of maturity is not enough for any financial activity but his/her maturity should be confirmed by court. Thus, intervention of a mature orphan in financial properties is possible by the court recognition and confirma-

tion.

With regard to the point that binding code for marriage age is the approved article 1041 by Expediency Council; therefore, marriage age is 13 for a girl and 15 for a boy. The legislative law removed the age limitation by court recognition; consequently, it provided possibility of marriage with the age lower than the age of maturity. For example, father and mother of a 7 years old girl die in an accident, the girl's grandfather is not able to protect and maintain her, and there is not any other close relative to protect and maintain her, it is impossible to give the girl to the general institutes; therefore, an honest family in the region suggests the marriage of the orphan and its only son who is five years elder than the girl and both girl and boy are protected by the family. The grandfather recognizes it suitable for the girl and embraces the suggestion [4,pp. 128-129].

Article 1041 in Iran's civil code approved in 1934 has prohibited the marriage of a girl below 15 and boy below 18, although it contains exceptions by public prosecutor suggestion and court approval. This exemption would not apply for the girls under 13 and boys under 15.

#### **b. Conditions of Father or Paternal Grandfather Permission**

Article 1043 in civil code says "the marriage of a virgin girl, even after she has reached puberty, requires the permission of her father or paternal grandfather. If, however, her father or paternal grandfather withhold their permission without sufficient justification, the girl can introduce the man she wishes to marry to the court, giving full particulars of him as well as the term of the marriage contract and the agreed dowry. After receiving permission of marriage from the special civil court, they should proceed to the Registry Office in order to register their marriage". Moreover the article adds: "a girl can get married if her father or grandfather is not present and their permission is

impossible.

Note: Registration of this marriage in the Registry office requires that the aforementioned conditions related to the special civil court are fulfilled.

The two above articles show that a virgin girl, although she is mature (13 years old), has to have one of the following conditions for her marriage registration: permission of her father or grandfather or Particular Civil Court verdict. Additionally, virginity (legal or illegal) deprives her father's permission. Thus, removing of virginity causes independence in marriage.

It is noteworthy of consideration that there is a contradiction in note 1 of article 1210 in which the maturity age is 9 for girl and article 1043 in which father's permission is the only condition for registration of a virgin matured girl and article 1041 in which marriage contract, before age 13, is possible by two conditions: parent's permission and court recognition. The only resolution is the point that marriage of a virgin girl, although she is mature, has to be concluded by father's, grandfather's or court permission if she is lower than age 13 because article 1041 has been approved by Expediency Council and two other articles by The Islamic Consultative Assembly. Exceptionally, marriage age is 13 for girl and 15 for boy has been recognized.

### **Conclusion**

Marriage is a contract by which a boy/man and a girl/woman are united to form a family and participate in the life. It is a contract with both financial and non-financial effects, because a man, after such a contract has to pay his wife's and family maintenances, besides; gives a property to his wife as the marriage portion (Mahr). In the other side, the husband and the wife must cooperate with each other over the welfare of the family and the education of their children.

Although paragraph 2 of article one in

the family code of Armenia has declared the recorded marriage in Civic Status Registration Department as lawful; and Iran's legislator has obligated registration of it with 6 signature (minimum), in addition to determining punishment for the man who has not done it; marriage is a consent contract. Thus, a man and a woman who decide to set up a family and common life, and express their will evidently, (themselves or their representatives), their agreement is resulted in marriage contract. In this way, registration or not, do not undermine the essence of marriage contract. However, it should be registered in order to get official benefits of such a contract. That is why the provident individuals register marriage in the official office. To protect their rights it is necessary to do so. On the whole, non-registration of marriage does not abrogate it.

According to Iran's codes, there are two differences between marriage contract and other contracts: first, the two parties in other contracts choose the effects of contract by choice and agree on them, but the effects of marriage contract have been determined by legislators before. therefore, the couples cannot determine the entire effects of the contract freely, but in some details and trivial cases as residence right or education. In short, according to Iran's law marriage is a particular legal frame or situation in which man and woman put themselves by consent.

Second, although maturity is a requisite condition for both parties in other contracts, it is not necessary in marriage contract. In contrast, an immature person can be married based on the benefit or expedience.

According to the codes of R. Armenia the couples choose the entire effects of marriage freely.

As a result, marriage contract with regard to the mentioned explanations, is an exceptional contract and it can be defined as: a contract in which a girl/woman and a

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

boy/man themselves or their father/grandfather are allowed to declare consent. It is for

one or some purposes of common life, sexual enjoyment, reproduction and children training.

**References:****A. Books:**

- 1- Katuzian, Naser. civil law, legal occurrences, enteshar publications, 7th. ed. 2004.
- 2- Shahidi, Mehdi. formation of contracts and obligations, hoghohdan publications, 1998.
- 3- Ghasemzadeh, Seyed Morteza, principles of contracts and obligations, 2nd. ed. dadgostar publications, 2006.
- 4- Madani, Seyed Jalalaldin, civil law, 8th. vol. family law, paydar publications, 2006.
- 5- Emami, Hasan. civil law, 4th. vol. eslamie publications, 1989.
- 6- Mohaghegh Damad, Seyed Mostafa, religious jurisprudence (Feghhi) consideration of family law, Islamic science publication center, 15th. ed. 2008.
- 7- Katuzian, Naser. civil law, Family, 1st. vol. enteshar publications, 2006.
- 8- Safi, Ahmad. balanced and imbalanced family, guardians and trainers society publications, 6th. ed. 2004.
- 9- Yasrebi ghomi, Seyed Ali Mohammad. Family law in the Constitution of Islamic Republic of Iran, samt publications, 2009.

**B. Codes:**

- 1- Family Code of R. Armenia.
- 2- Civil Code of R. Armenia
- 3- The Constitution of the Islamic Republic of Iran
- 4- Civil Code of the Islamic Republic of Iran

## ԱՄՈՒՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԵՍԱԿ

### Գոհեմ ՌԵԶԱ ՇԻՐԱԶԻ

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի  
ամբիոնի ասպիրանտ*

Հոդվածի նպատակն է բացահայտել, արդյո՞ք անուսնական պայմանագիրը նյուս պայմանագրերի նման սովորական պայմանագիր է, թե ոչ: Հարցի լուծմանը հասնելու համար, սկզբում ուսումնասիրվում են ընդհանուր պայմա-

նագրերը, ապա, հիմնվելով Իրանի օրենսդրության վրա, ուսումնասիրվում են այն հիմնական պայմանները, որոնց արդյունքում կնքվում է անուսնական պայմանագիրը: Ուսումնասիրության մեթոդը գիտական վերլուծականն է: Ուսումնասիրության արդյունքը ցույց է տալիս, որ անուսնական պայմանագիրը առանձնահատուկ պայմանագիր է, այսինքն որոշ պայմաններ, որոնք անհրաժեշտ են նյուս պայմանագրերի համար, այս դեպքում էական չեն:



**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ****ՀՀ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԿՈՊԵՆՀԱԳԵՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇԻՆ****Տիգրան ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*ԵՊՀ Եվրոպական և միջազգային  
իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

Հայաստանի Հանրապետությունը անկախությունից ի վեր իր արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը հռչակեց Եվրոպական միության (ԵՄ) հետ համագործակցությունը: Այս հանգամանքը առավելապես պայմանավորված է միջազգային թատերաբեմում ԵՄ զբաղեցրած քաղաքական և տնտեսական դերակատարի ծանրակշիռ կարգավիճակով: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, թե ՀՀ-ն իր առջև արդյոք նպատակ դրել է դառնալու ԵՄ անդամ, ապա այս հարցը դեռ ամբողջովին ուրվագծված չէ, և որպես մոտակա նպատակ ՀՀ-ի համար չի նախատեսվում: Սակայն մի բան պարզ է. ՀՀ-ն նպատակադրվել է իր հասարակական կյանքը բարեփոխել Եվրոպական սկզբունքների և չափանիշների համապատասխան:

ԵՄ հետ հարաբերություններում մեր երկրի համար առաջին լուրջ հաջողություններն արձանագրվեցին 1996 թ., երբ Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքվեց Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը<sup>1</sup>: ԵՄ հետ մերձեցման հաջորդ քայլը եղավ ՀՀ մասնակցությունը 2004թ. ԵՄ նախաձեռնած Եվրոպական հարևանության քաղաքականությանը: Այս ամենը վկայում է այն մասին, որ Եվրոպական միության ու Հայաստանի Հանրապետության միջև ներկայումս գոյություն ունի ձևավորված հա-

մագործակցության որոշակի ձևաչափ, որը զարգացման փուլում է:

2009 թ. մայիսին ստորագրված հռչակագրով Հայաստանի Հանրապետությունը ցանկություն է հայտնում մասնակցություն ունենալու ԵՄ կողմից առաջարկված Արևելյան գործընկերության ծրագրին: ԵՄ-ՀՀ հարաբերությունները թևակոխում են որակապես նոր փուլ: Այս նոր ծրագիրը կարող է իր հետ բերել մեծ տնտեսական օգուտներ ինչպես մեր երկրի, այնպես էլ նրա քաղաքացիների համար: Մեծ նշանակություն ունի Արևելյան գործընկերության մասին հռչակագրում Ասոցացման համաձայնագրեր կնքելու հնարավորության հիշատակումը<sup>2</sup>:

ԵՄ անդամ դառնալու համար յուրաքանչյուր պետություն պետք է համապատասխանի այսպես կոչված «Կոպենհագենյան չափանիշներին», որոնք որպես անդամակցության նախապայմաններ ընդունվել են 1993թ. Կոպենհագենում ԵՄ հորհրդի կողմից: Այն բաղկացած է երեք տարրից: Առաջինը քաղաքական չափանիշն է, որի համաձայն՝ հավակնորդ պետությունը պետք է ապահովի «ժողովրդավարության, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և փոքրամասնությունների հարգում և պաշտպանություն»:

Սնդամակցության հաջորդ տնտեսական չափանիշը ենթադրում է «շուկայական տնտեսության առկայություն, ինչպես նաև Միության ներսում մրցակցության ճնշմանը և շուկայի ուժերին դիմակայելու կարողություն»:<sup>3</sup> Կոպենհագենյան վերջին չափանիշն է «անդամակցության պարտավորությունների ստանձնման կարողությունը, ներառյալ քաղաքական, տնտեսական

և արժուքային միության նպատակների իրականացումը»<sup>3</sup>:

Հողվածում կփորձենք համակողմանիորեն ներկայացնել մեր հանրապետության համապատասխանությունը ԵՄ անդամակցության Կոպենհագենյան քաղաքական չափանիշին՝ որպես հիմք ընդունելով ԵՄ հանձնաժողովի կողմից ԵՄ-ՀՀ գործողությունների ծրագրի վերաբերյալ ներկայացրած 2012 թ. զեկույցը:

2004 թ. հունիսին Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանն ընդգրկվեցին Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում, ինչը ՀՀ-ԵՄ հարաբերությունները տեղափոխեց որակական նոր մակարդակ: Գործընկեր և համագործակցող կարգավիճակ ունեցող երկրից Հայաստանը դարձավ ԵՄ հարևան երկիր:

2006 թ. նոյեմբերի 14-ին Բրյուսելում հաստատվել և ստորագրվել է ՀՀ-ԵՄ համատեղ Գործողությունների ծրագիրը (ԳԾ): Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում կիրառվող Գործողությունների ծրագրերի առանձնահատկությունը այն է, որ դրանք մշակվում են Եվրոպական միության և գործընկեր պետության համատեղ ջանքերով: Դրանք բովանդակային առումով երկրից երկիր տարբեր են, քանի որ մշակվում են՝ հաշվի առնելով գործընկեր պետության կարիքներն ու հնարավորությունները: Գործընկեր պետությունը ակտիվ մասնակցություն է ունենում ԵՀՔ Գործողությունների ծրագրի մշակման գործընթացում, քանի որ նա ավելի լավ է պատկերացնում իր խնդիրները և հնարավորությունները այդ խնդիրների լուծման համար: Դրանք փոխադարձաբար համաձայնեցվում են ԵՄ-ի և յուրաքանչյուր գործընկեր երկրի միջև: ԵՀՔ Գործողությունների ծրագրերը իրավական պարտադիր ուժ չունեն և քաղաքական բնույթի փաստաթղթեր են<sup>4</sup>:

Գործողությունների ծրագրում նշված նպատակներին հասնելու համար ԵՄ-ն և գործընկեր պետությունները կկնքեն նոր և ավելի սպառիչ երկկողմ պայմանագրեր,

ինչպես նաև ավելի համակարգված մոտեցում կցուցաբերվի ԵՄ ծրագրերին հարևան երկրներում<sup>5</sup>: ՀՀ Գործողությունների ծրագրի իրականացումը նպատակ ունի նպաստելու Հայաստանի Հանրապետության օրենսդրության, իրավական նորմերի և ստանդարտների ներդաշնակեցմանը ԵՄ չափանիշներին: ԳԾ-ն ներառում է այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են իրավունքի գերակայությունը, դատական բարեփոխումները, հակակոռուպցիոն միջոցառումները և մարդու իրավունքները: ԳԾ-ն ուրվագծում է ծրագրեր Հայաստանի քաղաքական համակարգի ժողովրդավարացման համար: ՀՀ Գործողությունների ծրագիրը ժողովրդավարական ինստիտուտների, իրավունքի գերակայության, դատական բարեփոխումների, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության պարտավորությունների մասով ամբողջովին համապատասխանում է Կոպենհագենյան չափանիշների քաղաքական տարրին:

ԵՄ-ՀՀ Գործողությունների ծրագիրը քաղաքական փաստաթուղթ է, որը ներառում է հինգ տարվա ժամանակահատված: Հայաստանը և ԵՄ-ն սերտորեն համագործակցում են ԳԾ-ի իրականացման շուրջ:

Գործողությունների ծրագիրը սահմանում է համապարփակ առաջնահերթությունների ցանկ Գործընկերության և համագործակցության պայմանագրի շրջանակներում: Գործընկերության և համագործակցության պայմանագրի շրջանակներում ստեղծված համատեղ մարմինները վերահսկելու են ԳԾ իրականացումը: Գործողությունների ծրագիրը կարող է պարբերաբար փոփոխվել և լրացվել:

ԵՄ հանձնաժողովը Բարձր ներկայացուցչի հետ սերտ համագործակցությամբ կանոնավոր պարբերականությամբ ներկայացնում է զեկույցներ Գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ<sup>6</sup>: Պարբերական զեկույցներում զնահատվում է տվյալ երկրի արձանագրած առաջընթացը Կոպենհագենյան չափանիշներին

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ**

համապատասխանելու առումով: Հանձնաժողովը սերտորեն համագործակցում է նաև այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Եվրոպայի Խորհուրդը, ԵԱՀԿ-ն, ՄԱԿ-ի համապատասխան մարմինները և միջազգային ֆինանսական կազմակերպությունները:

2013 թ. մարտի 20-ին Եվրոպական հանձնաժողովը և ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցիչը հրապարակել են Հայաստանի Հանրապետության վերաբերյալ 2012 թ. տարեկան զեկույցը: Այն ունի 2012 թ. Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացման գնահատման վերաբերյալ համատեղ հայտարարություն:

Ձեկույցում նշվում է 2012 թ. ընթացքում ԵՄ-Հայաստան քաղաքական երկխոսության ակտիվացման մասին: Ձգալի առաջընթաց է գրանցվել ԵՄ-Հայաստան Ասոցացման համաձայնագրի, ներառյալ խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու շուրջ բանակցություններում: Այս բնագավառում Հայաստանը շարունակում է իրականացնել առողջ մակրոտնտեսական քաղաքականություն և կառուցվածքային բարեփոխումներ: 2010 թ. հուլիսին մեկնարկած Հայաստան - Եվրոպական միություն Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները ներկայումս գտնվում են եզրափակիչ փուլում: Նախատեսվում է համաձայնագիրը ստորագրել այս տարվա նոյեմբերին Վիլնյուսում կայանալիք Արևելյան գործընկերության 3-րդ գագաթնաժողովի ժամանակ<sup>7</sup>:

Ժողովրդավարության տեսանկյունից 2012 թ. կայացած խորհրդարանական և 2013 թ. նախագահական ընտրությունները ցույց տվեցին, որ դրանք ընդհանուր առմամբ եղել են թափանցիկ, և Հայաստանի իշխանությունները լուրջ ջանքեր են գործադրել մարդու իրավունքների և հիմնա-

րար ազատությունների բնագավառներում: Այդուհանդերձ, հետագայում շարունակական աշխատանքներ պետք է կատարվեն այդ բնագավառներում օրենսդրական փոփոխություններ իրականացնելու համար:

Ձեկույցում նշվում է, որ, չնայած ընթացող բարեփոխումներին, դատական մարմինների նկատմամբ հանրային վստահությունը դեռևս գտնվում է ցածր մակարդակի վրա, իսկ կոռուպցիային շարունակում է գոյատևել: ՄԱԿ-ի Խոշտանգումների կոմիտեի ցուցիչի ներքո գործող ազգային կանխարգելման մեխանիզմի աշխատանքները պետք է ավելի արդյունավ դարձվեն: Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերը զինծառայողների շրջանակներում, ազատագրված վայրերում և ոստիկանական բաժանմունքներում համարժեք չեն քննվում:

Նշենք, որ Հայաստանը դեռևս 2006 թվականին է դարձել ՄԱԿ-ի «Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ» կոմիտեի կամընտիր արձանագրությանը մասնակից պետություն: ՀՀ Ազգային ժողովում կոմիտեի վավերացումից հետո մեր երկիրը մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը ճանաչել է կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ<sup>8</sup>:

Ձեկույցի համաձայն՝ Հայաստանը հաշվի է առել ԵՄ ԵՀՔ նախորդ տարվա առաջընթացի զեկույցում արված մի շարք առանցքային առաջարկություններ. պատրաստել է ճանապարհային քարտեզ ընտրական գործընթացների բարելավման նպատակով, ինչպես նաև իրականացրել է համապատասխան միջոցառումներ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, դատական մարմինների գործունեության կատարելագործմանը, ոլորտային բարեփոխումներին և օրենսդրական մոտարկմանը:

2012 թ.-ին խոսքի ազատության և հավաքների իրավունքը ՀՀ-ում ընդհանուր առմամբ պաշտպանված է եղել: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և



նստիկանության համատեղ ջանքերով ստեղծվեց աշխատանքային խումբ՝ վերանայելու «հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը:

Հուլիսին նախագահ Սարգսյանը ստորագրեց իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարության ծրագիրը, որի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից իրավական պետության չափանիշներին համապատասխանող իրավական համակարգի և դատական իշխանության ապահովումը: Ծրագիրը ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մասնավորապես քրեական, քաղաքացիական, վարչական արդարադատությունը, դատական համակարգը, դատախազությունը, փաստաբանության և քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ոլորտները, որոնցից յուրաքանչյուրում առկա խնդիրները լուծելու համար նախատեսված են ինչպես օրենսդրական, այնպես էլ իրավակիրառական բնույթի միջոցառումներ: Յուրաքանչյուր միջոցառման համար սահմանված են իրականացման ժամկետներն ու պատասխանատու մարմինները, ինչպես նաև՝ այն ցուցանիշերը, որոնց առկայությունը կվկայի միջոցառման հաջող իրագործման մասին<sup>9</sup>:

Ձեկույցում անդրադարձ է կատարվում նաև վերոնշյալ ծրագրին՝ նշելով, որ բարեփոխումները այս ոլորտում բավարար կերպով չեն անդրադառնում ՀՀ դատական համակարգի անկախությանը, ներառյալ արդարադատության խորհրդի սահմանափակ ազդեցությանը բյուջեի ընդունման, դատական լիազորությունների դադարեցման և այլ ոլորտներում:

Որոշ առաջընթաց է գրանցվել արդարադատության մատչելիության ոլորտում: Արդարադատության ոլորտում բարեփոխումներ կատարելուն օժանդակող ԵՄ ծրագիրը հնարավորություն տվեց հանրային պաշտպանների թիվը 32-ից հասցնելու 52-ի: ԵՄ օժանդակությամբ հիմնվում է փաստաբանների դպրոցը, որն արդեն գոր-

ծում է: 2012 թ.-ին ԵՄ-ն 20 մլն. եվրոյի աջակցության նոր ծրագիր է հաստատում աջակցելու համար հետագա դատական բարեփոխումներին:

Կոռուպցիայի վերաբերյալ հայտարարությունները շարունակում են քայքայել հանրային վստահությունը: 2012 թ. հունվարի 9-ին ստեղծվում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Այն կազմված է հինգ անդամից, ովքեր նշանակվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից՝ Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, սահմանադրական դատարանի նախագահի, վճռաբեկ դատարանի նախագահի, գլխավոր դատախազի ներկայացմամբ՝ յուրաքանչյուրը մեկական անդամ սկզբունքով և վեց տարի ժամկետով<sup>10</sup>:

Ձեկույցում նշվում է, որ առկա է մտահոգություն նշված հանձնաժողովի լիազորությունների և գործունեության թափանցիկության վերաբերյալ: Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի (GRECO) 2012 թ. դեկտեմբերի զեկույցը դրական է անդրադառնում հանձնարարականների ներդրմանը ՀՀ օրենսդրությունում: GRECO-ն եզրակացնում է, որ ՀՀ-ն բավարար կերպով իրականացրել է 19-ը հանձնարարականներից 16-ը, որոնք հիմնականում վերաբերում են քաղաքական կուսակցությունների ֆինանսավորմանը և ներառված են գնահատման 3-րդ փուլում տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ զեկույցում:

Սեպտեմբերին կառավարությունը որոշում ընդունեց փոփոխություններ իրականացնել գնումների գործընթացի կազմակերպման վերաբերյալ՝ նպատակ ունենալով բարձրացնելու գնումների գործընթացի արդյունավետությունը, ապահովելու թափանցիկությունը և նվազեցնելու կոռուպցիոն ռիսկերը: Հոկտեմբերին Ազգային ժողովը կողմ է քվեարկում գլխավոր դատախազի խնդրանքին՝ վերացնելու Աժ

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ականավոր անդամներից մեկի անձեռնմխելիությունը, ով հետագայում մեղադրվեց ֆինանսական միջոցների անօրինական յուրացման և փողերի լվացման մեջ: Հայաստանը transparency international կազմակերպության կոռուպացվածության ամենամյա աղյուսակում 176 պետություններից զբաղեցրեց 105-րդ հորիզոնականը:

«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը» մշակվել և ներկայացվել է քննարկման դեռ 2011-ին, իսկ Սերժ Սարգսյանի կարգադրությամբ այն ընդունվել է 2012-ի հոկտեմբերի 29-ին, սահմանվել է եռամսյա ժամկետ, ռազմավարության իրականացմանն ուղղված միջոցառումների ծրագիր 2013-16 թթ. համար<sup>11</sup>:

Ապրիլին եՄ ֆինանսական աջակցությամբ մարդու իրավունքների պաշտպանի վեց գրասենյակներ են հիմնվում ՀՀ մարզերում՝ ապահովելու համար այդ կառույցի մատչելիությունը:

Ձեկույցում որպես թերացում նշվում է, որ խոշտանգումը քրեականացնող հայկական օրենսդրությունը դժվարություններ է ներկայացնում, քանի որ այստեղ խոշտանգումների սահմանումը չի համապատասխանում ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոնվենցիայում տրվածին (այն չի ներառում հանցագործությունները, որոնք կատարվել են պետական պաշտոնյաների կողմից): Այսպիսով, Հայաստանում դեռևս ոչ մի պետական պաշտոնյա խոշտանգում կատարելու մեղադրանքով չի դատապարտվել: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը՝ որպես կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ, դեռևս չունի համապատասխան ռեսուրսներ իր առջև դրված խնդիրներն արդյունավետ իրականացնելու համար:

Հայաստանը որոշ ջանքեր է գործադրել՝ բավարարելու համար կալանավայրերի պայմանները, սակայն դեռևս չեն իրա-

կանացվել խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի հանձնարարականները:

Շարունակվում է հասարակական անհանգստությունը ՀՀ զինված ուժերում խաղաղ պայմաններում կասկածելի մահվան դեպքերի, ինչպես նաև զորակոչիկների նկատմամբ սպաների կողմից վատ վերաբերմունքի վերաբերյալ: Այս ոլորտում հանցագործությունների քննությունը հազվադեպ է արդյունքներ տալիս:

2012 թ. մարտին Ազգային ժողովը ընդունում է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրը» ՀՀ նոր օրենքը: Առաջին անգամ փորձ է արվում զինված ուժերում և այլ զորքերում զինվորական կարգապահական հարաբերությունները կանոնակարգել օրենքի տեսքով: Մինչ այդ նշված հարաբերությունները կարգավորվում էին դեռևս 1996 թվականին ընդունված ՀՀ կառավարության որոշմամբ, որը այլևս չէր համապատասխանում ՀՀ զինված ուժերի արդի զարգացման պահանջներին:

Օրենքում հստակ ամրագրվել է կարգապահական խախտման հասկացությունը, ինչպես նաև կարգապահական խախտումների դեպքում ծառայողական քննություն անցկացնելու պայմանները: Ընդլայնվել է զինծառայողի կողմից իր իրավունքների իրացման հետ կապված դիմումների և բողոքների ներկայացման ընթացակարգը: Հստակեցվել են խրախուսանքի և կարգապահական տույժի տեսակները<sup>12</sup>:

Անդրադառնալով կանանց իրավունքներին՝ զեկույցում նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի ընդունել ընտանեկան բռնությունը քրեականացնող օրենսդրություն: Վերջին զեկույցները ցույց են տալիս, որ աճում է սելեկտիվ աբորտի քանակը: Դեռևս չի ընդունվել օրենք, որը կկանխի սեռի պատճառով հղիության ար-

հետևական ընդհատումները: Հայաստանը դեռևս չի վավերացրել «երեխաներին սեռական շահագործումներից և բռնություններից պաշտպանության» մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան: Իր ստեղծման պահից երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը համարժեքորեն լիազորված չի եղել: Վերջինիս 2004-2012 թթ. Գործողությունների ազգային ծրագիրը հաշվի չի առնվել մեր նախարարությունների կողմից: Այնուամենայնիվ, զեկույցում կոնկրետ առաջընթաց է արձանագրվում բոլոր երեխաների համար դպրոցների հասանելիության, դպրոցների թվի աճի, ինչպես նաև գյուղական համայնքներում մինչդպրոցական հաստատություններ բացելու ոլորտներում:

Շարունակում է չլուծված մնալ ազգային փոքրամասնությունների լեզուներով՝ ասորերեն, եզդիերեն, քրդերեն և հունարեն, դասավանդման, հեռարձակման, ինչպես նաև դատարաններում գործածության հետ կապված խնդիրները, չնայած այդ ոլորտում առկա է 2009 թ. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականը:

Այսօրվ, ակնհայտ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունը դեռևս բավականին անելիքներ ունի ԵՄ Կոպենհագենյան քաղաքական չափանիշին համապատասխանելու ուղղությամբ: Հիմք ընդունելով 2013 թ. մարտի 20-ին Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցչի կողմից հրապարակած զեկույցի ուսումնասիրությունները և նպատակ ունենալով 2013 թ.-ին շարունակել ԵՀՔ Գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացումը՝ կատարում են հետևյալ առանցքային առաջարկությունները.

– Միջոցներ ձեռնարկել հաղթահարելու ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից 2012 թ. մայիսին կայացած խորհրդարանական և 2013 թ.

փետրվարին տեղի ունեցած նախագահական ընտրություններում հայտնաբերված թերացումները՝ կատարելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ բոլոր առաջարկությունները, այդ թվում՝ փոփոխություններ օրենսդրական դաշտում;

– Լիովին հետաքննել 2008 թ. մարտին կայացած նախագահական ընտրություններին հաջորդած բախումների հետևանքով մահվան դեպքերը;

– Ապահովել մարդու իրավունքների ազգային ռազմավարության իրականացումը, ընդունել և իրականացնել վերջինիս գործողությունների ծրագիրը;

– Ընդունել օրենսդրական փոփոխություններ հեռարձակման ոլորտում՝ համապատասխան ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի առաջարկությունների, ինչպես նաև ապահովել հեռարձակվող լրատվական միջոցների բազմակարծությունը;

– Ավարտին հասցնել խղճի և կրոնի ազատության մասին օրենքի նախագիծը միջազգային չափանիշներին համապատասխան, ինչպես նաև այլընտրանքային քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությունը Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ արած առաջարկություններին համապատասխան;

– Ուժեղացնել կոռուպցիայի դեմ պայքարը, այդ թվում նաև ապահովել 2012 թ.-ին ընդունված օրենքների կատարումը և Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անկախությունն ու թափանցիկությունը;

– Ակտիվացնել կառավարական բարեփոխումների իրականացումը՝ ներառյալ դատական և իրավապահ ոլորտներում՝ հատկապես մեծացնելու համար հասարակական վստահությունը, ամրապնդելու դատավորների անկախությունը, բարելավելու դատավորների ուսուցումը և վերանայելու քրեական դատավարության օրենսգիրքը<sup>19</sup>:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

- <sup>1</sup> Տե՛ս Partnership and Cooperation Agreement concluded between the European Community and Member States on the one part and the Republic of Armenia on the other 1999, OJ L 239/3,
- <sup>2</sup> Տե՛ս Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit Prague, 7 May 2009, Brussels 8435/09
- <sup>3</sup> Տե՛ս [http://europa.eu/legislation\\_summaries/glossary/accession\\_criteria\\_copenhagen\\_en.htm](http://europa.eu/legislation_summaries/glossary/accession_criteria_copenhagen_en.htm)
- <sup>4</sup> Տե՛ս EU/Armenia Action Plan: Priorities for Action, [http://ec.europa.eu/world/enp/pdf/actionplans/armenia\\_enp\\_ap\\_final\\_en.pdf](http://ec.europa.eu/world/enp/pdf/actionplans/armenia_enp_ap_final_en.pdf)), available at 23.07.2010, EU/Azerbaijan Action Plan: Priorities for Action, ([http://ec.europa.eu/world/enp/pdf/action\\_plans/azerbaijan\\_enp\\_ap\\_final\\_en.pdf](http://ec.europa.eu/world/enp/pdf/action_plans/azerbaijan_enp_ap_final_en.pdf)) available at 23.07.2010 և այլն:
- <sup>5</sup> Տե՛ս The Strategic Implications of European Union Enlargement; Center for Transatlantic Relations, John Hopkins University, 2005
- <sup>6</sup> The European Neighbourhood Policy in Perspective, Stefan Wolff, April 2010
- <sup>7</sup> Տե՛ս Implementation of the European Neighbourhood Policy in Armenia, Progress in 2012 and recommendations for action; Joint staff working document; Brussels, 20.3.2013
- <sup>8</sup> Տե՛ս ՀՀ օրենքը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին:
- <sup>9</sup> Տե՛ս ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ին Կ-96-Ա կարգադրություն, 2012 թ. հունիսի 30:
- <sup>10</sup> Տե՛ս [www.ethics.am/](http://www.ethics.am/)հանձնաժողով:
- <sup>11</sup> ՀՀ նախագահի 2012թ. հոկտեմբերի 29-ի Կ-159-Ն կարգադրություն:
- <sup>12</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքը:
- <sup>13</sup> Տե՛ս Implementation of the European Neighbourhood Policy in Armenia, Progress in 2012 and recommendations for action; Joint staff working document; OVERALL ASSESSMENT AND RECOMMENDATIONS; Brussels, 20.3.2013.

---

## THE COMPLIANCE OF REPUBLIC OF ARMENIA WITH THE COPENHAGEN POLITICAL CRITERIA FOR EU MEMBERSHIP

### **Tigran GRIGORYAN**

*Post-graduate student of the Chair of the European and International Law of the Yerevan State University*

---

The present article is devoted to analysis of the compliance of Armenia with the political Copenhagen political Criteria. The analysis is based on the reports by EU Commission concerning the EU — RA action plan.

It is substantiated in the article that

notwithstanding the recent amendments in different facets still there are a lot of work to do in the field of compliance of Armenia with the Copenhagen political criteria. Numerous recommendations by European Union still have not been taken into account.

Based on the report by European Commission and the High Representative of the Union for Foreign Affairs and Security Policy published on 20 march 2013 and aiming to continue the effective implementation of the ENP Action Plan, a list of key recommendations are listed.

---

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՆՃԵՆՆՄԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԱՄՐԱԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Սլավիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի  
ամբիոնի հայցորդ*

**Ս**ահմանադրական իրավունքի գիտության մեջ և իրավական պրակտիկայում ներկայումս բավականին արդիական է խորհրդարանական անձեռնմխելիությանը վերաբերող հարցերի քննարկումը: Խորհրդարանական անձեռնմխելիության ինստիտուտի էության պարզաբանումը, համապատասխան իրավական ակտերի վերլուծությունը և իրավական ամրագրման թերությունների բացահայտումը, դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը կարևոր նշանակություն կարող են ունենալ այդ ինստիտուտի ճիշտ կիրառության և օրենսդրության հետագա կատարելագործման համար:

Խորհրդարանական անձեռնմխելիությունը պատգամավորի գործունեության երաշխիքներից մեկն է և նպատակ ունի ապահովել պատգամավորի անխոչընդոտ և արդյունավետ գործունեությունը: Այս ինստիտուտի բովանդակությունը ընդհանուր առմամբ այն է, որ պատգամավորն առանց խորհրդարանի կամ նրա ղեկավար մարմնի համաձայնության չի կարող զրկվել անձնական ազատությունից կամ ենթարկվել պատասխանատվության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նա ձերբակալվում է հանցագործություն կատարելու պահին:

Խորհրդարանական անձեռնմխելիության առաջնային նշանակությունը խորհր-

դարանական ընթացակարգերին խորհրդարանի անդամների մասնակցելու արգելքների կանխումն է՝: Պատգամավորը կարող է որևէ պատրվակով անհիմն ձերբակալվել և զրկվել անձնական ազատությունից, ինչը կխոչընդոտի նրա պատգամավորական գործունեությունը: Օրինակ, եթե քրեական գործ հարուցվի, և պատգամավորի նկատմամբ խափանման միջոց կիրառվի (ներառյալ՝ հնարավոր կալանք), դատաքննություն ընթանա, կանցնեն ամիսներ, և այդ ընթացքում պատգամավորը չի կարող աշխատել խորհրդարանում: Այդ պատճառով խորհրդարանները դեռևս թագավորական իշխանության դեմ պայքարում իրենց անդամներին օժտեցին անձեռնմխելիությամբ: Այժմ գրեթե բոլոր երկրներում խորհրդարանական անձեռնմխելիությունն առաջարկում է արգելանքի կամ անձնական ազատությունից զրկելու տարբեր ձևերի դեմ պաշտպանություն:

Խորհրդարանական անձեռնմխելիության մյուս նշանակությունն այն է, որ այն պաշտպանում է պատգամավորներին քաղաքական շարժառիթներով կամայական կամ անհիմն հետապնդումներից: Օրինակ, հնարավոր են դեպքեր, երբ որևէ պատրվակով պատգամավորի նկատմամբ անհիմն քրեական գործ հարուցվի, և պատասխանատվության ենթարկելու միջոցի կիրառման սպառնալիքով նրան հարկադրվի հետագա քաղաքական գործունեության ընթացքում որոշակի անձանց համար ցանկալի վարքագիծ դրսևորել: Ուստի շատ երկրներում անձեռնմխելիությունը ներառում է ոչ միայն պատգամավորի անձնա-

կան ազատության ցանկացած սահմանափակման դեմ արգելք, այլ նաև քրեական, երբեմն նաև վարչական, քաղաքացիական անհիմն հետապնդումներից պաշտպանություն:

Իրավաբանական գրականության մեջ օգտագործվում է և՛ «խորհրդարանական անձեռնմխելիություն»<sup>2</sup>, և՛ «պատգամավորական անձեռնմխելիություն» եզրույթը<sup>3</sup>, իսկ, երբեմն դրանք օգտագործվում են որպես հոմանիշներ<sup>4</sup>: Ընդ որում, բովանդակային առումով այս եզրույթների միջև որևէ տարբերակում չի դրվում: Այնուամենայնիվ իրավագիտության մեջ միասնական եզրութաբանության ձևավորման նպատակով, առաջարկում ենք կիրառել մեկ եզրույթ: Կարծում ենք՝ ավելի ճիշտ է օգտագործել «խորհրդարանական անձեռնմխելիություն» եզրույթը, քանի որ վերջին հաշվով խորհրդարանական անձեռնմխելիությունը սահմանված է ոչ թե պատգամավորի անձնական, այլ խորհրդարանի շահերի պաշտպանության համար: Խորհրդարանական անձեռնմխելիությունն անհատական արտոնություն չէ, այլ ունի հանրային իրավական բնույթ<sup>5</sup>: Խորհրդարանական անձեռնմխելիությունը կոչված է երաշխավորելու խորհրդարանի բնականոն գործունեության ապահովումը: Անձեռնմխելիությունը խորհրդարանի սուբյեկտիվ իրավունքն է: Պատգամավորը չի կարող հրաժարվել անձեռնմխելիությունից, քանի որ այն նրա սուբյեկտիվ իրավունքն է, այլ պատգամավորի կարգավիճակի առանձին տարր, նրա գործունեության կարևոր իրավական երաշխիք: Պատգամավորը կարող է հրաժարվել անձեռնմխելիությունից միայն իր մանդատը վայր դնելու միջոցով<sup>6</sup>:

Ինչ վերաբերում է «անձեռնմխելիություն» եզրույթին, ապա նշենք, որ իրավաբանական գրականության մեջ անձեռնմխելիությունն այլ կերպ կոչվում է նաև ինունհիտետ: Սակայն ինունհիտետը հաճախ օգտագործվում է նաև ավելի լայն իմաստով, որը ներառում է և՛ խորհրդարանական անձեռնմխելիությունը, և՛ խորհրդա-

րանական անպատասխանատվությունը<sup>7</sup>: Ինունհիտետն ընդհանուր իրավական եզրույթ է, որը ծագել է լատիներեն «immunitas» բառից և նշանակում է ինչ-որ բանից ազատել<sup>8</sup>: Անձեռնմխելիության առումով խորհրդարանական ինունհիտետի մասին խոսելիս չպետք է այն բացարձակացնել, այլ անհրաժեշտ է մեկնաբանել սահմանափակ և հասկանալ որպես ժամանակավոր ազատում: Ինունհիտետն առջինն չի հայտարարում խախտումը, այլ ժամանակի առումով հետաձգում է հետապնդման կամ կալանավորման պահը<sup>9</sup>: Այն խորհրդարանի անդամին չի տալիս բացարձակ և մշտական պահպանություն, այլ պաշտպանում է միայն հարաբերական իմաստով և օրենսդրի գործունեության որոշակի ժամկետով: Եթե խորհրդարանական անպատասխանատվությունը ընդհանուր առմամբ պառլամենտի անդամին տալիս է բացարձակ և մշտական պահպանություն, ապա անձեռնմխելիությունը պաշտպանում է միայն հարաբերական իմաստով և օրենսդրի գործունեության որոշակի ժամկետով<sup>10</sup>:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության»:

Նախ և առաջ հարց է առաջանում, թե պատգամավորին որպես մեղադրյալ ներգրավելու դեպքում ի՞նչ հետևանքներ կարող են առաջանալ, որոնք կարող են բացասաբար անդադառնալ նրա խորհրդարանական գործունեությանը, և արդյո՞ք արդարացված է պատգամավորին որպես մեղադրյալ ներգրավելու համար Ազգային ժողովի համաձայնությունը ստանալը:

Ընդհանրապես, անձին որպես մեղադրյալ ներգրավելու բացասական հետևանք կարող է լինել այն, որ հետագայում նրա նկատմամբ որպես խափանման միջոց կա-

### **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

րող է կիրառվել կալանքը, քանզի քրեական օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Որպես խափանման միջոց կալանավորումը և գրավը կարող են կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ»: Եթե պատգամավորի նկատմամբ կիրառվի կալանք, բնական է, որ նա չի կարող իրականացնել իր խորհրդարանական գործունեությունը: Սակայն այս առումով պատգամավորը, միևնույն է, պաշտպանված է սահմանադրական նորմով, քանի որ, ինչպես վերը նշվեց, նա կարող է կալանավորվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ:

Հաջորդ բացասական հետևանքը, որն առաջանում է, երբ անձը ներգրավվում է որպես մեղադրյալ, այն է, որ նա ստանձնում է որոշակի պարտականություններ: Մասնավորապես, քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրյալը պարտավոր է՝ 1) ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով, 2) լինելով կալանավորված՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել անձնական խուզարկության, 3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել բժշկական ստուգման, մատնադրոշման, լուսանկարվել և հնարավորություն ընձեռել վերցնելու արյան, մարմնի արտաթորությունների նմուշներ, 4) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման և փորձաքննության, 5) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատավորի օրինական կարգադրություններին, 6) մինչև ընդմիջում հայտարարելն առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը, 7) դատարանի նիստում պահպանել կարգուկանոն: Ակնհայտ է, որ վերջին երկու կետով նշված պարտականությունները որևէ ձևով չեն կարող խոչընդոտել պատգամավորի խորհրդարանական

գործունեությանը: 2-րդ կետով նշված պարտականության կատարման համար պայման է համարվում նաև կալանավորված լինելը, իսկ, ինչպես վերը նշեցինք, պատգամավորին կալանավորելու համաձայնություն տալիս է Ազգային ժողովը, և այդ մարմինը պետք է նախատեսի, որ դրա հետևանքով պատգամավորը կարող է ենթարկվել նաև անձնական խուզարկության: Բացի այդ, կալանքը որպես խափանման միջոց ընտրվելու պարագայում այս պարտականությունը որևէ ձևով չի կարող խաթարել պատգամավորի խորհրդարանական բնականոն գործունեությունը:

Մյուս բոլոր պարտականությունները վերաբերում են իրավապահ մարմինների օրինական պահանջները կատարելուն: Կարծում ենք՝ պատգամավորը պետք է շահագրգռված լինի, որ բացահայտվի հանցագործությունը, քանի որ հանցագործության ամբողջական բացահայտման դեպքում կվերանան նրա մեղավորության վերաբերյալ բոլոր կասկածները: Նաև այդ պատճառով պատգամավորը պետք է կատարի իրավապահ մարմինների օրինական պահանջները և չխոչընդոտի գործի քննությունը: Եթե պատգամավորը ոչ պատշաճ վարքագիծ դրսևորի և խոչընդոտի գործի քննությունը, գլխավոր դատախազը կարող է դիմել Ազգային ժողովին՝ համաձայնություն տալ նրան կալանավորելու: Ազգային ժողովն այդ ժամանակ կորոշի՝ արդյո՞ք պատգամավորը դիտավորյալ խոչընդոտում է գործի քննությանը, թե՞ խորհրդարանական լիազորություններն իրականացնելու պատճառով չի կարողանում պատշաճ կատարել իրավապահ մարմինների պահանջները, և ըստ այդմ որոշում կկայացնի՝ պատգամավորին կալանավորելու համաձայնություն տա՞լ, թե՞ ոչ:

Վերոգրյալից հանգում ենք այն եզրակացության, որ պատգամավորին որպես մեղադրյալ ներգրավելը չի խոչընդոտի նրա խորհրդարանական գործունեությանը: Միևնույն ժամանակ, իրավապահ մարմիններն արդյունավետորեն կշարունակեն



հանցագործության բացահայտման միջոցները, քանզի անհրաժեշտ է «անբեկանելի որոգայթ՝ կազմված իրավամբ ու արդարությանը, որպեսզի այն մեր մեջ միշտ պատրաստ գտնվի կալանքի առնելու ամեն անկարգ գործ... կալանքի ենթարկելու նրանց, ովքեր ինչ պատճառով էլ որ լինի՝ եթե կամենան ուխտազանց լինելով չարիք գործել, իսկույն սանձվի տվյալ անձը...»<sup>11</sup>: Անձեռնմխելիության գործողությունը չի կարող լինել այնպիսին, որ խոչընդոտի արդարադատության իրականացմանը<sup>12</sup>: Ուստի, կարծում ենք, որ անձեռնմխելիությունը չպետք է տարածել պատգամավորին որպես մեղադրյալ ներգրավելու դատավարական գործողության վրա:

Այնուամենայնիվ չպետք է մոռանալ նաև, որ խորհրդարանական անձեռնմխելիությունը կոչված է պաշտպանելու պատգամավորներին քաղաքական շարժառիթներով, կամայական կամ անհիմն հետապնդումներից: Եթե Սահմանադրությունից բացառվի պատգամավորին որպես մեղադրյալ ներգրավելու համար Ազգային ժողովից համաձայնություն ստանալու պահանջը, ապա կստացվի, որ դատարանը կարող է առանց Ազգային ժողովի համաձայնության պատգամավորին դատապարտել նույնիսկ ազատագրկման (ինչի հետևանքով, Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն նրա լիազորությունները կդադարեն), և դեռևս չկայացած, չկայունացած ու չզարգացած իրավական և ժողովրդավարական համակարգի պայմաններում պատգամավորը կարող է դատապարտվել քաղաքական շարժառիթներով՝ ենթարկվելով կամայական և անհիմն հետապնդումների: Հետևաբար անհրաժեշտ կլինի նախատեսել դրույթ, համաձայն որի՝ «պատգամավորի վերաբերյալ քրեական գործը չի կարող ուղարկվել դատարան առանց Ազգային ժողովի համաձայնության»:

Այսպիսով, առաջարկում ենք խորհրդարանական անձեռնմխելիությունից զրկելու հարցը որպես մեղադրյալ ներգրավելու

պահից տեղափոխել գործը դատարան ուղարկելու պահը, ինչը նաև հնարավորություն կտա Ազգային ժողովին պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցի վերաբերյալ ավելի հիմնավորված որոշում կայացնել, քանզի պատգամավորին որպես մեղադրյալ ներգրավելու պահից մինչև գործը դատարան ուղարկելն իրավապահ մարմինները կարող են բացահայտել բազմաթիվ փաստեր և ձեռք բերել նոր ապացույցներ:

Հետաքրքիր է, որ 1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ խորհրդարանական անձեռնմխելիությունից զրկելու մեկ այլ տարբերակ էր նախատեսված. 66-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրված էր այսպես. «Պատգամավորին չի կարելի կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել առանց Ազգային ժողովի համաձայնության»: Նշվածից հետևում է, որ դատարանը մեղադրական դատավճիռ կայացնելուց առաջ պետք է ստանար Ազգային ժողովի համաձայնությունը: Կարծում ենք, դա հակասում է դատարանի անկախության և իշխանությունների տարանջատման սկզբունքներին: Եթե դատարանը գործի քննությամբ եզրահանգում է, որ անձը մեղավոր է և պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, ապա Ազգային ժողովը չի կարող չհամաձայնել դրան, քանզի դա կլինի օրենսդիր իշխանության կողմից դատական իշխանության գործերին միջամտություն: Ազգային ժողովն իր գնահատականը, թե արդյոք քրեական հետապնդումն ունի քաղաքական կամ այլ դրդապատճառներ, պետք է տա նախքան գործը դատարան ուղարկելը: Այն պահից, երբ գործը կուղարկվի դատարան, վերջինս ինքը պետք է որոշում կայացնի՝ անձի նկատմամբ կայացնել մեղադրական դատավճիռ, ուստի՝ նրան քրեական պատասխանատվության ենթարկել, թե՞ ոչ:

ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատգամավորին

### **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարելի նաև կալանավորել: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «կալանավորումը որպես խափանման միջոց կալանքն ընտրելն է»: Նույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով»: Կասկածյալի, մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծ ասելով պետք է հասկանալ նրանց այն գործողությունները, որոնք ուղղված են քննությունից և դատից թաքնվելու, գործով ճշմարտության բացահայտմանը խոչընդոտելուն, ինչպես նաև հանցավոր գործունեությունը շարունակելուն<sup>13</sup>: Կալանավորումն ամենախիստ խափանման միջոցն է, որի հետևանքով անձը զրկվում է անձնական ազատությունից: Այդ պատճառով խափանման տվյալ միջոցն ընտրվում է միայն այն ժամանակ, երբ խափանման մյուս միջոցները (ստորագրություն՝ չհեռանալու մասին, անձնական երաշխավորություն, կազմակերպության երաշխավորություն և այլն) քրեական գործով վարույթի ընթացքում չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը: Նման զնահատումը պատգամավորին կալանավորելու հարցում ՀՀ Սահմանադրությունը վերապահել է Ազգային ժողովին, քանզի կալանավորման դեպքում պատգամավորը կզրկվի անձնական ազատությունից, ինչը կխոչընդոտի նրա խորհրդարանական գործունեությանը:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի տեսակին, քանզի դրա կիրառմամբ նույնպես կարող է սահմանափակվել

պատգամավորի անձնական ազատությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի համաձայն՝ չհեռանալու մասին ստորագրություն տված կասկածյալը կամ մեղադրյալը չի կարող առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը: Նա պարտավոր է ներկայանալ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի ու դատարանի կանչով և նրանց հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին: Փաստորեն, այս հոդվածի հիման վրա պատգամավորներն առանց Ազգային ժողովի համաձայնության կարող են զրկվել ազատ տեղաշարժվելու հնարավորությունից, քանզի այն արգելված չէ սահմանադրությամբ, թեև չի բխում անձեռնմխելիության սկզբունքի ելությունից:

Կարծում ենք՝ ՀՀ Սահմանադրության մեջ պետք է նախատեսել դրույթ, համաձայն որի՝ «պատգամավորին չի կարելի կալանավորել կամ այլ կերպ զրկել անձնական ազատությունից առանց Ազգային ժողովի համաձայնության», ինչպես դա արված է, օրինակ, Բուլղարիայի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածով կամ Լիտվայի Հանրապետության Սահմանադրության 62-րդ հոդվածով: Հակառակ դեպքում ընթացիկ օրենսդրությամբ միշտ էլ կարող են նախատեսվել խափանման կամ դատավարական հարկադրանքի այլ միջոցներ, որոնք կարող են սահմանափակել պատգամավորի ազատ տեղաշարժվելու իրավունքը: Օրինակ, քրեական դատավարության օրենսգրքի նախագծում որպես խափանման միջոց է նախատեսվել տնային կալանքը, որը ոչ թե կալանքի՝ որպես խափանման միջոցի տեսակ է, այլ այլընտրանքային խափանման միջոց<sup>14</sup>: Ուստի, այդ խափանման միջոցը պատգամավորի նկատմամբ կարող է կիրառվել առանց Ազգային ժողովի համաձայնության, ինչն ուղակիորեն կարող է խաթարել Ազգային ժողովի պատգամավոր

րի խորհրդարանական գործունեությունը: Նույնը կարող ենք ասել նաև վարչական հսկողության՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի կիրառման մասին: Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 124-րդ հոդվածի համաձայն՝ վարչական հսկողությունը մեղադրյալի **տեղաշարժման և գործողությունների ազատության սահմանափակումն է**, որի պայմաններում նա պարտավոր է ոչ հաճախ, քան շաբաթը երեք անգամ գրանցվել դատարանի որոշման մեջ նշված վայրի ոստիկանության մարմնում<sup>16</sup>: Ուստի կարծում ենք, շատ կարևոր է ՀՀ Սահմանադրության մեջ վերը նշված դրույթի ամրագրումը:

Ինչ վերաբերում է դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելուն, ապա սա վերաբերում է այն դեպքերին, երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի<sup>16</sup> որոշ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորությունը վերապահված է դատարաններին:

Նախ նշենք, որ ներկայումս վարչական դատարանների՝ իրավական իրականությունում նորովի իմաստավորման և արժևորման պարագայում վարչական դատարանի կողմից վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտն անհամատեղելի է համարվում վարչական արդարադատության իրականացման գործառույթի հետ<sup>17</sup>: Այդ է պատճառը, որ, ինչպես փաստում է ՀՀ Սահմանադրական դատարանը, եվրոպական երկրներում կան նախատեսված է վարչական պատասխանատվության միայն արտադատարանական կարգ, կան առկա է դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտից հրաժարվելու միտում<sup>18</sup>: Բացի այն, որ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտն ընդհանրապես արդիական չէ, Հայաստանի Հանրապետությունում այն նաև

բավականին անարդյունավետ և անկենսունակ է<sup>19</sup>: Բնականաբար այդ ոչ արդիականությունը, անարդյունավետությունը, անկենսունակությունը վերաբերում են նաև պատգամավորին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելուն, ուստի նման հարց հարուցելու համար Ազգային ժողովի համաձայնությունը ստանալը կորցնում է իր նշանակությունը:

Միևնույն ժամանակ հարց է առաջանում՝ ինչու՞ պետք է խորհրդարանը համաձայնություն տա պատգամավորին դատական կարգով վարչական պատասխանատվություն ենթարկելու հարց հարուցելուն, իսկ արտադատական կարգով վարչական պատասխանատվություն ենթարկելուն՝ ոչ: Չէ՞ որ դատարանը համարվում է ավելի պրոֆեսիոնալ մարմին, քան վարչական պատասխանատվության ենթարկելու իրավունք ունեցող մյուս սուբյեկտները: Չէ՞ որ Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն, արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքին, մինչդեռ վարչական պատասխանատվություն կիրառող մյուս սուբյեկտները զգալիորեն կախված են գործադիր իշխանությունից կամ ուղղակիորեն մտնում են գործադիր իշխանության մեջ:

Ներկայումս թե՛ Սահմանադրությամբ և թե՛ գործող օրենսգրքում ամրագրված չէ կամ դրանցից չի բխում, ինչպես նաև գիտական գրականության մեջ հիմնավորված չէ որևէ չափանիշ, որոնցով պայմանավորված՝ որոշակի իրավախախտումների համար պետք է դատական կարգով վարչական պատասխանատվության միջոցներ կիրառել, իսկ մյուսների համար՝ արտադատական կարգով: Եթե որպես չափանիշ սահմանվեին, օրինակ, պատժի խստությունը կամ այլ իրավական հետևանքներ, միգուցե այդ պարագայում Սահմանադրության նշված դրույթը կբխեր պատգամավորին քաղաքական շարժառիթներով, կամայական կամ անհիմն հետապնդումներ:

### **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

րից պաշտպանելու նշանակությունից:

Միակ տրամաբանական պատասխանը, որ կարելի է տալ վերը նշված հարցադրմանը, հետևյալն է. վարչական պատասխանատվության տակ նկատի է առնվում իրավասու պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված հիմքերով ու կարգով վարչական տույժ կիրառելը<sup>20</sup>: Ֆիզիկական անձանց նկատմամբ վարչական տույժերի համակարգն ամրագրված է վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 23-րդ հոդվածում: Մինչև 2006 թվականի դեկտեմբերի 16-ն այդ համակարգում ընդգրկված էր նաև վարչական կալանքը: Նույն օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ վարչական կալանք սահմանվում և կիրառվում էր միայն բացառիկ դեպքերում վարչական իրավախախտումների առանձին տեսակների համար՝ մինչև 15 օր ժամանակով: Ընդ որում, վարչական կալանք կարող էր նշանակել միայն դատարանը (դատավորը): Այս նորմերի համադրումից կարելի է ենթադրել, որ Սահմանադրության մեջ այն դրույթի ամրագրումը, համաձայն որի՝ պատգամավորի նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց կարող է հարուցվել Ազգային ժողովի համաձայնության, նպատակ ունենալ պաշտպանել պատգամավորի անձնական ազատությունը, քանի որ պատգամավորը վարչական իրավախախտման համար կարող էր զրկվել անձնական ազատությունից, և դրանով իսկ կխտրվեր նրա խորհրդարանական

գործունեությունը:

Ուստի վարչական կալանքի ինստիտուտի առկայության պարագայում նշված դրույթի ամրագրումն ինչ-որ տեղ արդարացված էր: Բայց ներկայիս իրավիճակում, երբ վարչական կալանքի ինստիտուտը բացակայում է, և Սահմանադրության 16-րդ հոդվածն ուղղակի արգելք է հանդիսանում օրենսդրությամբ դրա վերականգնման համար, այդ դրույթի նախատեսումը չի բխում խորհրդարանական անձեռնմխելիության էությունից: Այդ իսկ պատճառով, կարծում ենք, ՀՀ Սահմանադրության մեջ նման դրույթի առկայությունն ավելորդ է: Դեռ ավելին, ոչ միայն ավելորդ է, այլ նաև սովյալ պարագայում դառնում է աննպատակ և կարող է անհիմն քաղաքական շահարկումների առիթ տալ: Բացի այդ, Սահմանադրության մեջ առկա նշված դրույթի պահանջների բացառապես ձևական պահպանման նպատակով պատգամավորի նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու հարցերի քննարկումը խորհրդարանից անտեղի ժամանակ կարող է խլել: Հետևաբար կարծում ենք՝ սահմանադրական հետագա փոփոխությունների ժամանակ այդ դրույթը պետք է բացառել ՀՀ Սահմանադրությունից և 66-րդ հոդվածի 3-րդ մասը ձևակերպել այսպես. «Պատգամավորին չի կարելի կալանավորել կամ այլ կերպ զրկել անձնական ազատությունից առանց Ազգային ժողովի համաձայնության: Պատգամավորի վերաբերյալ քրեական գործը չի կարող ուղարկվել դատարան առանց Ազգային ժողովի համաձայնության»:

<sup>1</sup> St' u Erskine May, Parliamentary Practice, 24th edition, London, 2011, էջ 210:

<sup>2</sup> St' u Конституционное (государственное право) зарубежных стран. Общая часть (рук. авт. кол. и отв. ред. Б. А. Страшун), М., 1996, էջ 468, Маклаков В. В., Конституционное право зарубежных стран. Общая часть. 2006, էջ 611, Die verfassungsrechtlich

garantierte Stellung der Abgeordneten in den L'ndern Mittel und Osteuropas, herausgegeben von Gerrit Mansen, Frankfurt am Main, 2009, էջեր 111-150, Weizhong Yi, Research on Parliamentary Privilege Concurrently Discuss Chinese National People's Congressional Privilege, Dissertation zur Erlangung des akademischen Grades Dr. iur.,

- <sup>3</sup> Տե՛ս Աбдукадыров К. А., Депутат Жогорку Кенеша Кыргызской Республики, Бишкек, 2009, էջ 119, Глушченко П. П., Конституционное право России: Учебное пособие. Питер, 2012, էջ 190:
- <sup>4</sup> Տե՛ս Енгибарян Р. В. Сравнительное конституционное право: Учебное пособие, Ростов н/Д, 2007, էջ 390, Агафонов В. В., Соотношение гарантий неприкосновенности и неотвественности в рамках парламентского иммунитета. // Академический Вестник, 2008, N 2, էջ 8, Большой юридический словарь (под ред. А.Я. Сухарева, В.Е. Крутских), М., 2002 էջ 239:
- <sup>5</sup> Տե՛ս Окулич И. П., Депутат законодательного (представительного) органа государственной власти субъекта Российской Федерации. Правовой статус. Природа мандата. Проблемы ответственности, дисс. ... канд. юрид. Наук, Челябинск, 2003, էջ 121:
- <sup>6</sup> Տե՛ս Кутафин О.Е., Неприкосновенность в конституционном праве Российской Федерации, М., Юрист, 2004, էջ 325:
- <sup>7</sup> Տե՛ս Макарова З. В., Конева Н. С., категория “иммунитет” в конституционном праве России. // Вестник Южно-Уральского государственного университета, 2012, N 20(279), էջ 96:
- <sup>8</sup> Տե՛ս Большой юридический словарь (под ред. А. Я. Сухарева, В. Е. Крутских), М., 2002, էջ 239:
- <sup>9</sup> Տե՛ս Խաչատրյան Յ. Մ., Պառլամենտ և պատգամավոր, Երևան, 1994, էջ 27:
- <sup>10</sup> Տե՛ս E. Ozbudun, Constitutional Debates on Parliamentary Inviolability in Turkey// European Constitutional Law Review/Volume 1/Issue 02/ June 2005, էջեր 272- 273:
- <sup>11</sup> Տե՛ս Շահամիրյաններ Յ. և Շ., Որոգայթ փառաց (թարգմանությունը գրաբարից՝ Պ. Խաչատրյանի, խմբագիր Գ. Սաֆարյան, ներածական խոսքը՝ Գ. Հարությունյանի), Երևան, 2002, էջ 5:
- <sup>12</sup> Տե՛ս Council of Europe, European Commission for Democracy through Law (Venice Commission) “Report on the regime of parliamentary immunity” CPL-INF(96) 7, Strasbourg, 1996, էջ 15: [http://www.venice.coe.int/web-forms/documents/?pdf=CDL-INF\(1996\)007-e](http://www.venice.coe.int/web-forms/documents/?pdf=CDL-INF(1996)007-e) (2013 թվականի մայիսի 21-ի դրությամբ):
- <sup>13</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, ընդհանուր մաս (խմբագրությամբ՝ Գ. Ս. Ղազինյանի), Երևան 2006, էջ 353:
- <sup>14</sup> Տե՛ս [http://www.moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_5771447415\\_QrDat\\_VERJNAKAN.pdf](http://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_5771447415_QrDat_VERJNAKAN.pdf) (2013 թվականի մայիսի 21-ի դրությամբ), Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, 115-րդ և 122-րդ հոդվածներ:
- <sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, 124-րդ հոդված:
- <sup>16</sup> Ընդունվել է 06.12.1985թ., ուժի մեջ է մտել 01.06.1986թ., տե՛ս ՅՍՄՀ Գերագույն Սովետի տեղեկագիր, 1985, թիվ 23:
- <sup>17</sup> Տե՛ս Մուղնեցյան Գ. Ս., Վարչական դատավարության ընթացակարգային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, իրավ. գիտ. թեկնատենադրություն, Երևան, 2011, 79 էջ:
- <sup>18</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշումը: <http://concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-864.pdf> (2013 թվականի մայիսի 21-ի դրությամբ):
- <sup>19</sup> Հայաստանի Հանրապետությունում դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի անարդունավետության և անկենսունակության վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Մուղնեցյան Գ. Ս., նշված աշխատության 79-89 էջեր:
- <sup>20</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք, ուսումնական ձեռնարկ (ընդհանուր խմբագրությամբ Գ. Դանիելյանի), Երևան, 2012, էջ 456:

---

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ****THE ISSUES OF PARLIAMENTARY INVIOABILITY OF LEGAL BOOKING IN THE REPUBLIC OF ARMENIA****Slavik POGHOSYAN**

*PhD Student of the Chair of  
Constitutional Law in Yerevan State University*

---

**I**n the scientific article the essence of parliamentary inviolability was clarified, the relevant legal acts were analyzed and the disadvantages of legal booking were discovered. As a result of the analysis and con-

clusions and the further constitutional changes it was proposed to formulate third part of 66th article of Constitution of the Republic of Armenia like this. "A deputy may not be detained or in any way deprived of his personal liberty without the consent of the National Assembly. The criminal case relating to Deputy can not be sent to the court without the consent of the National Assembly".

---

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## Արև ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ սահմանադրական իրավունքի  
ամբիոնի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ պետությունը երաշխավորում է մարդու աշխատանքի, հասարակությանը ներառման, սոցիալական ապահովության ու կրթության իրավունքը: ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն: Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:

Մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով: Հարկադիր աշխատանքն արգելվում է»: Իրականում սահմանադրական այս դրույթները լիարժեք կյանքի կոչելու իմաստով պետության առջև դեռևս առկա են մի շարք չլուծված իրավական, գործառնական և ինստիտուցիոնալ հիմնախնդիրներ:

Աշխատանքային իրավունքի առանձնահատուկ և արդի հիմնախնդիրներից է հաշմանդամություն ունեցող անձնաց համար աշխատանքի և զբաղվածության ուղորտում արդյունավետ երաշխիքների նապատեսումը: Այստեղ, որպես իրավակարգավորման ենթակա հիմնական հարաբերություններ, կարելի է առանձնացնել՝ պետության կողմից համապատասխան կառուցակարգերի նախատեսումը, հաշման-

դամություն ունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության ապահովման խթանիչ գործիքների և արտոնությունների համակարգի ստեղծումը և գործնական կիրառության ապահովումը, գործատուի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունման օբյեկտիվ և սուբյեկտիվ արգելքների նվազեցումը, մասնագիտական վերականգնման լիարժեքության և աշխատողի համար արժանապատիվ, անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների նախատեսումը:

Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության իրավունքի ապահովման խնդիրները քննարկվել են նաև օտարերկրյա գիտնականների կողմից, և նրանց կողմից կատարված վերլուծությունները և հետևությունները կարևոր նշանակություն ունեն մեր ազգային օրենսդրության կատարելագործման համար: Մասնավորապես, այս առումով, հատկանշական է, որ մալազիացի հետազոտողները զբաղվածության հավասար հնարավորությունների նախատեսման օրենսդրական լուծումները դիտարկում են երկու հենասայուների հիման վրա՝ հավասար հնարավորությունների և այդ նպատակով համապատասխան աջակցության և արտոնությունների համակարգերի իրավական հիմքերի ամբողջական ապահովում:

Յեյլի և Միչիգանի համալսարանների իրավագիտության դպրոցների գիտնականները հաշմանդամություն ունեցող անձնաց զբաղվածության աջակցության իրավական խնդիրներին վերաբերող հետազոտության մեջ մասնավորապես հանգել են այն եզրակացության, որ մշված ուղորտի օրենսդրությամբ որպես կանոն հատուկ է ի-

## **ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

րավական անհամաչափությունը, երբ օրենսդրությամբ սահմանված նորմերը ոչ միշտ են համապատասխանում այդ ոլորտի բարեփոխումների հիմնական նպատակներին, և օբյեկտիվ իրավիճակից ելնելով՝ պարբերաբար առաջանում է այդ նորմերի հստակեցման, համապատասխանեցման և գործնականում դրանց ամբողջական կիրառությունն ապահովելու օբյեկտիվ անհրաժեշտությունը<sup>2</sup>: Մյուս կողմից, որոշ հետազոտողներ<sup>3</sup> այն կարծիքին են, որ ԱՄՆ-ում «Հաշմանդամություն ունեցող աներիկացիների մասին» օրենքը<sup>4</sup> համապարփակ կարգավորում է հաշմանդամություն ունեցող անձնաց աշխատանքային և հասարակական ինտեգրմանը վերաբերող հարաբերությունները, և այն գնահատվում է որպես միջազգային հաջողված փորձի լավագույն օրինակ:

Հայաստանի Հանրապետությունում նշված հարցերի տեսագործական համակողմանի ուսումնասիրությունները, վերլուծությունը և այդ հենքի վրա համարժեք լուծումների առաջադրումն արդիական են: Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խիստ ցածր մակարդակը և զարգացման ոչ բավարար միտումներն ունեն ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սյուբեկտիվ պատճառներ:

2012 թ. մարտ ամսին Համաշխարհային բանկի զեկույցում<sup>5</sup> նշվում է, որ Հայաստանում պահպանվում են բարձր գործազրկությունը և աշխատուժի ցածր մասնակցությունը, առկա են աշխատաշուկայում ինտեգրվելու լրացուցիչ դժվարություններ ինչպես երիտասարդների շրջանում, այնպես էլ հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Որոշ զեկույցներ և գիտական հետազոտություններ ի վերջո հանգում են այն հիմնավոր կարծիքին, որ հնարավորինս հավասար պայմաններ ստեղծելու համար միջավայրի մատչելիությունն ապահովելուն գուզընթաց կարևոր է նաև հաշմանդամությ-

յուն ունեցող անձանց սոցիալական, հոգեբանական, մասնագիտական վերականգնման լիարժեք կազմակերպումը, ինչը կնպաստի հաշմանդամություն ունեցող անձանց կրթության, աշխատանքի և զբաղվածության ապահովմանը, հասարակական գործընթացներին ակտիվ մասնակցությանը և ինտեգրմանը<sup>6</sup>:

Վերը բերվածն ուղղակիորեն վկայում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ու աշխատանքային իրավունքների ապահովման խնդիրները բարդ ու բազմաշերտ են, և դրանք պետք է ունենան համալիր իրավական կարգավորում՝ հիմնված ինչպես միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների, այնպես էլ երկրի հասարակական հարաբերությունների զարգացման օրինաչափությունների և միտումների վրա:

2010 թ. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան<sup>7</sup>, որի հիմնական նպատակն է սատարել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մարդկային իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար և հավասար իրացումը, ինչպես նաև հարգալից վերաբերմունքը նրանց արժանապատվության նկատմամբ: Կոնվենցիայի վավերացումը ենթադրում է, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստակամություն է հայտնում իրականացնելու օրենսդրական բարեփոխումներ, որոնք նորովի կլուծեն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները և կնպաստեն հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական ինտեգրմանը: Մասնավորապես, Կոնվենցիայի 27-րդ հոդվածում սահմանվում են հաշմանդամություն ունեցող և այլ անձնաց հավասար հիմունքներով աշխատանքային իրավունքի դրույթները: Կոնվենցիայի նշված հոդվածում առանձնակի կարևորվել են աշխատուժի հավաքագրման, աշխատանքի ընդունման, զբաղվածության շարունակականության, աշխատանքային առաջընթաց ապահովելու, անվտանգ ու առողջ աշխատանքի, հավա-



սար վարձատրության պայմանները: Այս շրջանակներում հատուկ ամրագրված են նաև հաշմանդամություն ունեցող անձնաց մասնագիտական ու շարունակական ուսուցման, մասնագիտական վերականգնման, ձեռնարկատիրությամբ զբաղվելու, պետական հատվածում աշխատելու դրույթները:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ վերը նշված կոնվենցիայի վկայակոչված դրույթներում ներառված մի շարք հարցեր ենթարկված չեն անհրաժեշտ իրավական կարգավորման, ինչը նաև բխում է այդ կոնվենցիայի վավերացմամբ՝ Հայաստանի ստնձնած միջազգային պարտավորություններից:

Այս եզրահանգումն առավել հիմնավորելու նկատառումով Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունից ստորև բերված են խնդրո առարկա հարցերին վերաբերող կոնկրետ մանրամասներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար նպաստավոր պայմանների ապահովման նպատակով «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի<sup>8</sup> 20-րդ հոդվածի առաջին պարբերությունը սահմանում է. «Պետական իշխանության և կառավարման տեղական մարմինները հաշմանդամների ձեռնարկատիրական գործունեության (այդ թվում՝ տնային պայմաններում) կազմակերպման համար ստեղծում են անհրաժեշտ պայմաններ՝ այդ նպատակներով ոչ բնակելի տարածությունների արտահերթ տրամադրման, ինչպես նաև հումքի ձեռքբերման և արտադրանքի իրացման գործում օժանդակություն ցույց տալու միջոցով»: Իրավակիրառ տեսանկյունից, կարծում ենք, ոչ բնակելի տարածությունների արտահերթ տրամադրումը, հումքի ձեռքբերման և արտադրանքի իրացման գործում օժանդակությունը վկայակոչված օրենքում լրացուցիչ հստակեցման, իրականացման կոնկրետ մեխանիզմների սահ-

մանման օբյեկտիվ անհրաժեշտություն ունեն առնվազն հետևյալ հիմնական ուղղություններով՝ նշված պետական աջակցության կոնկրետ ձևեր, եղանակներ, չափեր, ժամկետներ, հաճախականություն, շահառուների առաջնահերթությունների սահմանում: Մյուս կողմից, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուն ուղևած պետական աջակցությունը գործնական և արդյունավետ ապահովման տեսանկյունից, կարծում ենք, նպատակահարմար չէ այդ աջակցությունը սահմանափակել միայն վերը թվարկված երեք ուղղություններով, քանի որ այն օբյեկտիվորեն ենթադրում է նաև մի շարք այլ կարևոր և նպատակային անհրաժեշտ ուղղություններ՝ ֆինանսական միջնորդության շրջանակներում պետական երաշխիքների առաջնահերթ տրամադրում, փոխառության տոկոսադրույքի նվազեցման միջնորդություն, կազմակերպության գրանցման և պետական վերահսկողության դյուրին վարչարարության սկզբունքների սահմանում:

Հաշմանդամություն ունեցող անձանց ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության տրամադրման վերաբերյալ որոշ դրույթներ են սահմանված նաև «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի<sup>9</sup> 19-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև 13-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով: Իրավական կարգավորման այս շրջանակներում ևս պետական աջակցությունը հանգում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցության, ինչը, ենթադրվող հիմնական նպատակի իրացման տեսանկյունից ոչ լիարժեքությամբ պայմանավորված, գործնականում ունենում է աննշան արդյունք և չի բավարարում ներուժային շահառուների օբյեկտիվ և իրական պահանջները:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն գործատուների նկատմամբ իրենց աշխատողների թվաքանակի որոշակի տոկոսի

## **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

չափով հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվի (քվոտա) պահանջ, պետական կազմակերպություններում աշխատանքի անցնելու որոշակի առաջնահերթություններ և արտոնյալ իրավունքներ: Այս հարաբերությունների իրավական կարգավորումը, նկատի ունենալով այդ ուղղությամբ առկա միջազգային լավագույն փորձը, լայն տարածում և արդյունավետ կիրառություն է գտել ինչպես տնտեսապես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում:

Քննարկվող հարցերի շրջանակներում հատկանշական է նաև, որ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը<sup>10</sup> և դրանից բխող՝ «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2013 թ. ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը<sup>11</sup>, «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը<sup>12</sup>, «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը<sup>13</sup>, ինչպես նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված՝ Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային ռազմավարությունը<sup>14</sup> որևէ կերպ չեն անդրադառնում հաշմանդամություն ունեցող անձանց ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության հարաբերությունների կարգավորմանը և բնականաբար չեն ներառում համապատասխան մեխանիզմներ և լուծումներ:

**Ամփոփելով կարելի է օբյեկտիվորեն եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պետական աջակցության իրավական կարգավորման դաշտը թե-**

**րի է և ունի բազմակողմանի լրամշակման և համակարգային լուծումների անհրաժեշտություն: Մասնավորապես, հանգում ենք այն եզրակացության, որ փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց համար ըստ յուրաքանչյուր ուղղության առաջնահերթությունների պետք է սահմանվեն կոնկրետ կառուցակարգեր, արտոնությունների հստակ համակարգ, որի շրջանակներում հավասար պայմաններում հաշմանդամություն ունեցող անձինք պետք է ունենան աջակցությունից օգտվելու նախապատվության իրավունք:**

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության պետական աջակցության քաղաքականությունը մշակվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և իրականացնում իր կառուցվածքում գործող «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության (ԶՊԾԳ), ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (ԲՄՓԳ) և «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով: Հայաստանում գործում են նաև աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական և հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մի շարք ոչ պետական կազմակերպություններ:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ անձին հաշմանդամ է ճանաչում ԲՄՓԳ-ն՝ դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան՝ ըստ բժշկասոցիալական փորձաքննության արդյունքների: Հաշմանդամ ճանաչված անձին տրվում է հաշմանդամության խումբ (1-ին, 2-րդ և 3-րդ), իսկ մինչև 18 տարեկան երեխաներին՝ հաշմանդամություն ունեցող երեխայի կարգավիճակ:

Հաշմանդամություն ունեցող անձանց

զբաղվածության ապահովմանն ուղղված բոլոր ծրագրերն իրականացվում են՝ ըստ ԲՍՓԳ-ի կազմած հաշմանդամություն ունեցող անձի անհատական վերականգնողական ծրագրի: Մասնագիտական վերականգնումը ներառում է մասնագիտական կողմնորոշումը, մասնագիտական կրթությունը, մասնագիտական հարմարվողականությունը և աշխատանքի տեղավորման գործընթացը:

Աշխատաշուկայի պետական կարգավորումն ընդհանրապես իրականացվում է ամենամյա ծրագրերով, որոնց՝ պետական բյուջեից տարեկան ֆինանսավորման հիմքում դրվում են միջնաժամկետ ծախսային ծրագրերն ու դրանց գերակայությունները:

Բնակչության սոցիալական առանձին խմբեր, սոցիալական, կրթական, առողջական վիճակով պայմանավորված, ունեն աշխատանքի տեղավորման լրացուցիչ դժվարություններ, որտեղ անմասն չեն նաև հաշմանդամություն ունեցող անձինք: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանվել են նաև աշխատաշուկայում անմրցունակ 7 խմբեր, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք: Նշված օրենքում 2010 թ. դեկտեմբերին կատարված փոփոխություններով աշխատաշուկայում անմրցունակ խմբերը լրացվել են ևս երկուսով, որի արդյունքում հաշմանդամություն ունեցող անձանց խումբը, օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, առաջին պարբերությամբ ցանկում պահպանվել է առաջին տեղը: Այս խմբերում ընդգրկված՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար, բացի հիմնական ծրագրերից, նախատեսված են նաև հատուկ ծրագրեր:

Կարելի է փաստել, որ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության պետական կարգավորման ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշները խիստ մտահոգիչ են: Սակայն դրական է այն հանգամանքը, որ վերջին տարիներին հաշմանդամություն ունեցող անձանց զբաղ-

վածության ապահովման նպատակով ներդրվել են նոր ակտիվ ծրագրեր: Մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության աջակցման նպատակով 2010 թ. դեկտեմբերի 22-ին ընդունված «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի<sup>15</sup> 6-րդ հոդվածով սահմանվել են բնակչության զբաղվածության պետական կարգավորման հետևյալ յոթ հիմնական ծրագրերը, որոնցից չորսը նոր են.

1. աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցումը, աշխատանքային ունակությունների վերականգնումը,

2. այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների նյութական ծախսերի հատուցումը (հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ որպես նոր ծրագիր),

3. ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը,

4. աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցումը գործատուից,

5. աշխատանքի տոնավաճառի կազմակերպումը, այդ թվում՝ աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների համար (հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ որպես նոր ծրագիր),

6. մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող ու աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ (հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ որպես նոր ծրագիր),

7. աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցումը գործատուի մոտ (հաշ-

### **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

մանդամություն ունեցող անձանց համար՝ որպես նոր ծրագիր):

Նշված ծրագրերը ներառված են նաև զբաղվածության կարգավորման 2013 թ. պետական ծրագրում, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2012 թ. սեպտեմբերի 27-ի նիստի N 39 արձանագրային որոշման N 1 հավելվածով:

Այս առումով հատկանշական է նաև, որ 2008 թ. վերջին քառորդից վրա հասած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում պահպանվել են ծրագրերի գծով պետական բյուջեից ֆինանսավորման չափաբաժնեները, իսկ 2012-2014 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է էական աճ զբաղվածության պետական կարգավորման բոլոր ծրագրերի գծով:

Մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման ծրագիրը դիտվում է որպես զբաղվածության պետական կարգավորման առանցքային ծրագիր, որի նպատակը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու միջոցով հարմար աշխատանքի տեղավորման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու հարցերում շահառուին աջակցելն է<sup>16</sup>:

ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված է, որ աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր ամերցունակ անձի համար գործատուին տրվում է փոխհատուցում՝ գործատուի կողմից սահմանված աշխատավարձի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը: Փոխհատուցման ծրագրում ընդգրկված ամերցունակ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց աշխատավարձերի փոխհատուցումը տրամադրվում է 2 տարի ժամկետով, իսկ ամերցունակ այլ անձանց՝ մեկ տարի ժամկետով<sup>17</sup>:

2011 թ. սկսած՝ հաշմանդամություն ու-

նեցող անձանց զբաղվածության ապահովման նպատակով իրականացվում է գործատուի մոտ աշխատանք փնտրող չգբաղված հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի հարմարեցում՝ յուրաքանչյուր հաշմանդամություն ունեցող անձի գծով առավելագույնը 200000 դրամի շրջանակներում<sup>18</sup>:

2011 թ. իրականացվում է նաև գործատուի մոտ աշխատանքային պրակտիկայի կազմակերպման ծրագիրը<sup>19</sup>, որի նպատակն է՝ աջակցել շահառուին<sup>20</sup>, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձին, ձեռք բերել իր մասնագիտական որակավորմանը համապատասխան աշխատանքային փորձ, աշխատաշուկայում դառնալ առավել մրցունակ և տեղավորվել հարմար աշխատանքի: Պրակտիկայի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում շահառուին վճարվում են աշխատավարձ՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափով, և պարտադիր սոցիալական ապահովության վճարները: Պրակտիկան անցկանող անձին տրվում է վճար՝ նրա միջին ամսական աշխատավարձի 20%-ի չափով, բայց նվազագույն ամսական աշխատավարձի չափից ոչ ավելի:

Աշխատաշուկայի տարածքային անհամասնությունները մեղմելու, հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների զբաղվածության ապահովման նպատակով իրականացվում է այլ վայր աշխատանքի գործուղման ծրագիրը, որը ենթադրում է շահառուին՝ իր բնակության վայրից դուրս աշխատանքի տեղավորում՝ որոշակի չափանիշների համաձայն: Այլ վայր աշխատանքի գործուղման համար շահառուին տրվում է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում, միանվագ դրամական աջակցություն՝ նվազագույն ամսական աշխատավարձի եռապատկի չափով, բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի փոխհատուցում՝ յուրաքանչյուր ամիս նվազագույն աշխատավարձի չափով, մեկ տարի ժամկետով<sup>20</sup>:

Աշխատաշուկայի պետական կարգավորման շրջանակներում հաշմանդամություն ունեցող՝ աշխատանք փնտրող ան-

ծանց տրամադրվում է խորհրդատվություն, կազմակերպվում են աշխատանքային ակումբներ և տոնավաճառներ<sup>21</sup>:

2008-2012թթ. ընկած ժամանակահատվածում աշխատաշուկայի պետական կարգավորման բոլոր ծրագրերում ներգրավված հաշմանդամություն ունեցող անձանց միջին տարեկան թվաքանակը 154 է, որը խիստ նտահոգիչ ցուցանիշ է՝ նկատի ունենալով նաև հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության վերը նկարագրված ընդհանրական միտումները<sup>22</sup>:

Աշխատաշուկայի ամենամյա պետական կարգավորման ծրագրերի գնահատման ամբողջական համակարգ դեռևս ներդրված չէ, ինչն այդ ծրագրերը վերլուծելու առումով օբյեկտիվ դժվարություններ է հարուցում:

Փաստորեն, չնայած որոշակի բարելավման, պետական կարգավորման իրականացման նպատակայնության և համալիր արդյունավետության ապահովման տեսանկյունից կարևոր բնութագրական է արձանագրված այն փաստը, ըստ որի՝ վերլուծվող ժամանակահատվածում զբաղվածության ամենամյա պետական ծրագրերով աշխատանքի տեղավորված հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակի հանրագումարը դեռևս փոքր տեսակարար կշիռ ունի հաշվառված աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր թվում:

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության պետական կարգավորման առումով լրջագույն հիմնախնդիր կարելի է համարել այն, որ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներում ընդհանրական սահմանված են աշխատաշուկայի պետական կարգավորման քաղաքականության հիմնական նպատակը և սկզբունքները, ըստ որի հնարավոր չէ հստակ որոշարկել այդ կարգավորման տեղն ու դերը ընդհանուր սոցիալական քաղաքականության համակարգում: Նշված օրենքով առանձին սահմանված են զբաղվածության պետական կարգավոր-

ման կոնկրետ ծրագրերը, որոնց շրջանակներում էլ կազմվում է աշխատաշուկայի պետական կարգավորման տարեկան ծրագիրը: Ըստ որում, սահմանափակվում է կարգավորման ճկուն և իրավիճակային միտումներից բխող պլանավորման հնարավորությունը՝ քաղաքականության թիրախավորման, թափանցիկության և արդյունքների համալիր գնահատման ապահովումը, ըստ առաջնահերթությունների պետական աջակցության և որպես դրա հիմնական արդյունք՝ հաշմանդամություն ունեցող անձանց կայուն զբաղվածության ապահովումը:

Հետևաբար, գործնականում էապես կրճատվում են նաև ոլորտին ուղղվող պետական միջոցների օգտագործման նպատակայնության և արդյունավետության հետևողական բարձրացման օբյեկտիվ հնարավորությունները: Խնդիրն առավելապես վերաբերում է գործող իրավական կարգավորման շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց՝ աշխատաշուկայում արդյունավետ ինտեգրման առումով կարգավորման հիմնախնդիրներ են նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար ու մատչելի պայմանների և հավասար հնարավորությունների ապահովումը, այդ անձանց իրավունքների իրացման, օրենսդրությամբ սահմանված երաշխիքներից օգտվելու, գերատեսչությունների կողմից մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը, պաշտոնական վիճակագրության ոչ ամբողջականությունը, իսկ առանձին դեպքերում՝ բացակայությունը:

Դեռևս առանցքային խնդիրներ են մնում աշխատաշուկայի պետական կարգավորում իրականացնող մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների հզորացումը, փոխլրացնող և արդյունավետ համագործակցության ապահովումը, մատուցվող ծառայությունների արդյունավե-

## **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

տության և հասանելիության բարձրացումը, սոցիալական գործընկերության ոչ բավարար մակարդակը, գործատուների շրջանում համընդհանուր սոցիալական պատասխանատվության պակասը:

Հայաստանում գործում են նաև աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ, որոնց գործունեությունը գրեթե ամբողջությամբ դուրս է մնացել զբաղվածության պետական կարգավորման շրջանակներից: Միաժամանակ, բացակայում է արդյունավետ համագործակցությունը ԶՊԾԳ-ի հետ: Այս կազմակերպությունների և դրանց գործունեության վերաբերյալ չի իրականացվում պաշտոնական վիճակագրություն: Մյուս կողմից, այս կազմակերպությունների ներուժը նույնպես անտեսված է զբաղվածության պետական կարգավորման շրջանակներում: Նկարագրված

պայմաններում անհնար է դառնում նաև աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների հաճախորդների իրավունքների՝ միջազգային չափանիշներին համապատասխան պաշտպանության ապահովումը:

Հիմք ընդունելով հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության աջակցման գործող օրենսդրության վերլուծության շրջանակներում վեր հանված հիմնական խնդիրների ընդգրկվածությունը և համակարգային բնույթը, ինչպես նաև այդ խնդիրների լուծումներն ապահովող հիմնական մեխանիզմների օրենսդրորեն ամբողջական անրագրման անհրաժեշտությունը՝ կարծում ենք՝ պետք է ընդունվեն զբաղվածության ոլորտը կարգավորող նոր օրենք և դրա կիրարկումն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտեր, որոնց շրջանակներում կանրագրվեն մեր կողմից առաջարկվող կոնկրետ լուծումները՝ իրենց իրավական հիմքերով ու մեխանիզմներով:

<sup>1</sup> Տե՛ս Fumitaka Furuoka, Beatrice Lim, Khairul Hanim Pazim, Roslinah Mahmud, Employment Situation of Person with Disabilities: Case Studies of Us, Japan and Malaysia, Human Resource Economics, Program School of Business and Economics, Universiti Malaysia Sabah, Sabah, Malaysia, International Refereed Research Journal, Vol.– II, Issue –4, Oct. 2011.

<sup>2</sup> Տե՛ս Christine Jolls, J.J. Prescott Harvard Law School, Disaggregating Employment Protection: The Case Of Disability Discrimination, Yale Law School; National Bureau Of Economic Research (Nber), University Of Michigan Law School Harvard Public Law Working Paper No. 106, Harvard Law And Economics Discussion Paper No. 496, 2007.

<sup>3</sup> Տե՛ս DeLeire, Thomas, "The Americans with Disabilities Act and the Employment of People with Disabilities," The Decline in Employment of People with Disabilities (David C. Stapleton and Richard V. Burkhauser, eds.), 2003. Acemoglu, Daron and Joshua D. Angrist. 2001. "Consequences of Employment Protection?"

The Case of the Americans with Disabilities Act," Journal of Political Economy, 109: 915–957.

<sup>4</sup> Americans with Disabilities Act of 1990 - ADA - 42 U.S. Code Chapter 126.

<sup>5</sup> «Արդյունավետ զբաղվածության խթանումը Հայաստանում» զեկույց, Յան Ռուտկովսկի, Համաշխարհային բանկ, Երևան, մարտ 2012թ:

<sup>6</sup> «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավիճակը. մատչելիություն և զբաղվածություն» զեկույց, 2012թ., «Ամեն ինչ մեզ համար՝ մեզ հետ» ծրագիր, իրականացնողներ՝ «Լիարժեք կյանք» բարեգործական-հասարակական, «Փարոս», «Աստղացույք», «Լուսաստղ», «Թալին-Հույս» հասարակական կազմակերպություններ: Ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպական միությունը: «Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությանը և մասնագիտական կրթությանը վերաբերող ՀՀ օրենսդրության վերլուծություն», «Ունի-սոն» հասարակական կազմակերպություն, 2012թ:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդանություն ունեցող անձանց զբաղվածության հիմնախնդիրների վերլուծության զեկույց», 2011 թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ: Հայաստանի Հանրապետությունում հաշմանդանների աշխատանքի տեղավորման համար աշխատատեղերի նորմատիվի (քվոտայի) կիրառության և դրա հնարավոր հետևանքների վերլուծություն զեկույց, 2012 թ., ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, USAID-ի «Հաշմանդանություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով» ծրագրի օժանդակությամբ:

<sup>7</sup> «Հաշմանդանություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ է մտել 2010 թ. հոկտեմբերի 22-ին:

<sup>8</sup> «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդանների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ Գերագույն խորհուրդ, 14 ապրիլի 1993 թ. Հ.Ն-0800-1:

<sup>9</sup> «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ Ազգային ժողով, 25.11.2005 թ., ՀՕ-206-Ն:

<sup>10</sup> «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, Երևան 28 դեկտեմբերի 2000 թ., ՀՕ-121-Ն:

<sup>11</sup> «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2013 թ. ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 55-Ն, 24 հունվարի 2013 թ.:

<sup>12</sup> «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենք, Երևան, ՀՕ-193-Ն, 18 հունիսի 2011 թ.:

<sup>13</sup> «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 828-Ա, 6 սեպտեմբերի 2011 թ.:

<sup>14</sup> «Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային ռազմավարությունը», Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի կայքէջ -

<http://www.smednc.am/?laid=2&com=module&module=menu&id=265>

<sup>15</sup> «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՀ Ազգային ժողով, 15.01.2011 թ., ՀՕ-23-Ն:

<sup>16</sup> «Գործազուրկների, հաշմանդանների, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող՝ աշխատանք փնտրող անձանց և երկարամյա ծառայության, արտոնյալ պայմաններով և մասնակի կենսաթոշակ ստացող՝ աշխատանք փնտրող չզբաղված անձանց մասնագիտական որոշման կազմակերպման կարգը հաստատելու մասին», ՀՀ կառավարության որոշում, N 533-Ն, 30 մարտի 2006 թ.:

<sup>17</sup> «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի փոխհատուցման կարգը, չափը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 996-Ն, 13 հուլիսի 2006 թ.:

<sup>18</sup> Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 01.062011 թ. N 48-Ն հրամանով հաստատված N 3 հավելված:

<sup>19</sup> Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 01.062011 թ. N 48-Ն հրամանով հաստատված N 2 հավելված:

<sup>20</sup> «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի փոխհատուցման կարգը, չափը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 983-Ն, 24 հուլիսի 2006 թ.:

<sup>21</sup> Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 01.062011 թ. N 48-Ն հրամանով հաստատված N 1 հավելված:

<sup>22</sup> «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում» ՀՀ ԱԿԾ, 2012 թ.: «2013 թ. զբաղվածության կարգավորման պետական ծրագիր», որը հաստատվել է ՀՀ կառավարության 2012 թ. սեպտեմբերի 27-ի նիստի N 39 արձանագրային որոշման N 1 հավելվածով:

---

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ****THE STATE AND ISSUES OF SOCIAL INCLUSION OF PEOPLE  
WITH DISABILITIES IN THE LABOR AND EMPLOYMENT  
AREAS IN THE REPUBLIC OF ARMENIA****Arev GHAZARYAN***Post Graduate Student**Yerevan State University**Department of Constitutional Law*

---

**T**he goal of this paper is to find out solutions to improve employment rights of people with disabilities in the Republic of Armenia. Research tasks are mainly related with the unemployment reduction,

employment promotion, annual state programs, and other issues of the existing legal mechanisms related to the labor market integration of people with disabilities. The paper also offers comprehensive legal solutions of disabled people labor and employment rights.

---



## ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

### Անահիտ ԵՍԱՅԱՆ

ԵՊՀ սահմանադրական իրավունքի  
ամբիոնի հայրորդ

**Ը**նտրական վեճերը յուրաքանչյուր ընտրական գործընթացի անբաժանելի, սակայն անցանկալի ուղեկիցներն են: Ընտրությունների նախապատրաստման, անցկացման և ամփոփման ժամանակ հաճախադեպ են ընտրական գործընթացի մասնակիցների իրավունքների խախտումները<sup>1</sup>:

Ընտրական վեճերը բնորոշ են բոլոր ընտրություններին՝ անկախ այն հանգամանքից, թե զարգացվածության ինչ մակարդակի երկրում են դրանք տեղի ունենում: Կա տեսակետ, որ ընտրական վեճերը ոչ թե քաղաքական համակարգի անկատարության, այլ դրա բաց, թափանցիկ լինելու հետևանք են, իհարկե եթե իրականացվում է դրանց օբյեկտիվ քննություն<sup>2</sup>: Այլ կերպ ասած՝ ընտրական վեճի առկայությունը փաստում է քաղաքական համակարգի պատրաստակամությունը՝ ապահովելու անձի ընտրական խախտված իրավունքի վերականգնումը: Կարծում ենք, որ տվյալ տեսակետի վերագրումը այսօրվա ՀՀ քաղաքական համակարգին ցանկալի է, սակայն ոչ այնքան իրատեսական:

Ինչպես նշվեց, ընտրական վեճերն անխուսափելի են, սակայն պետք է ոչ թե համակերպվել այդ փաստին, այլ ձգտել դրանք հասցնել նավազագույնի: Դրա համար պետք է փորձել վեր հանել ընտրական օրենսդրության թերությունները ու իրավակիրառ գործընթացում կատարվող խախտումները: Ընտրական օրենսդրության խախտումների վերաբերյալ քննարկումներն այսօր արդիական են սահմանադրական բարեփոխումների համատեքստում: Օրենսդրության թերությունների բացահայտման համար գոյություն զանազան ա-

ռավել արդյունավետ լծակներ, որոնցից նախընտրելին, մեր կարծիքով, ընտրական վեճի առկայությունն է:

Ընտրական վեճերի ուսումնասիրման արդիականությունը պայմանավորված է նաև դրանց՝ քաղաքացիների ընտրական իրավունքների հետ անքակտելի կապով, քանի որ ընտրական վեճի իրավական կարգավորման իմաստալից քաղաքացիների ընտրական իրավունքի պաշտպանության եղանակ է: Քաղաքացիների ընտրական իրավունք ասելով հասկանում ենք փոխկապակցված իրավունքների մի ամբողջական համակարգ, որի հիմքում ընկած է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածով ամրագրված հիմնադրույթը:

Միջազգային հանրությունը նույնպես մեծ ուշադրություն է դարձնում ընտրական վեճերին, դրանց առաջացման պատճառներին, ինչպես նաև արդար և թափանցիկ քննության համար անհրաժեշտ ընթացակարգեր մշակելուն ուղղված հարցերին<sup>3</sup>: Այնուամենայնիվ, «ընտրական վեճ» եզրույթը, որպես կանոն, օգտագործվում է մասնագիտական գրականության մեջ, իսկ օրենսդրությամբ ընտրական հարաբերություններ կարգավորող յուրաքանչյուր նորմատիվ իրավական ակտ այս խնդրի վերաբերյալ յուրովի մոտեցում է ցուցաբերում, քանի որ ընտրական վեճերը բազմազան են՝ կախված ընտրությունների անցկացման մակարդակից, հակասության բնույթից, իրավահարաբերության կողմերի կազմից, վեճը լուծող մարմնից և այլն: Բացի այդ, ընտրական վեճերը հեղհեղուկ բնույթ ունեն և մեկ սահմանման միջոցով փորձել ամբողջությամբ բացահայտել տվյալ երևույթի էությունը, կարծում ենք, իրատեսական չէ: Այնուամենայնիվ, իրավաբանական գրականության մեջ «ընտրական վեճ» հասկացության վերաբերյալ կան տարբեր ձևակերպումներ, սակայն դրանցից ոչ մեկը, մեր կարծիքով, չի բա-

### **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ցահայտում դրա էությունը: Պատճառն այն է, որ ընտրությունները ենթադրում են անընդհատ գործընթաց, և հետևաբար յուրաքանչյուր նոր ընտրության ժամանակ առաջացող ընտրական վեճ ունի իր առանձնահատկությունները, և դրանք նախապես ամբողջությամբ կանխատեսել հնարավոր չէ:

Ընտրական վեճի վերաբերյալ առկա մոտեցումների ուսումնասիրությամբ կարելի է հանգել այն եզրակացության, որ **ընտրական վեճը միջոյուղային ինստիտուտ է, որը գործնականում արտահայտվում է ընտրական գործընթացի մասնակիցների ընտրական իրավունքի իրական, հնարավոր կամ ենթադրյալ խախտման առաջացող հարաբերություն հիմքով՝ ընտրությունների նշանակման, նախապատրաստման, անցկացման և ամփոփման ընթացքում և լուծվում է վարչական կամ դատական կարգով՝ անհրաժեշտության դեպքում ենթադրելով պատասխանատվության միջոցի կիրառում:**

Ինչպես գիտենք, իրավունքի ինստիտուտները իրավունքի կոնկրետ ճյուղի բաղկացուցիչ տարրեր են, որոնք կարգավորվում են համապատասխան իրավունքի ճյուղի առանձին նորմերով: Սակայն այս ընդհանուր կանոնը չի տարածվում ընտրական վեճերի վրա, քանի որ ընտրական վեճերը, կախված դրանց առարկայից, անցկացվող ընտրության մակարդակից, վեճը քննող մարմնից և այլն, կարգավորվում են իրավունքի տարբեր ճյուղերով, օրինակ՝ սահմանադրական, վարչական, քրեական և այլն: Սրանով է պայմանավորված ընտրական վեճի՝ միջոյուղային ինստիտուտ լինելու հանգամանքը, ինչը փաստում է նաև ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ նախատեսելով ընտրական հանձնաժողովների որոշումները ինչպես վերադաս ընտրական հանձնաժողով, այնպես էլ վարչական և սահմանադրական դատարաններ բողոքարկելու հնարավորություն<sup>4</sup>:

ՀՀ ընտրական օրենսգիրքը, որն ընտրական հարաբերություններ կարգավորող հիմնական իրավական ակտն է, «վեճ» կամ «ընտրական վեճ» հասկացություններն առհասարակ չի գործածում, այլ կիրառում է «բողոքարկում» տերմինը, բայց ոչ թե ընդհանուր առմամբ «քաղաքացիների խախտված ընտրական իրավունքների բողոքարկում», ինչպես կիրառվում է այլ երկրների օրենսդրության մեջ<sup>5</sup>, այլ «ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկում» (ընտրական օրենսգրքի 46 հոդվ.), սակայն սույն հոդվածի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ «բողոքարկումը» վերաբերում է ընտրական իրավունքի սուբյեկտների խախտված իրավունքին, որը հնարավոր է բողոքարկել ինչպես վարչական, այնպես էլ դատական մարմիններ, այն է՝ յուրաքանչյուր ընտրական հանձնաժողովի վերադաս ընտրական հանձնաժողով, վարչական կամ Սահմանադրական դատարաններ, սակայն թե ո՞ր վարչական և ո՞ր դատական ատյան պետք է բողոքարկել խախտումը (որոշումը, գործողությունը, անգործությունը), կախված է այն թույլ տված մարմնի և ընտրության տեսակից:

ՀՀ ընտրական օրենսգրքում բոլոր դեպքերի համար օգտագործվող «բողոքարկում» եզրույթի հետ ամբողջությամբ համաձայնվել չենք կարող, քանի որ ընտրական վեճերն առաջանում են ոչ միայն բողոքների, այլև դիմումների հիման վրա: Չնայած «դիմում» և «բողոք» հասկացությունների վերաբերյալ միասնական բնորոշում չկա, բայց, այնուամենայնիվ, դրանք տարբեր կերպ են ընկալվում. «բողոք» ասելով հասկանում ենք անձի (ֆիզիկական անձ, իրավաբանական անձ) դիմումը հանրային իշխանություն իրականացնող մարմին կամ դրա պաշտոնատար անձին՝ իր խախտված իրավունքների և շահերի պաշտպանության խնդրով<sup>6</sup>, իսկ «դիմում» եզրույթը ենթադրում է անձի պահանջը համապատասխան մարմին՝ Սահմանադրու-

յամբ և օրենքով նախատեսված իր իրավունքների իրացման կապակցությամբ<sup>7</sup>: Այլ կերպ ասած՝ «դիմում» ներկայացնելը չի ենթադրում խախտված իրավունքի առկայություն, իսկ բողոքարկումը խնդրի վերաբերյալ արդեն իսկ կայացված որոշման հետ համաձայն չլինելու դեպքում դրսևորվող համարժեք գործողությունն է: Հետևաբար, օրենսդրի կողմից դրանց նույնացումը չի բխում վարչարարության վերաբերյալ իրավական նորմերից:

Այնուամենայնիվ, ՀՀ ընտրական օրենսգիրքը մանրամասնորեն սահմանում է ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական իրավախախտումների քննության կարգը, իսկ ինչ վերաբերում է վարչական և սահմանադրական դատարաններ ներկայացված բողոքների քննությանը, ապա դա թողնված է համապատասխան ոլորտները կարգավորող օրենսդրական ակտերին, որոնք են «Վարչական դատավարության մասին» ՀՀ օրենսգիրքը և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը: Այսպիսով, այս հանգամանքը ևս մեկ անգամ հաստատում է ընտրական վեճի միջյուրդային ինստիտուտ լինելը, ինչը ենթադրում է, որ վերը նշված իրավական ակտերի միջև անհրաժեշտ է ապահովել ներքին ներդաշնակություն, որը, ցավոք, ոչ բոլոր դեպքերում է արվում:

Ինչ վերաբերում է ընտրական վեճերի առաջացման պատճառներին, ապա մասնագիտական գրականության մեջ ներկայացվում են տարատեսակ գործոններ, որոնք այս կամ այն կերպ կարող են նպաստել ընտրական վեճերի առաջացմանը: Սակայն ընտրական վեճը՝ որպես միջյուրդային ինստիտուտ, շատ բազմատեսակ և յուրօրինակ է, քանի որ յուրաքանչյուր ընտրական գործընթաց ունի իր քաղաքական առանձնահատկությունները, որոնք իրենց ազդեցությունն են թողնում ընտրական վեճերի առաջացման պատճառների վրա, ուստի կարծում ենք, որ մեկ դասակարգման մեջ հնարավոր չէ թվարկել այն բոլոր պատճառները, որոնք կարող են

ընտրական վեճ առաջացնել:

Այնուամենայնիվ, փորձենք ներկայացնել ընտրական վեճերի առաջացման պատճառների վերաբերյալ մի տարբերակ, որը, ինչպես վերը նշվեց, ելնելով ընտրական վեճերի բազմազանությունից և յուրօրինակությունից, չի հավակնում լինել վերջնական և բացարձակ, այլ մեր կողմից փորձ է ներկայացնելու մեր օրերում ընթացող ընտրական գործընթացների առանձնահատկությունները:

Մինչ այդ հարկ ենք համարում վերլուծել «պատճառ» եզրույթի էությունը, ինչը նշանակում է կոնկրետ փատական հանգամանք, որով պայմանավորված է մեկ այլ երևույթի առաջացումը:

Ընտրական վեճը պայմանավորող հանգամանքը, ինչպես վերը նշվեց, ընտրական իրավունքի խախտումն է, այսինքն ընտրական վեճի առաջացման պատճառը իրավախախտումն է: Չէ՞ որ քաղաքացին դիմում է վարչական կամ դատական ատյան՝ խախտված իրավունքի վերականգնման համար, իսկ խախտված իրավունքը վերականգնելուց հետո ընտրական վեճը համարվում է լուծված, հետևաբար ընտրական վեճի առաջացման անմիջական պատճառը իրավախախտումն է:

Այսպիսով, **ընտրական վեճի առաջացման պատճառը ընտրական գործընթացի մասնակիցների ընտրական իրավունքների իրական, հնարավոր կամ ենթադրյալ խախտումն է:**

Իրական իրավախախտման դեպքում առկա է խախտված իրավունքի վերականգնման վերաբերյալ դիմում (բողոք), և համապատասխան ընտրական վեճեր լուծող մարմինը դիմումը (բողոքը) քննելու ընթացքում հայտնաբերում է օրենքի խախտում և որոշմամբ վերականգնում է խախտված իրավունքը:

Հնարավոր իրավախախտման դեպքում առկա է իրական հնարավորություն անձի ընտրական իրավունքը խախտելու վերաբերյալ, որը պետք է կանխվի համապատասխան ընտրական վեճ լուծող մարմնի

## **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

կողմից:

Ենթադրյալ իրավախախտման դեպքում խախտված իրավունքի վերականգնման վերաբերյալ դիմումի (բողոքի) հիման վրա ընտրական վեճեր լուծող մարմինը օրենքի խախտում չի արձանագրում, այսինքն՝ անձը կարծում է, որ իր ընտրական իրավունքը խախտված է, սակայն իրականում իրավախախտում չկա: Գործնականում ենթադրյալ իրավախախտումների թիվը բավականին մեծ է, հակառակ դեպքում բոլոր ընտրական վեճերը ենթակա են լուծման հօգուտ դիմողի:

Իրավախախտումներն իրենց հերթին պայմանավորված են մի շարք հանգամանքներով, և հաճախ հենց այդ հանգամանքներից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությամբ է պայմանավորված իրավախախտման առաջացումը: Մասնավորապես, այդպիսիք են.

1) ընտրական օրենսդրության անկատարությունը, որը կարող է արտահայտվել օրենսդրական ակտերի միջև հակասություններով, օրենսդրության մեջ առկա բացթողումներով, հասկացությունների որոշակիության բացակայությամբ և այլն,

2) ընտրական գործընթացի մասնակիցների իրավագիտակցության և իրավական մշակույթի ցածր մակարդակով և այլն:

Այնուամենայնիվ, և՛ ընտրական օրենսդրության անկատարությունը, և՛ ընտրական գործընթացի մասնակիցների իրավագիտակցության ցածր մակարդակը պայմանավորված են նաև այն բանով, որ ՀՀ-ում պետական համակարգը, հետևաբար նաև ընտրական գործընթացը զարգացման փուլում են, և տարեցտարի անցկացվող ընտրություններում արձանագրվում են դրական փոփոխություններ: Սակայն պետք է նաև նշել, որ այս տարիների ընթացքում եղել են բազմաթիվ դեպքեր, և այսօր էլ դրանք կան, երբ թեկնածուները փորձել են օգտագործել ցանկացած առիթ՝

կոնֆլիկտային իրավիճակներ ստեղծելով, զանգվածային լրատվության միջոցներն և ընտրական հանձնաժողովները ներգրավելով, չընտրվելու դեպքում դրանք օգտագործեն ընտրությունների արդյունքները վիճարկելու, այլ կերպ ասած՝ հրահրել են ընտրական վեճեր, որպեսզի դրանք օգտագործեն որպես PR-տեխնոլոգիաներ<sup>9</sup>: Բազմաթիվ ընտրախախտումներ են թույլ տրվել ընտրական գործընթացի բոլոր փուլերում, մասնավորապես՝ կեղծված ընտրացուցակներ, լցոնումներ, կրկնակի քվեարկություններ, ընտրակաշառք<sup>10</sup> և այլն: Սրանք ընտրախախտումներ են, որոնք վկայում են ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքների ոչ պատշաճ պաշտպանվածության և այդ իրավունքների պաշտպանությունն իրականացնող մարմինների քաղաքականացված լինելու մասին: Կարծում ենք, որ դա նույնպես պայմանավորված է ՀՀ-ում ընտրական գործընթացի մասնակիցների իրավագիտակցության ցածր մակարդակով, պետական մտածելակերպի բացակայությամբ և մարդու իրավունքները որպես բարձրագույն արժեք դիտելու բացակայությամբ: Այս ամենը կարելի է համարել կայացող երկրի թերացումներ, որոնք անխուսափելի են, և ձգտել դրանք հաղթահարելու արդյունավետ ուղիներ մշակել:

Վերը նշվածը ցույց է տալիս, որ ընտրական վեճերի առաջացման պատճառների վերացմանը կարող են նպաստել.

1) օրենսդրության նպատակասլաց կատարելագործումը,

2) ընտրությունները կազմակերպողների անհրաժեշտ պատրաստվածության ապահովումը,

3) ընտրական գործընթացի մասնակիցների իրավագիտակցության բարելավումը,

4) ընտրությունների անցկացման և ընտրական վեճերի լուծման արտասահմանյան լավագույն փորձի ուսումնասիրումն ու ներդրումը ՀՀ ընտրական համակարգ:

Այս միջոցների կիրառումը, իհարկե,

բարենպաստ արդյունք կունենա, եթե պետական իշխանության ներկայացուցիչներն իսկապես ձգտեն ազատ և թափանցիկ ընտրությունների անցկացնելու, հետևաբար նաև ընտրական վեճերը ար-

դար քննելու և լուծելու, այլ կերպ ասած՝ քննարկվող ոլորտում խիստ անհրաժեշտ է համարժեք քաղաքական կամքի դրսևորում:

- 
- <sup>1</sup> Տե՛ս Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. / С. А. Авакьян, Л. Г. Алехичева, В. В. Альхименко и др; Отв. Ред. А. В. Иванченко-М., 1999.-с. 408:
  - <sup>2</sup> Տե՛ս Resolving election disputes.OSCE. In depth Analysis of channels for election dispute resolution. By Dennis Petit. ODIHR. Warsaw. 2000:
  - <sup>3</sup> Տե՛ս Guide to electoral dispute resolution. The Carter center. 2010.
  - <sup>4</sup> Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք. 26.05.2011թ. (46 հոդվ., 5,6,7 մասեր):
  - <sup>5</sup> Տե՛ս Федеральный закон от 12.06.2002 N 61-ФЗ, «Об основных гарантиях избирательных прав и права на референдум гражданам Российской Федерации»// Собрание законодательства Российской Федерации. 17.06.2002г., N 24:
  - <sup>6</sup> Տե՛ս Толковый словарь. Справочно-

- правовая система «Гарант».
- <sup>7</sup> Տե՛ս Дмитриев Ю. А., Израелян В. Б. Избирательное право и процесс в Российской Федерации. Ростов-на-Дону, 2004. с. 785:
- <sup>8</sup> Տե՛ս Т.Ф. Ефремова. Новый словарь русского языка. Толково - словообразовательный (онлайн версия).
- <sup>9</sup> Տե՛ս Мостовщиков В. Д. Территориальные избирательные комиссии: система, государственно-правовой статус, порядок формирования и компетенция/ Учебно-методическое пособие.-Екатеринбург, 2002:
- <sup>10</sup> Տե՛ս Guide to electoral dispute resolution. The Carter center. 2010, page 51-55. Ամերիկյան այս կենտրոնն աշխարհի մասշտաբով անցկացրած մոնիթորինգի ամփոփման արդյունքում Հայաստանը դասել է այն երկրների շարքը, որտեղ մեծ ներուժ է պետք ներդնել «ձայնի վաճառք» երևույթը վերացնելու համար,

---

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ****ELECTORAL DISPUTES AND THEIR CAUSES**

Anahit ESAYAN

*Post Graduate Student*

*Yerevan State University*

*Department of Constitutional Law*

---

In this article the author has analyzed the features of the electoral disputes as an interdisciplinary institute within the context of the relevant legal acts, has been revealed the content of this concept, as well as existing omissions in the electoral legislation and the possible violations of the law enforcement process. There has also been discussed the causes of electoral disputes, its contributing circumstances and suggested some organizational and legal ways to overcome them.

---

**Հարգելի՛ հեղինակներ,  
Հանդեսին նյութեր հանձնելիս խնդրում ենք  
պահպանել հետևյալ պահանջները.**

Խմբագրական խորհուրդը և խմբագրությունը կքննարկեն միայն այն նյութերը, որոնք կուղարկվեն էլեկտրոնային փոստով կամ խմբագրություն կներկայացվեն թղթային տարբերակով՝ էլեկտրոնայինի հետ միասին:

Հոդվածները, որպես կանոն առավելագույնը պետք է ունենա 25.000 տպագիր նիշ՝ ներառյալ տողատակերը:

Նյութերն ընդունվում են համապատասխան բուհերի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության, ինչպես նաև մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Նյութին կից անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի անգլերեն վերնագիրը, համառոտագիրը, հեղինակի տվյալները:

Նյութերի ծավալը որոշելիս խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները՝ տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա, 1.5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները՝ ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ:

Տառատեսակը՝ հայերեն տեքստերինը՝ «Arial Armenian», ռուսերենինը՝ «Arial LatRus»:

Նորմատիվ ակտեր օգտագործելիս տեքստում պետք է նշել դրա տեսակը (Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության

Նախագահի հրամանագիր և արձրնունման ժամանակահատվածը՝ դունման օրը՝ թվերով, ամիսը՝ ռեբով, ընդունման տարին՝ քառսթվերով, օրինակ՝ 2003 թվակդեկտեմբերի 12), չակերտներում լրիվ (առանց կրճատումների) անունը (օրինակ՝ ոչ թե ՀՀ, այլ Հատանի Հանրապետություն): Այս րքում տողատակում բավարար է հրատարակության աղբյուրը:

Տեքստում կարելի է նշել ակտի սակը, ամսաթիվը և առանց չակների կրճատ անվանումը, որը լծիշտ պատկերացում փաստաբմասին:

Հեղինակներին խստիվ խորհուտրվում մինչև ուղարկելը մանրամստուգել շարվածքի, ինչպես համապատասխան իրավաբանահասկացությունների ճշտությունը:

Նյութի առաջին էջում՝ վերնատեստ, նշվում են տեղեկություն հեղինակի մասին, որոնք կարցովեն մեր պարբերականում՝ հեղկի անուն և ազգանունը ամբողթյամբ, պաշտոնը և աշխատանքի, առկայության դեպքում՝ գիտաստիճանը և կոչումը: Օրինակ՝ քաղաքացիական իրավունքի ամբդոցենտ, իրավաբանական գիթյունների թեկնածու ...:

Վերջին էջում հեղինակը ատադիր դնում է իր ստորագրությունը կոնտակտային տվյալները: